ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

9

ՄԱՍ 1

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նորագույն շրջան

9

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Մաս 1

Խմբագրությամբ՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Վ. Բարխուդարյանի

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ

Երևան
ՄԱՆՄԱՐ
MANMAR
2019

ՀՏԴ 373.167.1: 941(479.25) (075.3)
ԳՄԴ 63.3 (2Հ) g72
Հ 282

Հ 282 Հայոց պատմություն (Նորագույն շրջան): Մաս 1: Դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար / Վ. Բարխուդարյան, Ա. Հակոբյան, Հ. Հարությունյան և ուրիշ./ -Եր., «ՄԱՆՄԱՐ», 2019. -104 էջ:

Դասագրքի հեղինակներ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Վ. Բարխուդարյան**

Պատմական գիտ. դոկտոր **Ա. Հակոբյան**

Պատմական գիտ. դոկտոր **Հ. Հարությունյան**

Պատմական գիտ. դոկտոր **Վ. Ղազախեցյան**

Պատմական գիտ. դոկտոր **Է. Մինասյան**

Պատմական գիտ. դոկտոր **Է. Մելքոնյան**

Դասագրքի մեթոդական մասի հեղինակ՝ **Ա. Ղուկասյան**

ISBN 978-9939-62-112-8

ՀՏԴ 373.167.1: 941(479.25) (075.3)
ԳՄԴ 63.3 (2Հ) g72

© Բարխուդարյան Վ., Հակոբյան Ա., Հարությունյան Հ., Ղազախեցյան Վ., Մինասյան Է., Մելքոնյան Է., 2014
© «ՄԱՆՄԱՐ», 2014
© ԴՏՀՏՇՀ, 2014

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային հասարակության զարգացման վերընթաց ուղու օրինաչափությունները հավաստում են, որ քաղաքակրթության ավելի բարձր աստիճաններում պատմության ընթացքը արագանում է: Անհամեմատ կարճ ժամանակում իրականանում են ավելի վիթխարի և հեղաշրջիչ իրադարձություններ: Այդպես եղավ նորագույն շրջանում 20-րդ դարում, երբ հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում կատարվեցին արմատական փոփոխություններ: Մեզանում այն սկսվեց Առաջին հանրապետության սկզբնավորումով և շարունակվում է Երրորդ հանրապետության ասպարեզ գալով:

1918թ. մայիսյան հերոսամարտերով կյանքի կոչված Հայաստանի առաջին հանրապետությունը կարճատև կյանք ունեցավ, գոյատևեց ընդամենը երկուսուկես տարի: Հանրապետությունը ծանր ժառանգություն ստացավ: Առաջին աշխարհամարտի տարիներին կազմալուծվել, քայքայվել էր տնտեսությունը, երկիրը լցվել էր ցեղասպանությունից մազապուրծ հազարավոր գաղթականներով, շարունակվում էին ճնշումները Ռուսաստանի և Թուրքիայի կողմից: Անկախություն ձեռք բերած հանրապետությունը փորձեց պետականավարական նոր համակարգ ստեղծել, վերականգնել երկրի տնտեսությունը, մշակույթը, կարգավորել միջազգային հարաբերությունները և այլն, սակայն չհաջողեց մեծ բարեփոխումներ կատարել: Արտաքին ուժերի միջամտությամբ 1920թ. վերջին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր:

Հայաստանի առաջին հանրապետությանը հաջորդած Երկրորդ հանրապետությունը՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (ՀԽՍՀ), 70 տարվա կյանք ունեցավ: Կոմունիստական կուսակցության մենատիրական քաղաքականության հետևանքով իսաթարվում էին ժողովրդավարությունը, մարդու ազատությունը: Վարչահրամայական համակարգի պայմաններում, հատկապես 1930-ական թվականներին, քաղաքական բռնություններ իրականացվեցին, որոնց զոհ դարձան հազարավոր անմեղ քաղաքացիներ: Մենք կորցրեցինք ազգային մտավորականության նկատելի մասին, նշանավոր գրողների, արվեստի, գիտության գործիչների, պետական-քաղաքական ճանաչված դեմքերի:

Այդ ամենով հանդերձ՝ խորհրդային իշխանության ժամանակ, բազմազգ Միության համակարգում, խաղաղ շինարարական աշխատանքի, ժողովուրդների բարեկամական համագործակցության շնորհիվ հայ ժողովուրդը վիթխարի նվաճումների հասավ: Պետությունը առանձնահատուկ կարևորություն էր տալիս կրթության, գիտության,

արվեստի, առողջապահության զարգացմանը: Երկիրը պարարվեց դպրոցների և ուսումնարանների լայն ցանցով, վերացվեց զանգվածային անգրագիտությունը: Բացվեցին բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատություններ, արվեստի, գիտության կենտրոններ: Հիմնվեցին մեծաթիվ գործարաններ և արդյունաբերական այլ ձեռնարկություններ, մեքենայացվեցին գյուղատնտեսական աշխատանքները, կառուցապատվեցին գյուղերն ու քաղաքները: Հայաստանը հետամնաց ագրարային երկրից վերափոխվեց, դարձավ զարգացած գյուղատնտեսության, արդյունաբերության, առաջավոր գիտության ու մշակույթի երկիր:

1991թ. փլուզվեց Խորհրդային Միությունը, Հայաստանը ձեռք բերեց անկախություն: Հին հասարակարգի ու նրա կառույցների կազմալուծման, դաժան շրջափակման, կործանարար երկրաշարժի ծանր պայմաններում սկսվեց Ղարաբաղյան ազատագրական պայքարը: Հայ ժողովուրդը, սեփական ուժերին ապավինած, միասնական ու միակամ դարձած, աննկարագրելի ծանր պայքարից դուրս եկավ հաղթանակով: Դժվարին պայմաններում դրվում են Հայաստանի երրորդ հանրապետության հիմքերը: Այդուհանդերձ՝ հանրապետությունը հաստատուն քայլերով ու լավատեսորեն ոտք է դրել երրորդ հազարամյակ: Արձանագրվում են դրական փոփոխություններ:

Պատանի բարեկամներ, նորանկախ հանրապետության կառուցումը բնականորեն վերապահվում է գերազանցապես ձեր սերնդին: Դուք պարտավոր եք հիմնավոր գիտելիքներ ձեռք բերել, խորապես տիրապետել հայրենի երկրի պատմությանը, դասեր քաղել նրա անցած ուղուց, որպեսզի, դիմակայելով կյանքի մարտահրավերներին, կարողանաք դառնալ հայրենիքի լիիրավ քաղաքացիներ, Հայաստանի Հանրապետության արժանավոր կառուցողներ:

Դա ձեր սերնդի պատմական առաքելությունն է:

Վ. Բարխուդարյան

ԲԱԺԻՆ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1918Թ. ՄԱՅԻՍԻ 28 – 1920Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2)

ԹԵՄԱ 1 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության հռչակումը: Բաթումի պայմանագիրը

Հայաստանի Հանրապետության հռչակումը: Այն օրերին, երբ հայ ժողովուրդը թուրքական զավթիչների դեմ կյանքի ու մահվան կռիվներ էր մղում 1918թ. մայիսյան հերոսամարտերում, սուր հակասություններ էին առաջացել երկրամասի երեք հիմնական ազգություններից կազմված Անդրկովկասյան Դաշնային Հանրապետության իշխանության մարմիններում: Այդ իսկ պատճառով Անդրկովկասյան Դաշնության փլուզումը դարձավ անխուսափելի:

1918թ. մայիսի 26-ին լուծարվեց Անդրկովկասյան սեյմը (պառլամենտը), և դրանով կազմալուծվեց Անդրկովկասյան Հանրապետությունը: Այդ նույն օրը Վրաստանը հռչակեց իր անկախությունը, հաջորդ օրը կովկասյան թաթարները հռչակեցին Արևելակովկասյան անկախ հանրապետությունը, որը թուրքերը կոչեցին Ադրբեջան, իսկ մայիսի 28-ին Թիֆլիսում գործող Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը բուռն քննարկումներից հետո որոշում կայացրեց հայտարարություն անելու Հայաստանի անկախության մասին: Հայտարարության տեքստը ընդունվեց մայիսի 30-ին: Նրանում մասնավորապես ասվում էր. «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծարումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր կացության հանդեպ՝ Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն»: Սակայն Հայաստանի անկախության օր համարվեց Մայիսի 28-ը, քանզի հենց այդ օրը հանձնարարվեց հայկական պատվիրակությանը մեկնել Բաթում՝ անկախ Հայաստանի անունից թուրքերի հետ կնքելու հաշտության պայմանագիր:

Բաշ-Ապարանի հերոսամարտի հուշակոթողը

Այսպիսով՝ եղեռն ապրած հայ ժողովուրդը, թշնամու մահաբեր սպառնալիքի պայմաններում, ուժ գտավ իր մեջ և վերականգնեց հայոց անկախ պետականությունը: Հայաստանի անկախության համար հայ ժողովուրդը պարտական էր ազատագրական իր տևական պայքարին, հատկապես 1918թ. մայիսյան հերոսամարտերում տարած հաղթանակներին: Ի նշանավորումն այդ իրադարձության՝ Մայիսի 28-ը համարվում է համայն հայության նվիրական տոներից մեկը՝ Առաջին հանրապետության անկախության օրը:

Բաթումի պայմանագիրը: 1918թ. ապրիլին Տրապիզոնում ընդհատված թուրք-անդրկովկասյան բանակցությունները մայիսի սկզբներին վերսկսվեցին Բաթումում: Թուրքերը, արբեցած իրենց ռազմական հաջողություններով, մայիսի 26-ին վերջնագիր ներկայացրին անդրկովկասյան պատվիրակությանը: Բայց քանի որ հենց նույն օրը Անդրկովկասյան Հանրապետությունը կազմալուծվեց, նորահռչակ հանրապետություններից յուրաքանչյուրն ինքը պետք է լուծեր Թուրքիայի հետ պատերազմի և խաղաղության հարցը:

Մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը որոշեց նոր պատվիրակություն ուղարկել Բաթում և հաշտություն կնքել թուրքերի հետ: Նորանկախ Հայաստանի պատվիրակությունը գլխավորեց Ալ. Խատիսյանը:

Ալեքսանդր Խատիսյան (1874–1945)

Մայիսի վերջին սկսվեցին հայ-թուրքական բանակցությունները: Հունիսի 4-ին կնքվեց Բաթումի հաշտության պայմանագիրը Հայաստանի Հանրապետության և Օսմանյան Թուրքիայի միջև: Պայմանները չափազանց ծանր էին Հայաստանի համար:

Կնքված պայմանագրով հայ-թուրքական սահմանագիծը այնպես էր տարվում, որ երկիրը մասնատվում էր, և շատ փոքր տարածք էր թողնվում Հայաստանին:

Պայմանագրի համաձայն՝ Հայաստանը ունենալու էր սահմանափակ թվով զորք: Երկաթուղիների վերահսկողությունն անցնելու էր Թուրքիային, որպեսզի կարողանա Հայաստանի տարածքով զորք տեղափոխել Ադրբեջան: Դրա նպատակն էր՝ խորտակել Ստ. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունան և տիրանալ Բաքվի նավթին: Դրանից զատ՝ Հայաստանը պարտավորվում էր կազմալուծել հայկական ազգային անկանոն զորախմբերը:

Այսպիսով՝ Բաթումի պայմանագրով Թուրքիային էր անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի զգալի մասը: Հայաստանի Հանրապետության տարածքը փաստորեն ընդգրկում էր միայն Սևանա

լճի ավազանը և Արարատյան դաշտի մի մասը: Այս կապակցությամբ տեղին է հիշել գերմանացի մի դիվանագետի արտահայտած հետևյալ պատկերավոր խոսքը. «Թուրքերը հայերին տեղ տվեցին՝ Սևանում լողանալու համար, բայց դուրս գալու՝ չորանալու համար տեղ չտվեցին»: Ընդհանուր հաշվով՝ Թուրքիան Արևելյան Հայաստանից խլում էր 28 հազ. քառ. կմ տարածք:

Բայց, մյուս կողմից, ճակատագրի հեգնանքով, սա անկախ Հայաստանի առաջին միջազգային փաստաթուղթն էր, որով Թուրքիան առաջինը ճանաչեց Հայաստանի անկախությունը: Ալ. Խատիսյանը, ամփոփելով հայ-թուրքական բանակցությունների արդյունքները, իր ուղարկած նամակում գրում էր. «Մենք կբերենք վատ հաշտության պայմանագիր, բայց կբերենք նաև անկախ Հայաստան, տուն, բույն, որտեղ կռվում է ժողովրդական միտքը: Այս բոլորը կկապի, կմիավորի, կբարձրացնի ոգին, իսկ դա կարևոր է: Ես հավատում եմ մեր պետությանը»: Բաթումի պայմանագիրը, որը չի վավերացվել ոչ Հայաստանի և ոչ էլ Թուրքիայի կառավարությունների կողմից, իր ուժը պահպանեց մինչև համաշխարհային պատերազմի ավարտը՝ 1918թ. նոյեմբերը:

Այսպիսով՝ չափազանց ծանր պայմաններում հռչակվեց Հայաստանի պետական անկախությունը: Նորահռչակ Հայաստանի Հանրապետությունը հարկադրված էր կնքել Բաթումի կողոպտիչ պայմանագիրը: Բայց դրա շնորհիվ ձեռք բերվեց դադար, որը հնարավորություն տվեց սկսելու պետական շինարարության գործընթացը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Անդրկովկասյան Դաշնային Հանրապետության կազմալուծման պատճառները: Ե՞րբ լուծարվեց Անդրկովկասյան սեյմը: Ձեր կարծիքով՝ ի՞նչ պայմաններում հռչակվեց Հայաստանի անկախությունը:
2. Ե՞րբ կնքվեց Բաթումի պայմանագիրը: Ի՞նչը ստիպեց Թուրքիային՝ ճանաչել Հայաստանի անկախությունը: Մինչև ե՞րբ է պահպանել իր ուժը Բաթումի պայմանագիրը: Փորձե՛ք գնահատել Բաթումի հաշտության պայմանագիրը: Ի՞նչ եք կարծում՝ արդյոք Բաթումի պայմանագիրն այլընտրանք չունե՞ր:

2. Իշխանության մարմինների ձևավորումը

Իշխանության մարմինների և ազգային բանակի ստեղծումը: Պետական շինարարության կարևորագույն օղակներից է իշխանության երեք թևերի՝ գործադիր, օրենսդիր և դատական մարմինների ձևավորումը: Հայաստանի անկախության հռչակումից և Բաթումի հաշտության պայմանագրի կնքումից հետո Թիֆլիսում կազմվեց անդրանիկ կառավարությունը: Նա 1918թ. հուլիսի երկրորդ կեսին, Հայոց ազգային խորհրդի անդամների հետ, փոխադրվեց

մայրաքաղաք Երևան և անմիջապես անցավ գործի: Կառավարության նախագահ (վարչապետ) ընտրվեց Հովհաննես Քաջազնունին:



Հովհաննես Քաջազնունի (1868–1938)

Մինչ նորակազմ կառավարությունը Թիֆլիսից կժամաներ Երևան, տեղում պետական կառույցներ ստեղծելու և կարգուկանոն հաստատելու ուղղությամբ հսկայական կազմակերպչական աշխատանք էր կատարվել: Այն իրականացրել էր Երևանի ազգային խորհրդի փաստացի ղեկավար, հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ Արամ Մանուկյանը (Սարգիս Հովհաննիսյան): Նրան իրավամբ կարելի է համարել Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր:

Կառավարության ստեղծումից հետո խնդիր դրվեց ձևավորելու բարձրագույն օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը:

Ժամանակի ու ֆինանսական միջոցների սղության, ինչպես նաև պետության համար շտապ օրենքներ ունենալու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ որոշվեց Հայոց ազգային խորհրդի թվակազմը (15 հոգի) կուսակցական համամասնությամբ եռապատկելու, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավելու միջոցով ձևավորել առաջին խորհրդարանը՝ Հայաստանի խորհուրդը՝ կազմված 46 հոգուց: Առաջին խորհրդարանի նախագահ ընտրվեց մասնագիտությամբ գյուղատնտես, տարիքով ամենաավագ Ավետիք Սահակյանը: Հայոց բազմադարյան պատմության մեջ առաջին անգամ՝ 1918թ. օգոստոսի 1-ին հանդիսավոր կերպով բացվեց Հայաստանի անդրանիկ խորհրդարանի նիստը:

1919թ. հունիսին, երբ հանրապետության դրությունը քիչ թե շատ կայունացավ, հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ դարձյալ առաջին անգամ անցկացվեցին համաժողովրդական խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքում ձևավորվեց 80 պատգամավորներից բաղկացած ընտրովի խորհրդարան (պառլամենտ):

2-րդ խորհրդարանում ճնշող մեծամասնություն է կազմել Դաշնակցություն կուսակցությունը՝ 72 պատգամավոր, այնուհետև՝ 4 էսէռ, 2 թուրք, 1 քուրդ (եզդի) և 1 անկուսակցական:

Ուշագրավ է, որ խորհրդարանն ունեցել է 3 կին պատգամավոր, այդ թվում՝ ականավոր պետական գործիչ Արամ Մանուկյանի այրին՝ բժշկուհի Կատարինե (Զալյան) Մանուկյանը:

Երկրորդ խորհրդարանի նախագահ ընտրվեց գրող, հրապարակախոս Ավետիս Ահարոնյանը:



Արամ Մանուկյան
(1879–1919)



Ավետիք Սահակյան
(1864–1933)

Ավետիս Ահարոնյան
(1866–1948)

Պետական կառավարման տեսակետից ՀՀ-ն համարվում էր խորհրդարանական դեմոկրատական (ռամկավար) հանրապետություն, որտեղ բարձրագույն օրենսդիր իշխանությունը խորհրդարանն էր, իսկ բարձրագույն գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, որի նախագահը (վարչապետը) համարվում էր հանրապետության առաջին պաշտոնատար անձը: Վերջինս ընտրվում էր խորհրդարանի կողմից, և նրա գլխավորած կառավարությունը պատասխանատու էր խորհրդարանի առաջ:

Պետական իշխանության կայացման գործում կարևոր էր նաև դատական իշխանության ձևավորումը: Բարձրագույն դատական մարմինը սենատն էր: Հանրապետության դատական համակարգի ժողովրդավարացման դրսևորում էր 1919թ. երդվյալ ատենակալների դատարանի հիմնումը:

Հայաստանի Հանրապետության առաջին խորհրդարանի շենքը Երևանում

Իշխանության համակարգում իրենց ուրույն տեղն ունեին տեղական իշխանության՝ գավառային, քաղաքային և համայնքային մարմինները: Աշխարհամարտի ավարտից հետո, երբ ՀՀ տարածքը սկսեց ընդարձակվել, գավառների թիվն անցավ մեկ տասնյակից: Հանրապետական նշանակության քաղաքների թիվը նույնպես անցնում էր մեկ տասնյակից: Ավելի ուշ՝ 1920թ. մայիսին, հանրապետության տարածքը վարչական տեսակետից բաժանվեց չորս նահանգների՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունիքի: Այդ ժամանակ ՀՀ տարածքը հասավ շուրջ 70 հազ. քառ. կմ-ի՝ 2 մլն բնակչությամբ: Կառավարության նախաձեռնությամբ մշակվեց և գործողության մեջ դրվեց զեմստվային (տեղական ինքնակառավարման) մարմինների մասին օրենքը: Իշխանության տեղական մարմինները ընտրովի էին: Վերակազմվեցին քաղաքային ինքնավարությունները:

Հայոց անկախ պետականության կայացման ամենազորեղ կռվաններից մեկը սեփական ազգային բանակի ստեղծումն էր: Պատմության փորձը սովորեցնում է, որ այն ազգն է անվտանգ, իսկ պետությունը՝ կենսունակ, որոնք ունեն կարգապահ ու մարտունակ բանակ: Խնդիրը առավել կարևորվում է Հայաստանի՝ աշխարհաքաղաքական բարդ տարածաշրջանում գտնվող երկրի համար:



Մովսես Սիլիկյան
(1862–1937)

Բաթումի պայմանագրից հետո, Թուրքիայի պահանջով, Հայաստանը կարող էր ունենալ ընդամենը մեկ դիվիզիա: Այդ իսկ պատճառով 1918թ. ամռանը հայկական կորպուսը վերակազմավորվեց մեկ հետևակային դիվիզիայի, որի հրամանատար նշանակվեց գեներալ Մովսես Սիլիկյանը: Դիվիզիայի զորայինների ընդհանուր թիվը հասնում էր 16 հազարի: Հանրապետության բանակի գլխավոր հրամանատարը (սպարապետ) գեներալ Թովմաս Նազարբեկյանն էր:

Թովմաս Նազարբեկյան
(1855–1931)

Կազմալուծվեցին ՀՀ տարածքում գտնվող կամավոր հայդուկային խմբերը, մասնավորապես՝ փառաբանված հայդուկապետ Անդրանիկի գլխավորած հավաքական զորաջոկատը: Գեներալ Անդրանիկը որոշակի տարաձայնություններ ուներ կառավարության հետ, ուստի 1919թ. գարնանը նա իր սուրը և մյուս զենքերը հանձնեց կաթողիկոսին ու մեկընդմիշտ հեռացավ Հայաստանից:

Հայկական բանակի վերակառուցման ընթացքում հայդուկային մի շարք այլ խմբերի միավորումից կազմվեց և կանոնավոր բանակի մեջ ընդգրկվեց մեկ առանձին (4-րդ) բրիգադ, որի հրամանատար նշանակվեց հայդուկապետ Սեպուհը (Արշակ Ներսիսյան): Այդ զորախումբը ակտիվ մասնակցություն ունեցավ հանրապետության արտաքին և ներքին թշնամիների դեմ պայքարում, հատկապես 1920թ. բոլշևիկների մայիսյան ապստամբության ճնշման գործում:

Գեներալ Անդրանիկ
(1865–1927)

1919թ. հունվարից, երբ թուրքական զորքն արդեն հեռացել էր Անդրկովկասից և արտաքին վտանգը փոքր-ինչ մեղմացել էր, կատարվեց բանակի մասնակի զորացրում: Դրա փոխարեն հայտարարվեց 20-25 տարեկան զինապարտ քաղաքացիների զորակոչ: ՀՀ

զինված ուժերը աստիճանաբար համալրվում էին թե՛ զորքով և թե՛ զինտեխնիկայով ու նյութատեխնիկական միջոցներով: Արդեն 1920թ. հունվարին հանրապետության զորքի թիվը հասնում էր 25 հազարի, իսկ աշնանը, թուրք-հայկական պատերազմի շրջանում, շուրջ 40 հազարի, այդ թվում՝ 33 գեներալ և 2000-ից ավելի սպա:

Սեպուհ
(1872–1940)

Բանակի կարևոր խնդիրներից էին նաև կարգապահության ամրապնդումը, մարտական ոգու բարձրացումը, մայրենի լեզվի արմատավորումը և այլն: Այդ ուղղությամբ ևս զգալի աշխատանքներ կատարվեցին: Սակայն ժամանակի պակասը և մի շարք աննպաստ հանգամանքներ հնարավորություն չտվեցին ավարտին հասցնելու հայկական ազգային բանակի կայացումը:

Դիվանագիտական կապերի հաստատումը: Յուրաքանչյուր նորանկախ պետության առաջնահերթ խնդիրներից է՝ հասնել այլ պետությունների հետ դիվանագիտական կապերի հաստատման և միջազգային ճանաչման: ՀՀ առաջին ճանաչողը եղավ Թուրքիան, սակայն կողմերի միջև անմիջական հարաբերություններ չհաստատվեցին: Հայաստանը դիվանագիտական կապեր հաստատեց ու ներկայացուցչություններ հիմնեց ինչպես իր անմիջական հարևանների՝ Վրաստանի, Պարսկաստանի ու Ադրբեջանի, այնպես էլ Քառյակ դաշինքի և Անտանտի մի շարք երկրների հետ: Ընդհանուր հաշվով՝ մեկ-երկու տարվա ընթացքում Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց աշխարհի շուրջ 40 պետությունների հետ: Դիվանագիտական ներկայացուցչություններ բացվեցին Թիֆլիսում, Թեհրանում, Փարիզում, Հռոմում, Վաշինգտոնում, Տոկիոյում, Կիևում, Կրասնոդարում և այլուր: Տարբեր երկրներում դիվանագիտական աշխատանք էին վարում Արմեն Գարոն, Տիգրան Բեկզադյանը, Գրիգոր Զամոյանը, Լևոն Եվանգուլյանը, Հովսեփ Արղությանը, անգամ կին՝ Դիանա (Անահիտ) Աբգարը, և շատ ուրիշներ:

1920թ. հունվարին Անտանտի պետությունների Գերագույն խորհուրդը փաստորեն (de facto) ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, նույն թվականի ապրիլին՝ ԱՄՆ-ը, և այլն: Հայաստանը պատրաստվում էր անդամակցելու այն ժամանակվա միջազգային ամենահեղինակավոր կազմակերպությանը՝ Ազգերի լիգային (ներկայիս ՄԱԿ-ի նախորդն ու նմանակը): Սակայն 1920թ. վերջին Հայաստանի անկախության վերացման ու խորհրդայնացման հետևանքով այդ հարցը փակվեց:

Դիվանագիտական կապեր հաստատելով՝ Հայաստանի կառավարությունը նպատակ էր հետապնդում հասնելու Հայաստանի միջազգային ճանաչմանը, դրանով նպաստ բերելու Հայկական հարցի, այսինքն՝ Արևմտյան

Հայաստանի հիմնահարցի լուծմանը, օտար պետությունների հետ իրականացնելու առևտրատնտեսական հարաբերություններ, ստանալու հումանիտար օգնություն:

Հանրապետության դրոշը



Հանրապետության զինանշանը

Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները: Անկախ պետականությունը անհնար է պատկերացնել առանց ազգային-պետական խորհրդանիշների: Պետական դրոշ ընդունվեց եռագույնը՝ հորիզոնական շերտով կարմիր, կապույտ և ծիրանի գույներով: Կարմիրը խորհրդանշում էր ազատագրական պայքարում հայ ժողովրդի թափած արյունը, կապույտը՝ Հայաստանի ջինջ երկինքը, իսկ ծիրանագույնը՝ աշխատանքը:

Պետական օրհներգ (հիմն) ճանաչվեց ազատության մեծ երգիչ Մ. Նալբանդյանի խոսքերի հիման վրա գրված «Մեր հայրենիք» հայրենասիրական երգը: Հաստատվեց նաև զինանշանը (գերբը), որի հեղինակներն էին մեծանուն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը: Զինանշանի վրա պատկերված առյուծը և արծիվը մարմնավորում էին երկու՝ Արևելյան և Արևմտյան Հայաստանների գաղափարը: Դա նշանակում էր, որ հայ ժողովուրդը երազանք ուներ հասնելու երկու Հայաստանների միացմանը: Հատկանշական է, որ մերօրյա Հայաստանի Հանրապետությունը ժառանգել և ընդունել է այն ժամանակվա բոլոր երեք խորհրդանիշները՝ դրոշը, օրհներգը և զինանշանը:

Հատուկ օրենքով սահմանվեցին ՀՀ պետական, ազգային և կրոնական տոները՝ Նոր տարվա, Ծննդյան, Վարդանանց, Տյառնընդառաջի, Զատկի, Մայիսի 1-ի և այլն: Կարգավորվեցին պետության և եկեղեցու փոխհարաբերությունները: Հռչակվեցին բոլոր կրոնների (խղճի) ազատություն և հավասարություն:

Հայոց պետականության անվիճելի արժեքներից դարձան 1919թ. դեկտեմբերի 26-ին հատուկ օրենքով հայերենը (առանց արևելահայերեն/արևմտահայերեն որևէ տարանջատման) պետական-պաշտոնական լեզու ճանաչելը և գործողության մեջ դնելը: Ցարական ժամանակների նախկին պետական դպրոցները ազգայնացվեցին ու հայաշունչ դարձան:

Սահմանվեցին պետական շքանշաններ: Հայոց անկախ պետականության կայացման գործում կարևոր երևույթ էր ազգային դրամի (արժույթի) ստեղ-

ծումը, որը տպվեց Լոնդոնում և փոխադրվեց Հայաստան: Շրջանառության մեջ դրվեցին հայկական չեկերը (կուպյուրներ), հիմնվեց հանրապետության պետական բանկը:

Հայկական անկախ պետականության վերականգնման պատմական նշանակությունը: Այսպիսով, դարերի ընդմիջումից հետո, հայ ժողովրդի հերոսական մաքառումների արդյունքում, 1918թ. մայիսի 28-ին ծնվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Դա օրինաչափ պատմական անհրաժեշտություն էր:

Հայաստանի անկախության հռչակումը նոր դարաշրջան բացեց հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ: Դրանով փաստորեն սկսվեց հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանը:

Անկախ պետականության վերականգնումը պայմաններ ստեղծեց ազգային վերածնության ու զարգացման համար:

Կարճ ժամանակամիջոցում Հայաստանը դարձավ կազմակերպված պետություն գրեթե բոլոր բնորոշ հատկանիշներով՝ իշխանության մարմիններով, տնտեսական-քաղաքական համակարգով, ազգային բանակով, դիվանագիտական կապերով, պետականության խորհրդանիշներով և այլն:

Հայաստանը, պետական կառուցվածքի ու կառավարման տեսակետից, դեմոկրատական (ժողովրդավարական) հանրապետություն էր՝ խորհրդարանի գերակայությամբ: Ծրագրվում էր Հայկական հարցի լուծումից հետո ընդունել սահմանադրություն:

Հայաստանի Հանրապետությունը դարձավ աշխարհացրիվ հայության հայրենիքը, նրա հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքի միավորման կենտրոնը:

Ականատես, բժիշկ Հ. Մելիքյանի հուշերը 1918թ. օգոստոսի 1-ին խորհրդարանի բացման մասին

Ամբողջ հրապարակը բռնել էր բազմահազար ամբոխ, որ սրտատրոփ սպասում էր կորցրած փառքի վերականգնման և դարերից ի վեր երազած անկախության իրագործման ակտին: Հրապարակի մեջ տեղ էին բռնել բանակի զանազան զորամասերից մեկ-մեկ ջոկատ:

Պառլամենտի շենքը գտնվում էր քաղաքային այգու դիմաց: Այդ շենքը պատկանում էր Երևանի թեմական դպրոցին, որը վարձու էր տված քաղաքի ակումբին:

Խորհրդարանի (աշխատանքների) բացման ժամանակ նորընտիր նախագահ Ավ. Սահակյանը, ձեռքը բարձրացնելով, դողդոջուն ձայնով ասաց. «Հայ ժողովուրդը դեռ ապրում է և կապրի: Նա իր այս ավերված երկրում կստեղծի դարերից ի վեր երազած անկախ պետությունը: Կարծում եմ, որ երկրի սահմանները կընդարձակվեն կյանքի երկաթե օրենքի ուժով»: Հենց այդ ժամանակ դրսում, խանդավառ ցույցերի տակ, շենքի գլխին բարձրացավ

մեր եռագույն դրոշակը: Պառլամենտի նիստից հետո, դուրսը, հրապարակում կատարվեց Հայաստանի Հանրապետության առաջին զորահանդեսը: Հայ ազգային զորքը, շարե ի շար, անցնում էր մեր առաջից: Ոչ միայն իմ, այլև հազարավորների աչքերից հուզման արցունքի կաթիլներ էին հոսում:

Տեղեկություններ Անդրանիկի, Նժդեհի և Դրոյի կտակների մասին

Ազգային հերոս, զորավար Անդրանիկի վերջին կտակը կատարելու նպատակով 1928թ. հունվարին նրա աճյունը փոխադրվեց Փարիզ՝ Հայաստան տեղափոխելու և վերաթաղելու մտադրությամբ, սակայն խորհրդային իշխանությունները արգելեցին: Անդրանիկի աճյունը հարկադրված վերաթաղվեց Փարիզի հանրահայտ Պեր Լաշեզ գերեզմանատանը:

Միայն Հայաստանի անկախությունից հետո, ի վերջո, կատարվում է ազգային հերոս Անդրանիկի կտակը: 2000թ. նրա աճյունը տեղափոխվեց հայրենիք և հանդիսավորությամբ վերաթաղվեց Երևանի Եռաբլուր զինվորական պանթեոնում, ուր հանգչում են Հայաստանի ու Արցախյան հերոսամարտի նահատակ հերոսները:

***

Հայտնի է, որ խորհրդային բանտերում տևական բանտարկությունից և մահվանից (1955թ.) առաջ մեծն Գ. Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյան) կտակել էր թաղվել Հայաստանում: Նրա մահից հետո՝ տասնամյակներ անց, դեռևս խորհրդային իշխանության շրջանում, մի քանի հայ հայրենասերների ջանքերով, մեծ զորավարի ու մտածողի աճյունի մասունքները հանվեցին բանտավայրի գերեզմանից և գաղտնի բերվեցին Հայաստան: Գ. Նժդեհի աճյունի մասունքներից մի նշխար ամփոփվեց իր համար շատ հարազատ Կապանի Խուստուփ լեռան լանջին, իսկ մյուսները հողին հանձնվեցին Եղեգնաձորի շրջանի Սպիտակավորի վանքի բակում: Եվ այդպես, համաձայն իր կտակի, մեծ հայրենասեր զորավար և գաղափարախոս Նժդեհն իր անդրերկրային հանգիստը գտավ հայրենի հողում:

***

Նույն ոգեկոչմամբ, ի կատարումն հայոց մյուս տաղանդավոր զորավար, հարկադրաբար օտար ափերում հայտնված Դրոյի (Դրաստամատ Կանայան) կտակի, 2000թ. Բոստոնից (ԱՄՆ) հայրենիք տեղափոխվեց նրա աճյունը և մայիսի 28-ին՝ անկախության խորհրդանշական օրը, վերաթաղվեց Ապարանում՝ իր գլխավորած Բաշ-Ապարանի հաղթական ճակատամարտին նվիրված հուշակոթողի մոտ: Փառք և խոնարհում ռազմական, պետական և քաղաքական տաղանդաշատ գործչի հիշատակին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Իշխանության ինչ մարմիններ ստեղծվեցին:
2. Ինչպե՞ս կազմավորվեց հայկական բանակը: Ի՞նչ կարող եք ասել նրա մարտունակության մասին: Ովքե՞ր էին հայոց բանակի առաջին ղեկավար գործիչները:

3. Ինչ քայլեր ձեռնարկեցին Հայաստանի իշխանությունները նորանկախ հանրապետության միջազգային ճանաչման ուղղությամբ:
4. Որո՞նք են Հայաստանի Հանրապետության ազգային-պետական խորհրդանիշները: Բնութագրե՛ք դրանք:
5. Փորձե՛ք ապացուցել, որ հայոց անկախ պետականության վերականգնումն օրինաչափ պատմական անհրաժեշտություն էր:
6. Լրացրե՛ք «Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը» աղյուսակը:

Խորհրդարան	Գումարման տարեթիվը	Անդամների թվակազմը
Հայաստանի խորհուրդ		
Հայաստանի խորհրդարան		

1-ին թեմայի ամփոփում

1. 1918թ. մայիսի 26-ին լուծարվեց Անդրկովկասյան սեյմը, և կազմալուծվեց Անդրկովկասյան Հանրապետությունը: Նույն թվականի մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը, ինչը շրջադարձային եղավ հայ ժողովրդի կյանքում:
2. Անկախության հռչակումից հետո, քանի որ արևելահայությանը սպառնացող թուրքական վտանգը չէր վերացել, անհրաժեշտ համարվեց բանակցություններ վարել Թուրքիայի հետ, կնքել հաշտության պայմանագիր: Հաշտությունը կնքվեց Բաթումում 1918թ. հունիսի 4-ին, սակայն չափազանց ծանր էր Հայաստանի համար:
3. Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո ստեղծվեցին բարձրագույն իշխանության մարմինները (գործադիր, օրենսդիր, դատական): Թիֆլիսում կազմվեց Հայաստանի անդրանիկ կառավարությունը, որից հետո ձևավորվեց բարձրագույն օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը: Պետական իշխանության կայացման գործում կարևոր էր նաև դատական իշխանության ձևավորումը:
4. Նորանկախ պետությունը ստեղծեց սեփական ազգային բանակ, որը աստիճանաբար համալրվեց և 1920թ. թուրք-հայկական պատերազմի շրջանում հասավ շուրջ 40 հազարի:
5. Հայաստանի նորաստեղծ հանրապետության առաջնահերթ խնդիրներից էր միջազգային ճանաչման հասնելը: Հայաստանին հաջողվեց դիվանագիտական կապեր հաստատել ինչպես հարևան պետությունների

(Վրաստան, Պարսկաստան, Ադրբեջան), այնպես էլ Քառյակ միության և Անտանտի մի շարք երկրների հետ:

6. Հայաստանի անկախ պետությունը ստեղծեց պետական խորհրդանիշները՝ պետական դրոշը, օրհներգը (հիմնը), զինանշանը, լուծվեցին պետական և ազգային-կրոնական տոների ու շքանշանների, պետական լեզվի հարցերը:
7. Անկախ պետականության վերականգնումը նոր և հուսալի պայմաններ ստեղծեց ազգային վերածնության ու զարթոնքի համար:

ԹԵՄԱ 2 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1-2. Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը և կրթամշակութային կյանքը

Սոցիալ-տնտեսական դրությունը: Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց սոցիալ-տնտեսական ծանր դրության մեջ: Առաջին աշխարհամարտի և թուրքական արշավանքի հետևանքով ավերված ու քայքայված հանրապետության փոքր տարածքում պատսպարվում էին 300 հազարից ավելի գաղթականներ: Մոլեգնում էին սովն ու համաճարակային հիվանդությունները, գլուխ էին բարձրացրել անիշխանական երևույթները: Ահա այս վիճակը նկատի ուներ առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին, երբ խորհրդարանում երկրի կացությունը բնութագրեց «անձև քաոս և ավերակների կույտ»:

Հայ գաղթականներ

Հայաստանի տնտեսությունը թույլ էր զարգացած: Աշխարհամարտի և թուրքական ներխուժման հետևանքով առանց այն էլ թույլ տնտեսությունը կազմալուծվել էր: Թուրք-թաթարական շրջափակումների հետևանքով կտրվել էին արտաքին կապերը, չկային ապրանքների կանոնավոր արտահանում և ներմուծում: Բնականաբար՝ անխուսափելի էին սովը և դրա ուղեկից համաճարակային հիվանդությունները՝ տիֆը և խոլերան: Ընդամենը մի քանի ամսվա ընթացքում սովը, ցուրտը և համաճարակային հիվանդությունները խլեցին շուրջ 180 հազար մարդու կյանք, որոնց մեծ մասը գաղթականներ էին: Համաճարակից մահացավ նաև հայ մեծագույն գործիչներից մեկը՝ ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանը:

Ժողովրդի ֆիզիկական գոյությունը մի կերպ պահպանելու համար կառավարությունը ձեռնարկեց մի շարք արտակարգ միջոցներ: Կենսականորեն անհրաժեշտ մթերքների՝ հացի, բամբակի, շաքարի, աղի և այլնի վաճառքի նկատմամբ սահմանվեց պետական մենաշնորհ: Մի շարք դեպքերում պարզապես բռնագրավում էին ունևոր մարդկանց ունեցվածքը, որպեսզի բաժանեին սովյալներին ու անտուններին: Դրսից օգնություն ստանալու նպատակով Եվրոպա և ԱՄՆ մեկնեց Հովհ. Քաջազնունին, որին վարչապետի պաշտոնում փոխարինեց Ալեքսանդր Խատիսյանը:

Այդ ծանր վիճակը շարունակվեց մինչև 1919թ. մայիսը, երբ Հայաստան հասցվեց ԱՄՆ-ի օգնությունը՝ շուրջ 21 հազար տոննա ալյուր, 4,1 հազար տոննա ցորեն, ինչպես նաև շաքար, ձեթ, թեյ, կակաո և այլ պարենամթերք: Ամերիկյան ալյուրը մեղմեց սովը, և ժողովրդի վիճակը փոքր-ինչ բարելավվեց:

Գաղթականության վիճակը և ներգաղթի խնդիրը: Հանրապետության ներքին կյանքի բարդ խնդիրներից էր գաղթականության և որբերի հարցը: Արևելյան Հայաստանում էին ապաստանել Մեծ եղեռնից մազապուրծ մոտ 300 հազար արևմտահայեր: Գաղթականության մի հոսք էլ առաջացավ Ադրբեջանի Հանրապետության տարածքից: Ենթարկվելով թուրք-թաթարական բռնությունների ու կոտորածների՝ տասնյակհազարավոր հայեր ներգաղթեցին Հայաստան:

Ալեքսանդրապոլի գաղթականների դպրոցի սաները

Կառավարությունը պետք է դժնդակ պայմաններում հայտնված գաղթականությանը կերակրեր, պատսպարեր, հող և աշխատանք տար: Գաղթական յուրաքանչյուր շնչին օրական տրվում էր 200 գրամ ալյուր, նրա դրամական նպաստը օրական կազմում էր 60 կոպեկ, որը աննշան գումար էր:

Գաղթականության մեջ առավել մեծ հոգածություն էին պահանջում որբ երեխաները: Պաշտոնական տվյալներով՝ Հայաստանում կային 40 հազարից ավելի թափառական որբեր: Նրանց խնամքը իրականացնելու համար հիմնվեցին մի քանի տասնյակ որբանոցներ, որոնցից ամենախոշորը Ալեքսանդրապոլում էր:

Պետությունն իր սուղ միջոցներով ի վիճակի չէր հոգալու որբերի խնամքի ծախսերը: Այդ պատճառով որբերին ու գաղթականությանը օգնության ձեռք էին մեկնում արտասահմանյան բարեգործական կազմակերպությունները: Դրանցից առավել աչքի ընկավ Մերձավոր Արևելքի ամերիկյան օգնության

կոմիտեն (Ամերկոմը): 1919թ. մայիսից Ամերկոմը հիմնականում իր վրա վերցրեց որբ երեխաների խնամակալության գործը: Որբերին արհեստներ սովորեցնելու, իսկ չափահաս գաղթականներին աշխատանքով ապահովելու միջոցառումներ ձեռնարկվեցին:

Առավել ծանր ու անորոշ էր Հայաստանի սահմաններից դուրս, հատկապես Ադրբեջանում, գտնվող հայ փախստականների վիճակը: 1919թ. Ադրբեջանի Նուխիի, Արեշի, Շամախու, Գյոկչայի և այլ գավառներից Հայաստան ներգաղթեց ավելի քան 16 հազար մարդ:

Հայաստանի կառավարությունը որոշ քայլեր ձեռնարկեց դեպի Երկիր՝ Արևմտյան Հայաստան արևմտահայության ներգաղթը կազմակերպելու ուղղությամբ: Նախնական հաշվարկներով՝ միայն Կովկասից Երկիր պետք է ներգաղթեին 300 հազար մարդ: Այդ գաղթի իրագործման համար կպահանջվեր 3 մլրդ ռուբլի: Սակայն 1920թ. աշնանից, երբ Հայկական հարցի հայանպաստ լուծումը փաստորեն ձախողվեց, փակվեց նաև ներգաղթի խնդիրը: Հայրենիքից զրկված հարյուրհազարավոր տարագիր հայեր ստիպված էին համալրել սփյուռքահայերի շարքերը:

Երևանի կոնյակի գործարանը

Տնտեսության վերականգնմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումները: 1919թ. գարնանից, երբ հանրապետության տարածքը զգալիորեն ընդարձակվեց և ժողովրդի վիճակը փոքր-ինչ կայունացավ, կառավարությունը որոշ ջանքեր գործադրեց տնտեսությունը բարեկարգելու ուղղությամբ:

Վերանորոգվեցին ու գործարկվեցին բազմաթիվ ձեռնարկություններ՝ կաշվի, օճառի, կոնյակի, սպիրտի, ծխախոտի, հախճապակու և այլն: Պետականացվեց Երևանի Շուստովի կոնյակի գործարանը: Սարիղամիշում և Դիլիջանում հիմնվեցին սղոցարաններ, վերսկսվեց Կողբի ու Կաղզվանի աղահանքերի և Ալավերդու ու Ջանգեզուրի պղնձահանքերի շահագործումը: Կարգի բերվեցին հաղորդակցության ուղիները, որոշ չափով կանոնավորվեց առևտուրը, ընդլայնվեց փոստ-հեռագրային ծառայությունը, Սևանա լիճ իջեցվեց «Աշոտ Երկաթ» երկկայմ առագաստանավը: Կազմակերպվեց մաքսային գործը, գործում էին մեկ տասնյակից ավելի մաքսակետեր: Առևտրատնտեսական կյանքի աշխուժացման նպատակով հիմնվեց Հայաստանի կոոպերատիվների միությունը (Հայկոոպը): 1920թ. ամռանը ՀՀ-ում գործում էին արդյունաբերական 67 ձեռնարկություններ:

Փորձեր արվեցին հայ և օտարերկրացի կապիտալիստների ներգրավելու Հայաստանի տնտեսության մեջ: Կառավարությունը պաշտպանում էր սեփականության ձևերի բազմազանությունը, տնտեսավարման ազատությունը, պետության կողմից կանոնակարգվող ազատական-շուկայական հարաբերությունները: Շրջանառության մեջ դրված հայկական դրամանիշը տնտեսության թույլ զարգացած լինելու պատճառով արագորեն արժեզրկվեց:

Հարյուրռուբլիանոց թղթադրամ

Հանրապետությունում վերանորոգվեցին ու կառուցվեցին մի շարք ջրանցքներ: Կատարվեցին ճահճուտների չորացման և աղուտների վերացման աշխատանքներ, էլեկտրակայանների կառուցման նախագծեր մշակվեցին: Հայթայթվեցին սերմացու ու գյուղգործիքներ և բաժանվեցին գյուղացիներին:

Ալավերդու պղնձահանքերը

Կառավարությունը և խորհրդարանը ընդունեցին մի շարք օրենքներ կալվածատիրական բոլոր հողերի բռնագրավման և դրանք գյուղացիներին անհատույց հատկացնելու վերաբերյալ: Հողային հարցը լուծելու նպատակով ստեղծվեցին հողային կոմիտեներ ու հողային հատուկ մարմիններ:

Այսպիսով՝ մեկ-երկու տարում տնտեսության բնագավառում նկատելի աշխատանք կատարվեց: Սակայն դրանք միայն առաջին քայլերն էին: Այն նախագծերը, որոնք չհասցրին կենսագործվել, կյանքի կոչվեցին արդեն Խորհրդային Հայաստանում:

Ուսուցչական սեմինարիայի շենքը Երևանի Աստաֆյան փողոցում (այժմ՝ Երևանի պետական համալսարանի մասնաշենքը Աբովյան փողոցում)

Կրթամշակութային կյանքը: Դրական տեղաշարժեր կատարվեցին մշակութային կյանքում: Հայոց անկախ պետականության վերականգնումը հայրենիք վերադառնալու նպաստավոր պայմաններ ստեղծեց հայ մտավորականության համար: Հայաստան եկան ու տեղում գործում էին գիտության ու մշակույթի բազում գործիչներ՝ Ալեքսանդր Թամանյանը, Թորոս Թորամանյանը, Հովհաննես Աբելյանը, Հակոբ Մանանդյանը, Մանուկ Աբեղյանը, Նիկոլ

Աղբալյանը, Լևոն Շանթը, Յուրի Ղամբարյանը, Ստեփան Մալխասյանցը և շատ ուրիշներ: Նրանք լծվեցին գիտակրթական գործի բարելավմանը:

Առաջընթաց ապրեց կրթական գործը: Հանրապետությունում գործում էր «Դպրոցների մասին» օրենքը: Դպրոցական համակարգը դարձավ երկաստիճան՝ տարրական և միջնակարգ: Եթե 1918–19 ուստարում Հայաստանն ուներ 130 տարրական դպրոց 11 հազար աշակերտով, ապա 1919–20 ուստարում՝ 450 դպրոց 41 հազար աշակերտով: Հանրապետությունում գործում էին 20 միջնակարգ դպրոցներ 5000-ից ավելի սովորողներով: 1920թ. հունվարից տարրական դպրոցներում սահմանվեց անվճար կրթություն:



Նիկոլ Աղբալյան (1873–1947)

Ազգային գրադարանի շենքը Երևանում

Հայաստանի ազգային-մշակութային կյանքում նշանակալի իրադարձություն էր պետական համալսարանի հիմնադրումը: 1919թ. մայիսի 16-ին կառավարությունը որոշում կայացրեց հիմնելու համալսարան: 1920թ. հունվարին, համալսարանի հանդիսավոր բացման ժամանակ, վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը արտահայտեց հետևյալ միտքը. «Մենք կործանեցինք բռնության շղթան, իսկ այժմ եկել է ժամանակը՝ փշրելու տգիտության շղթան»: Համալսարանի ռեկտոր նշանակվեց նշանավոր իրավագետ, պրոֆեսոր Յու. Ղամբարյանը:

Համազգային արժեք էր Երևանում պետական պատկերասրահի, Ազգային գրադարանի, հնագիտական, ազգագրական և այլ թանգարանների բացումը: Ծրագրվում էր Երևանում հիմնել կոնսերվատորիա, պետական թատրոն, բժշկական, գյուղատնտեսական կրթօջախներ, Ալեքսանդրապոլում՝ գեղարվեստի ուսումնարան, Կարսում՝ ռազմական գիմնազիա, և այլն:

Պետությունը հովանավորում էր գրողներին, գիտության և արվեստի գործիչներին: Միլիոնների հասնող գումարներ էին հատկացվում վաստակավոր գրողների երկերի հրատարակության, գիտական և գեղարվեստական գրականության թարգմանության համար: Կրթամշակութային բնույթի գոր-

ծերում առանձնապես գնահատելի է կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանի խաղացած դերը:

Այսպիսով՝ Հայաստանի տնտեսական և մշակութային կյանքում փոփոխություններն ակնբախ էին: Չնայած հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր դրությանը, այնուամենայնիվ, կարճ ժամանակում հնարավոր եղավ դնել տնտեսության հիմքերը, տեղաշարժեր արձանագրել կրթամշակութային ոլորտում, բացել համալսարան և այլն:

Երկրի ներքին դրության մասին Հայաստանի Հանրապետության կառավարության հայտարարությունից (1918թ.)

Կառավարությունը գտնում է երկիրը այնպիսի վիճակի մեջ, որի բնորոշման համար մի բառ կա միայն՝ կատաստրոֆային:

Խոր ցնցումները չէին կարող չթողնել իրենց հետևից ահռելի հետքեր: Տնտեսական կյանքի ու ֆինանսական դրության կատարյալ քայքայում, դադարում ապրանքների արտադրության ու փոխանակության, կենսամթերքների ծայրաստիճան պակասություն, ամենաանհրաժեշտ առարկաների բացակայություն կամ սոսկալի թանկություն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցության դադարում, երթևեկության ուրիշ միջոցների պակասություն, ապա հարյուր հազարներով հաշվվող անտուն ու անսնունդ գաղթականություն, անապահով կացություն սահմանների վրա և որպես անխուսափելի հետևանք այս բոլորի՝ անիշխանություն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսի՞ն էր նորանկախ հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը:
2. Ի՞նչ միջոցներ ձեռնարկեց Հայաստանի կառավարությունը ժողովրդի ֆիզիկական գոյությունը պահպանելու համար: Ինչպե՞ս կարող եք գնահատել ԱՄՆ-ի հումանիտար օգնությունը: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
3. Փորձե՛ք նկարագրել հայ գաղթականության վիճակը: Ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին որբ երեխաներին օգնելու նպատակով:
4. Թվարկե՛ք տնտեսության բարելավմանն ուղղված կառավարության միջոցառումները: Դրանցից որո՞նք եք դուք ավելի կարևորում: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը: Հայ մշակույթի նշանավոր գործիչներից ովքե՞ր եկան Հայաստան և ի՞նչ դեր խաղացին երկրի մշակութային կյանքում:
5. Ձեր կարծիքով՝ Հայաստանի կառավարությունը ինչո՞ւ էր կարևորում կրթական գործը: Փորձե՛ք մեկնաբանել Ալ. Խատիսյանի «Մենք կործանեցինք բռնության շղթան, իսկ այժմ եկել է ժամանակը՝ փշրելու տգիտության շղթան» միտքը:

3. Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: 1920թ. մայիսյան ապստամբությունը

Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության զինանշանը

Քաղաքական կյանքը, կուսակցությունները: Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր դրությունն իր դրոշմն էր թողնում հասարակական-քաղաքական կյանքի վրա: Այդուհանդերձ՝ նկատվում էր հասարակական կյանքի աշխուժացում: Երևանը և Ալեքսանդրապոլը (այժմ՝ Գյումրի) դարձան հասարակական-քաղաքական կյանքի կենտրոններ: Հանրապետությունում լույս էին տեսնում մի քանի տասնյակ անուն պարբերականներ, որոնց մի զգալի մասը համարվում էր ընդդիմադիր, գործում էին բազմաթիվ հրատարակչություններ ու տպարաններ: Թերթերն ու ամսագրերը լուսաբանում էին երկրի առօրյան: Ընդդիմադիր մամուլը քննադատում էր իշխանություններին: Պետության լրատվության հիմնական միջոցը Հայաստանի հեռագրական գործակալությունն էր (ՀՀԳ): 1919թ. սեպտեմբերից բացվել և գործում էր Երևանի հզոր ռադիոկայանը: Կառավարությունը հիմնականում ապահովում էր խոսքի ու մամուլի ազատությունը:

Հանրապետության քաղաքական կյանքի հիմնական դերակատարները կուսակցություններն էին: Հայաստանում գործում էին մի շարք քաղաքական կուսակցություններ: Դրանցից առավել աչքի էին ընկնում Դաշնակցությունը, Հայ ժողովրդական, Հայ (սահմանադրական) ռամկավար, Սոցիալիստ-հեղափոխական (Էսէռ), Սոցիալ-դեմոկրատ (մենշևիկ, բոլշևիկ) կուսակցությունները: Հանրապետությունում շատ փոքր էր Ս. Դ. հնչակյան կուսակցության դերակատարությունը: Վերոնշյալ կազմակերպությունների մի մասը՝ Դաշնակցություն, Էսէռ, Սոց.-դեմ. հնչակյան, պաշտպանում էր սոցիալիզմի գաղափարներ, իսկ մյուս մասը՝ ՀԺԿ, Հայ ռամկավար, ազատական (լիբերալ) արժեքներ: Բազմակուսակցական համակարգի ձևավորումը, անշուշտ, նպաստում էր երկրի ժողովրդավարացման (դեմոկրատացման) գործընթացներին:

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության զինանշանը

Կուսակցությունների կողքին կային հասարակական զանազան կազմակերպություններ ու միություններ՝ արհեստակցական, Կարմիր խաչի, հայրենակցական, կանանց, սկաուտական և այլն: Դաշնակցությունը համարվում էր հանրապետության հիմնական կառավարող կուսակցությունը: Երկրի առջև ծառացած բարդ խնդիրները լուծելու համար Դաշնակցության հետ ժամանակավորապես միասնական (կոալիցիոն) կառավարություն կազմեց Հայ ժողովրդական կուսակցությունը: Վերջինս Դաշնակցության պես պաշտպանում էր Արևելյան և Արևմտյան Հայաստանների միավորումով Միացյալ և

Անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը: Այդ ծրագիրն էր պաշտպանում նաև Հայ ռամկավար կուսակցությունը: Ռամկավարները արտահայտում էին գերազանցապես հայ գաղթականների շահերը: Հատկանշական է, որ ազգային հարցում հայ քաղաքական կուսակցությունները հիմնականում միակամ էին:

1919թ. փետրվարին Երևանում կայացավ արևմտահայերի 2-րդ համագումարը, որը որոշում ընդունեց Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու մասին: Այդ գաղափարը կենսագործելու նպատակով Հայաստանի կառավարությունը անկախության առաջին տարեդարձի օրը՝ 1919թ. մայիսի 28-ին, պաշտոնական հայտարարություն արեց Միացյալ և Անկախ Հայաստանի հռչակման մասին: Սակայն այդ հռչակագիրը կուսակցությունների միջև առաջ բերեց սուր տարաձայնություններ, որովհետև ընդունվել էր առանց խորհրդարանի գիտության: Մի շարք կուսակցություններ բողոք արտահայտեցին, իսկ ՀԺԿ-ն հեռացավ կառավարությունից: Դրանով քայքայվեց կոալիցիան: Դաշնակցությունը միայնակ ստանձնեց երկրի կառավարման ղեկը և պատասխանատվությունը:

Թուրք-թաթարական խռովությունները: Հայաստանի Հանրապետության ներքին կյանքի ամենացավոտ հարցերից էին հանրապետությունում զգալի թիվ կազմող թուրք-թաթարների հաճախ կրկնվող խռովությունները: Դրանք հրահրվում և ուղղորդվում էին Թուրքիայի և Ադրբեջանի կողմից: Վերջիններս ձգտում էին խորտակել Հայաստանի անկախությունը, զավթել նրա տարածքները և անմիջական սահմանային կապ հաստատել իրար հետ:

Հակահայկական շարժման թեժ օջախներ էին համարվում Մեծ Վեդին, Զանգիբասարը (Մասիսի շրջ.), Շարուր-Նախիջևանը, Արդահանը, Սուրմալուն և այլն:

1918թ. վերջին՝ աշխարհամարտի ավարտից հետո, օսմանյան թուրքերը, հեռանալով Անդրկովկասից, Հայաստանի թուրքաբնակ վայրերում թողեցին մեծ թվով ասկյարներ (զինվորներ) ու զինվորական մասնագետներ: Նրանք սկսեցին հավաքագրել տեղացի մահմեդականներին: Թուրք-թաթարական խռովարարները չէին ենթարկվում Հայաստանի օրինական իշխանություններին: Նրանք հալածում էին հայ խաղաղ բնակչությանը, կատարում ահաբեկչական գործողություններ, փակում ճանապարհները: Անգամ Երևանում հավատարմագրված Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը զբաղված էր Հայաստանի դեմ ուղղված լրտեսական գործունեությամբ:

Ստեղծված պայմաններում Հայաստանի իշխանությունները ստիպված էին դիմել համապատասխան գործողությունների: Սկզբում փորձ արվեց կոնֆլիկտները հարթելու խաղաղ միջոցներով: Բայց արդյունք չտվեց, խռովարարները դա համարեցին Հայաստանի թուլության նշան: 1919թ. կեսերից թուրք-թաթարական խռովությունները ստացան բացահայտ զինված ապստամբության բնույթ: Հայաստանի կառավարությունը որոշ վայրերում

ստիպված էր զինված ուժի գործադրման միջոցով հնազանդեցնել նրանց: Արդեն 1920թ. ամռանը հիմնականում կասեցված էին թուրք-թաթարական խռովությունները: Թուրքերի մի մասը հեռացավ Հայաստանից: Մի շարք ազատված բնակավայրերում բնակություն հաստատեցին արևմտահայ գաղթականներ ու Ադրբեջանից տեղահանված հայ փախստականներ:

Այսպիսով՝ Հայաստանի կառավարությունը բավարար վճռականություն հանդես բերեց՝ ճնշելու թուրք-թաթարական խռովությունները: Դա նպաստեց պետականության հիմքերի ամրապնդմանն ու երկրի միատարրությանը:

1920թ. մայիսյան ապստամբությունը: Հանրապետությունում գործող գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները, բացառությամբ բոլշևիկների, ընդհանուր առմամբ պաշտպանում էին հայոց անկախ պետականությունը, մի մասն էլ՝ Միացյալ Հայաստանի գաղափարը: Մինչդեռ Հայաստանի բոլշևիկները բաց չէին թողնում իշխանությունը գրավելու և Ռուսաստանի օրինակով Հայաստանում ևս խորհրդային կարգեր հաստատելու առիթը: Չունենալով բավարար ազդեցություն և ուժ՝ նրանք հույսը կապել էին Խորհրդային Ռուսաստանի ու նրա Կարմիր բանակի օգնության հետ:

1919թ. սեպտեմբերին բոլշևիկները Երևանում ստեղծեցին իրենց ղեկավար կենտրոնը, որը կոչվեց Հայաստանի կոմիտե կամ Արմենկոմ: 1920թ. հունվարին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների խորհրդաժողովը (կոնֆերանսը) որոշեց արտաքին ու ներքին նպաստավոր պայմանների դեպքում ապստամբել և գրավել իշխանությունը: Նրանք այդպիսի նպաստավոր իրադարձություն համարեցին 1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումը Ռուսաստանի 11-րդ բանակի կողմից: Ապստամբության համար, բացի արտաքին գործոնից, անշուշտ, պետք է նշել նաև ներքին պատճառներ՝ դժգոհությունը իշխանություններից, ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր դրությունը և այլն:

Կարմիր բանակի մուտքը Անդրկովկաս և Ադրբեջանի խորհրդայնացումը ազդանշան հանդիսացան Հայաստանում ապստամբություն սկսելու համար: Ապստամբության կենտրոն դարձավ Ալեքսանդրապոլ քաղաքը: Բոլշևիկները որոշեցին 1920թ. մայիսմեկյան հակակառավարական ցույցերը վերածել զինված ապստամբության: Ապստամբությունը ղեկավարելու համար ստեղծվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե (ՀՌՀԿ): Ընդվզող հիմնական տարրը զինվորականությունն էր: Ապստամբների կողմն անցան հեղափոխական գաղափարներով տարված զինվորականության մի մասը և «Վարդան զորավար» գրահագնացքը: Վերջինիս հրամանատար կապիտան Սարգիս Մուսայելյանը նշանակվեց ապստամբական ուժերի ղեկավար:

Պետության համար ստեղծվեց վտանգավոր դրություն: Քաղաքական ճգնաժամը հաղթահարելու համար որոշվեց ստեղծել ուժեղ ձեռքի կառավարություն: Մայիսի 5-ին հրաժարական տվեց Ալ. Խատիսյանի կառավարու-

թյունը, նրա փոխարեն կազմվեց այսպես կոչված բյուրո-կառավարություն (Դաշնակցության ղեկավար մարմնի անդամներից): Վարչապետ նշանակվեց Համազասպ Օհանջանյանը: Նորաստեղծ կառավարությունը ձեռնարկեց մի շարք արտակարգ միջոցառումներ: Արգելվեցին գործադուլները և ցույցերը: Հիմնվեցին արտակարգ դատարաններ, սահմանվեց մահապատիժ: Բոլշևիկների կազմակերպած հակապետական ելույթի դեմ կոչով հանդես եկան գրեթե բոլոր կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները:

Համազասպ Օհանջանյան (1873–1947)

Թեև մայիսի 10-ին ՀՌՀԿ-ն Ալեքսանդրապոլում իշխանությունը վերցրեց իր ձեռքը, սակայն անվճռական գտնվեց, և մի քանի օր անց կառավարական ուժերը Սեպուհի հրամանատարությամբ ստիպեցին ապստամբներին անձնատուր լինել: Ապստամբական թույլ բռնկումներ եղան նաև Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Ղազախ-Շամշադինում և այլուր: Այդ ելույթները նույնպես հեշտությամբ ճնշվեցին: Գնդակահարվեցին մի շարք բոլշևիկ ղեկավարներ, իսկ մի քանի հարյուր ակտիվիստներ բանտարկվեցին: Կասեցվեց նորաստեղծ Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության (ՀԿ(բ)Կ) գործունեությունը: Բոլշևիկների մի մասն անցավ ընդհատակ, իսկ մյուս մասը հեռացավ Ադրբեջան, որպեսզի այնտեղից նախապատրաստեր իշխանությունը գրավելու նոր գործողություններ:

Այսպիսով՝ մայիսյան ապստամբությունը պարտվեց: Պարտության հիմնական պատճառն այն էր, որ ապստամբ բոլշևիկները բավարար աջակցություն չստացան ժողովրդից: Ապստամբության ղեկավարները հույսը դրել էին դրսի՝ Կարմիր բանակի օգնության վրա, որը տեղի չունեցավ: Ապստամբությունը ընթացավ անկազմակերպ, անջատ-անջատ, առանց միասնական ղեկավար կենտրոնի:

Այդուհանդերձ՝ չնայած մայիսյան ապստամբությունը ճնշվեց, սակայն սասանեց կառավարության դիրքերը, ընկավ բանակի մարտունակությունը, որը պետք է իր բացասական անդրադարձն ունենար արդեն 1920թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի վրա:

Միացյալ և Անկախ Հայաստանի հռչակագրից

Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն...

1919թ., մայիսի 28, Երևան քաղաք

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞վ էր պայմանավորված Հայաստանի քաղաքական կյանքի աշխուժացումը: Որո՞նք էին աչքի ընկնող հասարակական-քաղաքական կազմակերպությունները: Փորձե՛ք բնութագրել քաղաքական կուսակցություններին:
2. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Միացյալ և Անկախ Հայաստանի հռչակումը կուսակցությունների միջև առաջ բերեց սուր տարաձայնություններ: Կարելի՞ է արդյոք Հայաստանում ստեղծված վիճակը բնութագրել որպես քաղաքական ճգնաժամ: Ի՞նչ նպատակ էին հետապնդում Հայաստանի բոլշևիկները: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ նրանք դիմեցին զինված պայքարի: Ի՞նչ ընթացք ունեցավ մայիսյան ապստամբությունը:
3. Ովքե՞ր էին կազմակերպում թուրք-թաթարական խռովությունները: Ի՞նչ նպատակներ էին հետապնդում դրանք: Ի՞նչ միջոցների դիմեց Հայաստանի կառավարությունը թուրք-թաթարական խռովությունները ճնշելու համար:
4. Լրացրե՛ք «Մայիսյան ապստամբությունը» աղյուսակը:

Ապստամբության նպատակը	Ղեկավարները (գործիչները)	Կարևոր իրադարձությունները	Նշանակությունը (հետևանքները)

ԹԵՍՏ

Համապատասխանեցրե՛ք տարեթիվը իրադարձությանը.

1. 1919թ. սեպտեմբեր,
2. 1920թ. մայիսի 5,
3. 1919թ. փետրվար,
4. 1919թ. մայիսի 28,

ա) Միացյալ և Անկախ Հայաստանի հռչակումը,
բ) արևմտահայերի 2-րդ համագումարը,
գ) Հայաստանի կոմիտեի (Արմենկոմի) ստեղծումը,
դ) Ալ. Խատիսյանի կառավարության հրաժարականը,
ե) Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների խորհրդաժողովը:

2-րդ թեմայի ամփոփում

1. Հայաստանի 1-ին հանրապետությունը հայտնվեց սոցիալ-տնտեսական ծանր դրության մեջ: Երկրում մոլեգնում էին սովը և դրա ուղեկից համաճարակային հիվանդությունները (տիֆը, խոլերան): Հայաստանի կառավարության համար խիստ դժվար էր միայնակ, սեփական սուղ միջոցներով լուծել ներքին կյանքի բարդ խնդիրները: Դրսից օգնություն ստանալու նպատակով ԱՄՆ գործուղվեց Հովհ. Քաջազնունին:
2. 1919թ. գարնանից կառավարությունը լուրջ ջանքեր գործադրեց տնտեսությունը կազմակերպելու ուղղությամբ: Վերանորոգվեցին ու գործարկվեցին տասնյակ ձեռնարկություններ: Շահագործվեցին Կաղզվանի ու Կողբի աղահանքերը, Ալավերդու ու Զանգեզուրի պղնձահանքերը: Կառա-

վարությունը հայթայթեց սերմացու ու գյուղգործիքներ և բաժանեց գյուղացիներին:

3. Առաջընթաց ապրեց նաև մշակութային կյանքը: Հայաստան հրավիրվեցին գիտության ու մշակույթի բազում անվանի ներկայացուցիչներ: Աշխուժացավ դպրոցական համակարգը, այն դարձավ երկաստիճան՝ տարրական և միջնակարգ: Բացվեցին պետական համալսարանը, պատկերասրահը, Ազգային գրադարանը, ազգագրական և այլ թանգարաններ:
4. Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում կարևոր դեր սկսեցին խաղալ քաղաքական կուսակցությունները, որոնց կողքին գործում էին հասարակական տարբեր կազմակերպություններ ու միություններ:
5. 1920թ. մայիսին բոլշևիկները ապստամբություն բարձրացրին՝ ցանկանալով գրավել իշխանությունը, բայց պարտություն կրեցին: Պարտություն կրեցին նաև Հայաստանի ներքին կյանքը խաթարող թուրք-թաթարական խռովությունները:

ԹԵՄԱ 3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1918-1920ԹԹ.

1. Հարաբերությունները Քառյակ միության և հարևան պետությունների հետ

Հանրապետության հարաբերությունները Քառյակ միության հետ: 1918թ. հունիսի 4-ին Թուրքիայի հետ Բաթումում հաշտություն կնքելուց հետո Հայաստանի Հանրապետությունը հայտնվել էր չափազանց ծանր դրության մեջ. սահմանափակ տարածք, թուրք-թաթարական շրջափակում, հարյուրհազարավոր գաղթականներ և այլն:

1918թ. ամռանը Հայաստանի պատվիրակությունը (նախագահ՝ Ա. Ահարոնյան) փորձ արեց բանակցելու Քառյակ միության երկրների (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, Բուլղարիա) հետ՝ Բաթումի պայմանագիրը փոքր-ինչ մեղմելու նպատակով, բայց արդյունքի չհասավ:

Քանի դեռ շարունակվում էր աշխարհամարտը, Անդրկովկասում տնօրինություն էին անում Քառյակ միության երկրներից Գերմանիան և Թուրքիան: Նրանք նույնիսկ մրցակցում էին իրար հետ, թե տարածաշրջանում ով ավելի մեծ ազդեցություն կնվաճի: Նրանց համար մեծ գրավչություն ուներ ադրբեջանական նավթը: Հայաստանը իրավունք չուներ հարաբերվելու այլ պետությունների և հատկապես Անտանտի երկրների հետ:

Այս վիճակը շարունակվեց մինչև 1918թ. վերջերը՝ Առաջին աշխարհամարտի ավարտը: Ի վերջո, Անտանտը հաղթեց Քառյակ դաշինքին: Պարտված Գերմանիան և Թուրքիան իրենց զորքերը դուրս բերեցին Անդրկովկասից:

Դրա շնորհիվ Հայաստանի Հանրապետության տարածքը ընդարձակվեց՝ հասնելով մինչև 70 հազար քառ. կմ-ի:

Այժմ արդեն տարածաշրջանում ազդեցիկ դիրք գրավեց Անտանտի երկրներից Մեծ Բրիտանիան: Աշխարհամարտի ավարտից հետո Հայաստանի արտաքին քաղաքական վիճակը փոքր-ինչ բարելավվեց, և նա սկսեց ավելի ակտիվ արտաքին քաղաքականություն վարել:

Հայ-վրացական հարաբերությունները: ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը բարիդրացիական հարաբերությունների հաստատումն էր անմիջական հարևանների հետ: Հայաստանի հարևաններն էին Թուրքիան, Վրաստանը, Ադրբեջանը և Պարսկաստանը (Իրանը): Նրանց հետ կանոնավոր հարաբերությունների հաստատումը հարթ չընթացավ, որովհետև իրար միջև կային ազգային, տարածքային-սահմանային լուրջ վեճեր: Պարսկաստանը միակ երկիրն էր, որը Հայաստանի հետ չի ունեցել որևէ լուրջ խնդիր և հանրապետության գոյության ողջ ընթացքում պահպանել է բարեկամական հարաբերություններ:

Հայկական տարածքների նկատմամբ հավակնություններ ունեին հարևան մյուս երեք պետությունները, այդ թվում նաև Վրաստանի Հանրապետությունը:

Պատմությունից մենք գիտենք, որ հայ և վրաց ժողովուրդների միջև գոյություն է ունեցել դարավոր բարեկամություն: Նրանք շատ անգամ համատեղ պայքարել են օտար նվաճողների դեմ: Սակայն 1918թ. Վրաստանի և Հայաստանի անկախության հռչակումից հետո տարածքային-սահմանային վեճ ծագեց նրանց միջև, որի պատճառը դեռևս ցարիզմի ժամանակներում կատարված վարչատարածքային անարդար բաժանումն էր: Բանն այն էր, որ հայկական երկու շրջաններ՝ Լոռին ու Ախալքալաքը (Ջավախքը), մտցվել էին Թիֆլիսի նահանգի մեջ: Նորահռչակ Վրաստանի Հանրապետությունը ամեն կերպ ձգտում էր իր սահմանների մեջ ներառել հայաբնակ այդ տարածքները: Հայաստանի կառավարությունը ջանում էր հարցը լուծել բանակցությունների միջոցով, բայց ապարդյուն: Վիճակն առավել սրվեց, երբ թուրքական զորքը հետ քաշվեց Ախալքալաքից: Վրացական զորքը, օգտվելով հայկական զինուժի հապաղումից, դեկտեմբերի 5-ին մտավ և գրավեց 77 տոկոս հայ ազգաբնակչություն ունեցող գավառը:

Ի վերջո, սահմանային այդ վեճը 1918թ. դեկտեմբերի երկրորդ տասնօրյակին վերաճեց հայ-վրացական զինված ընդհարման՝ պատերազմի: Երբ վրաց իշխանությունները սկսեցին բռնություններ գործադրել տեղի հայության նկատմամբ, հայկական զորամասերը Դրաստամատ Կանայանի (Դրոյի) հրամանատարությամբ մտան Լոռի, հաղթանակ տարան վրացիների նկատմամբ և իրենց հսկողության տակ առան գավառամասը:

Վրաստանում ապրող հայերը հալածանքի ու հետապնդումների ենթարկվեցին: Փակվեցին ճանապարհները: Բարեբախտաբար պատերազմը կարճ տևեց՝ շուրջ երեք շաբաթ: Դեկտեմբերի 31-ին ռազմական գործողությունները դադարեցվեցին:

Խնդրին միջամտեցին Անտանտի՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի զինվորական ներկայացուցիչները: 1919թ. հունվարին կողմերի միջև կայացվեց համաձայնություն: Լոռին հայտարարվեց «չեզոք գոտի»: Կարճ ժամանակամիջոցում բարելավվեցին հայ-վրացական հարաբերությունները: Վերաբացվեցին հաղորդակցության ուղիները:

Հայ-վրացական վիճելի տարածքային խնդիրը վերջնականորեն լուծվեց նրանով, որ 1921թ. Ախալքալաքի գավառը կցվեց Վրաստանին, իսկ Լոռին միացվեց Հայաստանին:

Հայ-ադրբեջանական հարաբերությունները: Շատ ավելի բարդ էին հարաբերությունները Ադրբեջանի հետ: Առանձնապես սուր և շարունակական բնույթ կրեցին տարածքային-սահմանային վեճերը: Ադրբեջանը ձգտում էր նվաճել Ղարաբաղը (Արցախը), Զանգեզուրը (Սյունիքը), Շարուր-Նախիջևանը և այլ տարածքներ: Այդ խնդրում Ադրբեջանին աջակցում էին Մեծ Բրիտանիան և Թուրքիան, իսկ 1920թ. գարնանից բրիտանացիների փոխարեն՝ Խորհրդային Ռուսաստանը:

1918թ. վերջին բրիտանացիների միջամտությամբ կասեցվեց Անդրանիկի զորախմբի առաջխաղացումը դեպի Շուշի ու Արցախ: Բրիտանական հրամանատարության աջակցությամբ Արցախ-Զանգեզուրի նահանգապետ նշանակվեց թուրք ջարդարար Խոսրով բեկ Սուլթանովը: Արցախի և Սյունիքի հայությունը չճանաչեց Ադրբեջանի գերիշխանությունը և զենքը ձեռքին պայքարի ելավ իր ազատության ու մայր հայրենիքին միանալու համար: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձգտում էր խաղաղ միջոցներով լուծել Ադրբեջանի հետ ունեցած վիճելի հարցերը: Սակայն այդ բանակցությունները արդյունք չտվեցին: Մեծ տերությունները, շահագրգռված լինելով Բաքվի նավթով, ավելի հաճախ ճնշում էին գործադրում Հայաստանի վրա, որպեսզի նա զիջումներ անի Ադրբեջանին: Այդուհանդերձ՝ Հայաստանի կառավարությունը անում էր հնարավորինը՝ պաշտպան կանգնելու արցախահայության արդար դատին, Ղարաբաղը համարելով Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը:

Շուշիի ու շրջակա գյուղերի հայությունը 1920թ. մարտի 22–23-ին ենթարկվեց ահավոր ջարդի: Որոշ տվյալներով՝ զոհվեց մոտ 8000 հայ, հրկիզվեց քաղաքի հայկական հատվածը: Հայաստանի կառավարության որոշմամբ Դրոյի զորախումբը մտավ Ղարաբաղ: Ապրիլի 25-ին արցախահայության 9-րդ համագումարը որոշեց Ղարաբաղը վերամիավորել Հայաստանի Հանրապետությանը:

Դրո
(1883–1956)

Իրադրությունը հայ-ադրբեջանական հարաբերություններում կտրուկ փոխվեց, երբ մի քանի օր անց՝ ապրիլի 28-ին, 11-րդ բանակի միջամտությամբ, առանց

որևէ կրակոցի, խորհրդայնացվեց Ադրբեջանը: Դրանից հետո վերջինիս սկսեց պաշտպանել Խորհրդային Ռուսաստանը: Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը և Ռուսաստանի 11-րդ բանակի հրամանատարությունը վերջնագիր ներկայացրին Հայաստանի Հանրապետությանը: Դրան հետևեց թուրք-թաթար-բոլշևիկ զինուժի ներխուժումը Ղարաբաղ, Զանգեզուր և Նախիջևան: Կարմիր բանակի օգնությամբ Ադրբեջանը տիրեց Ղարաբաղին: Ավելի ուշ՝ 1921թ. հուլիսին, Խորհրդային Ռուսաստանի բարձրագույն իշխանությունների թողտվությամբ, Ղարաբաղը, մարզային լայն ինքնավարության կարգավիճակով, բռնակցվեց Ադրբեջանին: Արդյունքում՝ 1923թ. հուլիսի 7-ին վարչականորեն կազմվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ): Ավելին, ՀՍԽՀ և ԼՂԻՄ արանքում նույն թվականին ստեղծվեց միջանկյալ (բուֆերային) «Կարմիր Քրդստան» ազգային օկրուգը, որպեսզի մարզն անմիջական սահմանային շփում չունենա Հայաստանի հետ և լիովին կտրվի մայր հայրենիքից:

Այդ տեսակետից ծանր ճակատագիր ունեցավ նաև Նախիջևանը: 1919թ. կեսերին բրիտանացիների օգնությամբ Նախիջևանի գավառը պաշտոնապես միացվեց Հայաստանի Հանրապետությանը: Սակայն տեղի թաթարները Ադրբեջանի և Թուրքիայի իշխանությունների աջակցությամբ ապստամբություն բարձրացրին ու հրաժարվեցին ճանաչել Հայաստանի իշխանությունը: Շարուր-Նախիջևանի թաթարների շարունակական խռովությունների, ավերածությունների, թալանի հետևանքով երկրամասը գրեթե լիովին հայաթափվեց: Նախիջևանահայության մի մասը կոտորվեց, իսկ մյուսը հարկադրված վերաբնակվեց Հայաստանի այլ մասերում: 1920թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի ժամանակ, Թուրքիան բռնազավթեց Նախիջևանի գավառը: Իսկ 1921թ. (Մոսկվայի և Կարսի պայմանագրերով) Նախիջևանը հանձնվեց Խորհրդային Ադրբեջանին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ էր Հայաստանի համար անհրաժեշտ վերանայել Բաթումի պայմանագիրը: Ձեր կարծիքով՝ ի՞նչը խանգարեց դրան: Մինչև 1918թ. վերջը ո՞ր երկրներն էին տնօրինություն անում Անդրկովկասում և ի՞նչ նպատակներ էին հետապնդում:
2. Ինչո՞ւ ծագեց հայ-վրացական պատերազմը: Ե՞րբ և ինչպե՞ս լուծվեց հայ-վրացական վիճելի տարածքների հարցը:
3. Հայկական ի՞նչ տարածքներ էր ձգտում նվաճել Ադրբեջանը: Ի՞նչ ընթացք ունեցավ վիճելի տարածքների հարցի լուծումը:
4. Ե՞րբ Նախիջևանը պաշտոնապես միացվեց Հայաստանի Հանրապետությանը: Ինչո՞ւ չհաջողվեց Նախիջևանը պահել Հայաստանի կազմում:
5. Փորձե՛ք գնահատել Հայաստանի Հանրապետության հարաբերությունները հարևան երկրների հետ:

2-3. Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում և Սևրի պայմանագիրը

Հայկական պատվիրակությունները Փարիզի կոնֆերանսում: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը Հայկական հարցի լուծումն էր: Այսինքն՝ պահանջ էր դրվում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող արևմտահայ նահանգները միացնելու Հայաստանի Հանրապետությանը և այդպիսով ստեղծելու Միացյալ, Անկախ Հայաստան:

Ինչպես հայտնի է, 1918թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի (նավահանգիստ Էգեյան ծովում) զինադադարով Թուրքիան ընդունեց իր պարտությունը և դուրս եկավ պատերազմից: Պարտություն կրեցին Քառյակ միության նաև մյուս երկրները, ու այդպիսով ավարտվեց Առաջին աշխարհամարտը:

1919թ. հունվարին բացվեց Փարիզի խաղաղության կոնֆերանսը (խորհրդաժողովը): Հաղթանակած Անտանտի երկրները (Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան և այլն) այստեղ պետք է հաշտության պայմանագիր կնքեին պարտված Քառյակ միության երկրների, այդ թվում՝ Թուրքիայի հետ: Անտանտի երկրների «փոքր դաշնակիցն» էր համարվում նաև Հայաստանը, որովհետև աշխարհամարտի տարիներին հայ ժողովուրդն ու Հայաստանը Անտանտի կողմից մասնակցություն էին ունեցել պատերազմին՝ ռուսական բանակ զորակոչված հարյուրհազարավոր զինվորականներով, ինչպես նաև հայկական կամավորական ջոկատներով: Բացի դրանից՝ 1918թ. հունվարից ռուսական բանակի քայքայումից հետո Կովկասյան ճակատում թուրքական զորքերին դիմակայող միակ ուժը եղել է հայկական բանակային կորպուսը գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ: Հիշենք նաև աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի կրած վիթխարի մարդկային և նյութական կորուստները: Ուստի նորանկախ Հայաստանն ուներ քաղաքական ու բարոյական բոլոր հիմքերը՝ համապատասխան պահանջատիրությամբ ներկայանալու Փարիզի խորհրդաժողով:

Հայաստանի ու հայ ժողովրդի շահերը այդ կոնֆերանսում պաշտպանելու համար Փարիզ մեկնեց հանրապետության պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի նախագահությամբ: Ավելի վաղ՝ 1912 թվականից Փարիզում գործում էր Ազգային պատվիրակությունը եգիպտահայ ազգային գործիչ, Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադիր Պողոս Նուբար Փաշայի գլխավորությամբ:

Հարկ է նկատել, որ Փարիզի խաղաղության խորհրդաժողովի շրջանում Հայաստանի կառավարության և Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարի միջև ծագել էին տարակարծություններ: Այսպես, եթե Հայաստանի կառավարությունը հանդես էր գալիս ավելի չափավոր տարածքային պահանջով՝ ՀՀ-ին կցել արևմտահայ մի քանի, առավելագույնը՝ 6, նվազագույնը՝ 3 նահանգ՝ ծովային ելքով, ապա Պողոս Նուբարը և նրան ձայնակից

հայ ռամկավարներն ու ՀԺԿ-ն պահանջում էին ծովից ծով Հայաստան՝ թուրքահայ 7 նահանգ Կիլիկիայի հետ միասին: Բացի դրանից՝ Հայաստանի կառավարության և Պողոս Նուբարի միջև տարաձայնություն կար, թե ով է լինելու ապագա Միացյալ Հայաստանի վարչապետը, կամ թե երկու պատվիրակություններից որն է գլխավորը, և այլն:



Պողոս Նուբար Փաշա (1851–1930)

Այդուհանդերձ՝ հայկական այս երկու պատվիրակությունները համատեղ մեծ աշխատանք կատարեցին Հայկական հարցի նախապատրաստման ու կոնֆերանսին ներկայացնելու ուղղությամբ: 1919թ. փետրվարին նրանք խաղաղության խորհրդաժողովին ներկայացրին հայկական պահանջների մի հուշագիր, որով Հայաստանի ամբողջականությունը վերականգնելու նպատակով դաշնակից տերություններից պահանջվում էր ՀՀ-ին միացնել արևմտահայ 7 նահանգներ, ինչպես նաև Կիլիկիայի չորս սանջակներ, մի խոսքով՝ ծովից ծով Հայաստան:

Ստացվեց այնպես, որ ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը, գաղութահայության տրամադրությունների ազդեցության տակ, անտեսելով կառավարության հրահանգը տարածքային պահանջների հարցում, ստորագրեց ծովից ծով պահանջների փաստաթուղթը, որն, անշուշտ, իրատեսական չէր:

Հայաստանի մանդատի հարցը: Միացյալ Հայաստանի գաղափարի իրականացման համար շատ կարևոր էր նաև մանդատի (հովանավորության կամ խնամակալության) հարցը: Այսինքն՝ անհրաժեշտ էր, որ մի հզոր պետություն հովանավորեր Միացյալ Հայաստանին՝ ապահովեր նրա անվտանգությունը, օգներ տնտեսապես, մինչև վերջինս կայանար որպես ինքնուրույն պետություն: Հույս էր տածվում, որ Միացյալ Հայաստանի խնամակալությունը կստանձնի հզոր ու հարուստ ԱՄՆ-ը: Հայկական պատվիրակությունները ցանկանում էին Հայաստանի մանդատը հանձնել ԱՄՆ-ին կամ նորաստեղծ Ազգերի լիգային: ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատը ընդունելու հարցում իրենց նպաստն էին բերել Ամերիկայի հասարակայնությունը և տեղի հայ համայնքը:

Վուդրո Վիլսոն

Փարիզի խաղաղության խորհրդաժողովը և նորաստեղծ Ազգերի լիգան որոշում են Հայաստանի մանդատը հանձնել ԱՄՆ-ին: ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը շատ էր հետաքրքրվում Հայաստանով և Հայաստանի մանդատի ջերմ պաշտպաններից էր: Նա պատվիրակություն ուղարկեց տարածաշրջան՝ ուսումնասիրելու Հայաստանի խնամակալությունը ստանձնելու պայմաններն ու հնարավորությունները: Սակայն Հայաստանի աշխարհաքաղաքական բարդ վիճակի, երկրի տնտեսական ոչ բավարար գրավչության և ռազմաֆինանսական մեծ

ծախսերի հետ կապված պատճառաբանություններով, ի վերջո, ԱՄՆ-ի Սենատը 1920թ. հունիսի 1-ին, Վիլսոնի կամքին հակառակ, հրաժարվեց ընդունել Հայաստանի մանդատը:

Սան Ռեմոյի խորհրդաժողովը: 1920թ. ապրիլին Իտալիայի Սան Ռեմո քաղաքում կայացավ Անտանտի տերությունների (Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի) ղեկավարների խորհրդաժողով, որտեղ մշակվեց և Օսմանյան Թուրքիայի կառավարությանը ներկայացվեց առաջիկա հաշտության պայմանագրի նախագիծը: Այստեղ հստակեցվեցին նաև Հայկական հարցի հետ կապված մի շարք խնդիրներ՝ մանդատի, տարածքների, ռազմական օգնության և այլն: Միաժամանակ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը ստանձնեց պարտավորություն, իբրև միջնորդ, գծելու հայ-թուրքական սահմանը:

Սևրի պայմանագիրը: 1920թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սևր կոչվող արվարձանում Անտանտի երկրները սուլթանական Թուրքիայի հետ կնքեցին հաշտության պայմանագիր: Հայաստանի կողմից պայմանագիրը ստորագրեց հանրապետության պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանը: Նա այդ օրը համարել է իր կյանքի ամենաերջանիկ օրը:

Պայմանագրի 88-93-րդ հոդվածները վերաբերում էին Հայաստանին: Օսմանյան Թուրքիան պարտավորվում էր ճանաչել Միացյալ Հայաստանը: Հայաստանին էին անցնելու Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգները ոչ ամբողջությամբ՝ ընդամենը 90 հազար քառ. կմ, ելքով դեպի Սև ծով: Դա նշանակում էր, որ Միացյալ, Անկախ Հայաստանի ընդհանուր տարածքը հանրապետության (Արևելյան Հայաստանի) առկա 70 հազար քառ. կմ-ի հետ կազմելու էր 160 հազար քառ. կմ: Ընդ որում՝ հայ-թուրքական պետական սահմանը որոշելու էր ԱՄՆ-ի նախագահը, որն էլ նույն թվականի նոյեմբերի 22-ին ստորագրեց Միացյալ, Անկախ Հայաստանի իրավարար վճիռը (փաստաթուղթը) համապատասխան քարտեզով: Սակայն, ցավոք, հետագա դեպքերն ու իրադարձությունները աննպաստ ընթացան: Սևրի պայմանագիրը մնաց թղթի վրա:

Թուրքիայի խորքերում ծավալվել էր ազգայնական (միլլի) զինված մի շարժում թուրք գեներալ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ: Քեմալականները չճանաչեցին սուլթանական կառավարության ստորագրած Սևրի պայմանագիրը: Մյուս կողմից՝ Սևրի պայմանագիրը ստորագրած, Հայաստանի դաշնակից համարվող պետությունները՝ Ֆրանսիան, Իտալիան, ապա նաև Մեծ Բրիտանիան, աստիճանաբար երես դարձրին հայերից և մոռացության մատնեցին իրենց իսկ ստորագրած պայմանագիրը: Ասպարեզում մնում էր միայնակ Հայաստանը, որը չուներ բավարար ուժ և կարողություն՝ քեմալականներից ազատագրելու արևմտահայ նահանգները:

Սևրի պայմանագրի ստորագրումը

Հայ-թուրքական սահմանագիծն ըստ Սևրի պայմանագրի (10.VIII.1920) և ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի (22.XI.1920)


Դաշոց Նշգային խորհրդի կողմից նշանակվող Լեռնային Դպրության սահմանները
ՀՀ ճանաչվածներ և Օսմանյան կայսրության վիլայեթների սահմանները
Կիլիկիայի Դպրության սահմանները, հանձնված Դպրության կառավարության Փարիզի խաղաղության կոնֆերանսում ներկայացված սահմանների նախագծի (1919 թ.)
Ռուսական և թուրքական բանակների սահմանազատման գծերը հանձնված երզնկայի ռուս-թուրքական զինադադարի (5/18. XII. 1917)
«Լուռ, չեզոք գոտու» հիմնադրային սահմանը և տարածքը
Վիլսոնյան կողմից ուղղակիորեն հայկական տարածքներ
Արևելյան կողմից ռազմական հայկական տարածքներ
ՌՈՒՍԱՍՏԱՆ
Թիֆլիս (Տիֆլիս)
Բաթում
Բուրթայիս
Զոզի
Սվանետիա
Ռիոնի գետաբերան
Սվանետիա
Սվաներիա
Ալեքսանդրապոլ
Գյումրի
Կարս
Ղարսի գետ
Արաքսի գետ
Նոր Բայազետ
71 330 կմ²
Երևան
Սևանա լիճ
Գեղարքունիք
Գեղամա լեռներ
Գոգարենի
Գոգարենի գետ
Ջրվեժ
Ջրվեժի գետ
Ղազանչի գետ
Ղազանչի
Ղազանչի գետ
Ղազանչի գետ
Ղազանչի գետ

Այսպիսով՝ մեծ տերությունների, այդ թվում՝ Խորհրդային Ռուսաստանի ոչ հայանպաստ դիրքորոշման պատճառով հերթական անգամ ձախողվեց Հայկական հարցի լուծումը: Թեև Սևրի պայմանագիրը և նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը չիրագործվեցին, սակայն մինչև օրս շարունակում են մնալ Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչման անբեկանելի փաստաթուղթ:

Կիլիկիահայության դրությունը: Սևրի պայմանագիրը սերտորեն առնչվում էր նաև կիլիկիահայության ճակատագրին:

Աշխարհամարտի ավարտից հետո պատմական Կիլիկիա վերադարձան եղեռնից մազապուրծ ու հոգեվարք ապրած հազարավոր հայեր՝ աշխատելով վերականգնել ու շենացնել իրենց ավերված օջախները: Արդեն 1919թ. հայերի թվաքանակը Կիլիկիայում անցնում էր 150 հազարը:

Հայտնի է, որ Սայքս–Պիկոյի համաձայնագրով Կիլիկիան հանդիսանալու էր Ֆրանսիայի ազդեցության գոտի, և հայերն ու երկրամասում ապրող մյուս քրիստոնյա համայնքները հույս էին տածում, թե Ֆրանսիան կօգնի, որ իր հովանավորությամբ Կիլիկիան դառնա Թուրքիայից միանգամայն անկախ կամ ինքնավար միավոր:

Միհրան Տամատյան (1863–1945)

1919թ. գարնանը հայկական երկու պատվիրակությունների լիազոր ներկայացուցիչները, ազգային գործիչ Միհրան Տամատյանը ժամանում են Ադանա և տեղի հայ քաղաքական՝ Դաշնակցություն, Ռամկավար, Հնչակյան կուսակցությունների հետ համատեղ աշխատանքներ են տանում տեղի քրիստոնյա ազգաբնակչության և ֆրանսիական կառավարիչ (կոմիսար) գնդապետ Էդ. Բրեմոնի հետ՝ ազատագրված երկրամասը Ֆրանսիայի հովանու տակ անկախ կամ ինքնավար հռչակելու:

Հայ ազգային-քաղաքական շրջանները նման նպատակ դնելիս հիմք էին ընդունել, որ նախ Կիլիկիան համարվում է հայոց ժառանգական հող, ուր միջնադարում մի քանի դար շարունակ եղել է Կիլիկիայի հայկական պետություն, տեղում ստեղծվել է բարձր մշակույթ, և բացի դրանից՝ հայերն աշխարհամարտում, հանձին «հայկական լեգեոնի», գործուն մասնակցություն են ունեցել դաշնակիցների զորքերի շարքերում, մասնավորապես՝ 1918թ. սեպտեմբերին Արարայի հաղթական ճակատամարտում, և իրենց նպաստը բերել Կիլիկիայի ազատագրմանը:

Սակայն շուտով ակներև է դառնում, որ ֆրանսիական ռազմավարչական ղեկավարությունը բնավ տրամադիր չէ Կիլիկիայի ինքնավարության գաղափարի իրականացմանը: Ավելին, նրա զինվորական հրամանատարությունը մտադիր չէ հայերի անվտանգությունը ապահովել: Դա երևաց 1920թ. սկզբներին՝ Մարաշի ինքնապաշտպանության ժամանակ, երբ քեմալական զինյալ ուժերը և թուրք-քրդական զինված ավազակախմբերը հարձակվեցին քաղաքի

վրա: Ֆրանսիական զորքը ամոթալի կերպով նահանջեց՝ հայ բնակչությանը անպաշտպան թողնելով: Զոհվեցին մեկ տասնյակ հազարից ավելի մարաշցիներ, իսկ կենդանի մնացածները տարագրվեցին: Նույն կերպ ծանր ինքնապաշտպանական կռիվներ մղվեցին Հաճընում, Ուրֆայում, Այնթապում, Լեռնային Կիլիկիայում գտնվող Զեյթունում և այլուր: Հաճընի հերոսական ինքնապաշտպանությունը տևել է ութ ամիս:



Մարաշ



Հաճընն



Ուրֆա

Ստեղծված նման բարդ իրավիճակում ակնկալվում էր զորավար Անդրանիկի ժամանումը Կիլիկիա՝ տեղում ղեկավարելու հայերի ինքնապաշտպանությունը: Սակայն Ֆրանսիայի կառավարությունը արգելեց զորավարի մուտքը Կիլիկիա:

Այդուհանդերձ՝ հայ քաղաքական շրջանները երկրամասի մյուս քրիստոնյա համայնքների հետ համախորհուրդ որոշում են հայտարարություն անել Կիլիկիայի ինքնավարության մասին: Եվ 1920թ. օգոստոսի 4-ին Ադանայում հռչակվեց Ինքնավար Կիլիկիա՝ Ֆրանսիայի հովանու (մանդատի) ներքո, օգոստոսի 5-ին անգամ կազմվեց կառավարություն Մ. Տամատյանի գլխավորությամբ, մի խոսքով՝ հայկական ինքնավար մի պետություն, հայկական եռագույն դրոշով, վրան Ռուբինյան առյուծով:

Սակայն Ֆրանսիան իր շահերի թելադրանքով դեմ արտահայտվեց Կիլիկիայի ինքնավարությանը: Շուտով նա համաձայնության եկավ թուրքերի հետ: Արձակվեց Մ. Տամատյանի գլխավորած կառավարությունը: Հայերին զինաթափեցին: Ֆրանսիական զինված ուժերը լքեցին Կիլիկիան՝ տեղի հարյուրհազարավոր հայերին թողնելով թուրքական հրոսակների ճիրաններում: Կենդանի մնացած հայերը հարկադրված կրկին տարագրվեցին հարևան արաբական երկրներ՝ Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, նաև Կիպրոս, Եվրոպա: Երկրամասը հայաթափվեց: Այդ ամենի դիմաց Ֆրանսիան ստացավ տնտեսական մեծ արտոնություններ: 1921թ. հոկտեմբերի 20-ին Անկարայի պայմանագրով Ֆրանսիան Կիլիկիան վերջնականապես հանձնեց Թուրքիային:

Ահա այսպիսի ծանր հետևանքներ ունեցավ Ֆրանսիայի վարած քաղաքականությունը Կիլիկիայի ու կիլիկիահայության խնդրում:

Հանրագումարի բերելով ՀՀ վարած արտաքին քաղաքականությունը 1918-1920թթ.՝ կարելի է եզրակացնել, որ այդ քաղաքականությունը ունեցել է գերազանցապես արևմտյան կողմնորոշում: Հայկական հարցի պատմության փորձը ուսուցանում է, որ հիմնականում սեփական ուժերին ապավինելն է ազգի գոյատևման ու զարգացման ճշմարիտ երաշխիք:

Սևրի պայմանագրից

Հոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն:

Հոդված 89. Թուրքիան և Հայաստանը, ինչպես և բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ:

Հոդված 92. Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելույն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ...

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն էր Հայաստանի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը: Ե՞րբ բացվեց Փարիզի խաղաղության կոնֆերանսը: Ի՞նչ էր նախատեսում կոնֆերանսին ներկայացված հայկական պահանջների հուշագիրը:
2. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ առաջացավ Հայաստանի մանդատի հարցը և ինչո՞ւ մերժվեց: Ի՞նչ հետևություններ կարող եք անել:
3. Ե՞րբ կնքվեց Սևրի պայմանագիրը: Կարելի՞ է ասել, որ Սևրի պայմանագիրը արդարացրեց հայ ժողովրդի հույսերը: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ չիրագործվեց Սևրի պայմանագիրը:
4. Ե՞րբ հռչակվեց Կիլիկիայի ինքնավարությունը: Ինչո՞ւ չգոյատևեց այն:
5. Փորձե՛ք բնութագրել Հայաստանի կառավարության արտաքին քաղաքականությունը: Ձեր կարծիքով՝ որքանո՞վ էր իրատեսական այդ քաղաքականությունը:
6. Լրացրե՛ք «Հայկական երկու պատվիրակությունների տարակարծությունները» աղյուսակը:

Հայաստանի կառավարության պատվիրակություն	Ազգային պատվիրակություն

3-րդ թեմայի ամփոփում

1. Բաթումի 1918թ. հունիսի 4-ի պայմանագրից հետո Հայաստանի Հանրապետության դրությունը չափազանց ծանր էր: Դրությունը փոխվեց, երբ 1918թ. նոյեմբերին պարտված Գերմանիան ու Թուրքիան հեռացան Անդրկովկասից:
2. Հայաստանի Հանրապետությունը ձգտում էր բարիդրացիական հարաբերություններ հաստատել իր անմիջական հարևանների՝ Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի և Պարսկաստանի հետ, սակայն խանգարեցին սահմանային-տարածքային վեճերը: Հայ-վրացական վիճելի տարածքային խնդիրը լուծվեց միայն 1921թ., երբ Լոռին միացվեց Հայաստանին, իսկ Ախալքալաքը՝ Վրաստանին:
   Ադրբեջանին հաջողվեց Թուրքիայի, Մեծ Բրիտանիայի և Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ տիրանալ Արցախին և Նախիջևանին, իսկ Սյունիքը Գ. Նժդեհի շնորհիվ մնաց անառիկ:
3. Հայաստանի Հանրապետությունը ձգտում էր իրեն միացնել արևմտահայ նահանգները և ստեղծել Միացյալ Հայաստան: Փարիզի խաղաղության կոնֆերանս մեկնած հայկական երկու պատվիրակությունները մեծ աշխատանք կատարեցին այդ ուղղությամբ: Ի վերջո, 1920թ. օգոստոսի 10-ին Սևրի պայմանագրով Հայաստանը ճանաչվեց Միացյալ և Անկախ: Սակայն խոշոր տերությունների երկդիմի քաղաքականության հետևանքով Սևրի պայմանագիրը չիրագործվեց և մնաց թղթի վրա:
4. Կիլիկիահայությունը լուրջ քայլեր ձեռնարկեց Ֆրանսիայի հովանու ներքո ինքնավարություն ստեղծելու ուղղությամբ: Սակայն Ֆրանսիան Կիլիկիան հանձնեց Թուրքիային, ինչը հանգեցրեց նոր կոտորածների: Կիլիկիան հայաթափվեց:

ԹԵՄԱ 4 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

1. Հայաստանը ռուս-թուրքական հարաբերությունների ոլորտում

Հայ-ռուսական հարաբերությունները: Հայաստանի անկախության հռչակումից հետո բավականին բարդ հարաբերություններ ստեղծվեցին Ռուսաստանի հետ: 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում փաստորեն առաջացել էին երկու հակադիր քաղաքական ուժեր, որոնք քաղաքացիական կռիվներ էին մղում: Դրանցից մեկը Խորհրդային Ռուսաստանն էր (ՌՍԴԽՀ): Նա պայքարում էր խորհրդային սոցիալիստական կարգերը ամբողջ Ռուսաստանում հաստատելու համար: Խորհրդային Ռուսաստանի կողմնակիցներին իբրև հեղափոխականների այլ կերպ կոչում էին «կարմիրներ»: Մյուս կողմը հին՝ բուրժուական համարվող կարգերի պահպանման

կողմնակից ուժերն էին, որոնք չէին ընդունում բոլշևիկյան իշխանությունը: Սրանց էլ կոչում էին «սպիտակներ»: Ռուսաստանի հարավային և արևելյան շրջաններում ստեղծվեցին մի շարք ոչ խորհրդային պետական կազմավորումներ՝ Կուբանի, Թերեքի, Դոնի, Ղրիմի, Սիբիրի և այլն: Սրանք ղեկավարում էին նախկին ցարական գեներալներ:

Նորանկախ Հայաստանի կառավարությունն ի սկզբանե չկարողացավ բարիդրացիական հարաբերություններ հաստատել «կարմիրների»՝ Խորհրդային Ռուսաստանի հետ, թեև այդ ուղղությամբ որոշ փորձեր արվեցին: Դրա հիմնական պատճառն այն էր, որ Հայաստանի իշխանությունները չէին ընդունում խորհրդային վարչաձևը: Իր հերթին՝ խորհրդային կառավարությունն էլ ցանկություն չուներ ճանաչելու Հայաստանի անկախությունը:

Դրան հակառակ՝ բավականին սերտ հարաբերություններ հաստատվեցին Ռուսաստանի հարավի և Սիբիրի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ: Հայաստանն այնտեղ դիվանագիտական ներկայացուցչություններ բացեց: Հայաստանը նյութական որոշակի օգնություն ստացավ ոչ խորհրդային պետական կազմավորումներից ու հատկապես գեներալ Ա. Դենիկինի գլխավորած Հյուսիսային Կովկասի կառավարությունից: Լավ կապեր էին հաստատվել նաև Ուկրաինայի Կենտրոնական ռադայի, Սիբիրում՝ ծովակալ Ա. Կոլչակի կառավարության հետ և այլն: Ռուսաստանի հարավից և Ուկրաինայից Հայաստան էին առաքվում որոշ խմբաքանակներով հաց, շաքար, զենք, զինամթերք և այլն:

Ուկրաինայում, իսկ հետո Սիբիրում դիվանագիտական եռանդուն աշխատանք էր վարում հայտնի իրավաբան Գր. Ջամոյանը (Ջամոն): Սակայն ռուսական գեներալները ևս առաջնորդվում էին «Միասնական և անբաժան Ռուսաստան» կարգախոսով և առանձնապես տրամադիր չէին ճանաչելու Հայաստանի անկախությունը:

Հայ-ռուսական հարաբերությունների այս վիճակը շարունակվեց մինչև 1920թ. սկզբները:

Հայ-ռուսական բանակցությունները Մոսկվայում և դրանց ձախողումը: Այն բանից հետո, երբ խորհրդային Կարմիր բանակը քաղաքացիական կռիվներով պարտության մատնեց Դենիկինի կամավորական բանակին և մտավ Հյուսիսային Կովկաս, Անդրկովկասի երեք հանրապետությունների խորհրդայնացման անմիջական վտանգ ստեղծվեց:

1920թ. ապրիլի 28-ին առանց դիմադրության խորհրդայնացվեց Ադրբեջանը: Փոփոխված քաղաքական իրադրության պայմաններում Հայաստանի կառավարությունը որոշեց բանակցել Խորհրդային Ռուսաստանի հետ՝ բարեկամական պայմանագիր կնքելու և վերջինիս կողմից Հայաստանի անկախությունը ճանաչելու նպատակով:

1920թ. մայիսին Մոսկվա մեկնեց ՀՀ պատվիրակությունը խորհրդարանի փոխխոսնակ, գրող Լևոն Շանթի գլխավորությամբ: Մոսկվայի հայ-ռուսական բանակցությունները ընթացան հունիս-հուլիս ամիսներին և գործնական

արդյունք չտվեցին: Նրանք ձախողվեցին այն պատճառով, որ թե՛ ռուսական և թե՛ հայկական կողմերը պատշաճ կամք և պատրաստակամություն հանդես չբերեցին պայմանագիր կնքելու համար: Մի կողմից՝ Հայաստանի կառավարությունը թեև ցանկություն ուներ Ռուսաստանի հետ կնքելու բարեկամական դաշնագիր, սակայն, մյուս կողմից, շարունակում էր հույսեր կապել Արևմուտքի «դաշնակիցների» հետ, որովհետև առաջիկայում սպասվում էր մեծախոստում Սևրի պայմանագրի ստորագրումը: Իր հերթին՝ խորհրդային կողմն էլ Հայաստանի հետ պայմանագրի կնքումը պայմանավորում էր նրանով, որ Հայաստանը պետք է որոշակի տարածքային զիջումներ աներ Ադրբեջանին ու Թուրքիային, ինչպես նաև միջանցք տար, որպեսզի Կարմիր բանակը ցամաքով կապվեր քեմալական Թուրքիայի հետ: Հայկական կողմը չհամաձայնեց դրան: Մոսկովյան բանակցությունները մտան փակուղի, ընդհատվեցին՝ Երևանում շարունակելու նպատակով:

Լևոն Շանթ
(1869–1951)

Մինչ կվերսկսվեին մոսկովյան ընդհատված բանակցությունները, խորհրդային 11-րդ բանակի զորքերը հուլիսի սկզբին Ղարաբաղից մտան Զանգեզուր, գրավեցին Գորիսը, այնուհետև կռիվներով շարժվեցին Նախիջևան: Դրանով փաստորեն իրականանում էր ռուս-ադրբեջանական-քեմալական ուժերի միավորումը: Միաժամանակ կարմիր զորքերը, շարժվելով դեպի Ղազախ, սկսեցին Հայաստանին սպառնալ նաև հյուսիսից: Դրանով Հայաստանը հայտնվեց Խորհրդային Ռուսաստանի կողմից անմիջական ներխուժման վտանգի առաջ: 1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի ներկայացուցիչների (Բ. Լեգրան, Ա. Ջամալյան և Ա. Բաբալյան) միջև ստորագրվեց ժամանակավոր համաձայնագիր, ըստ որի Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը, որպես Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճելի տարածքներ, անցնում էին Ռուսաստանի ժամանակավոր հսկողության տակ, մինչև խնդիրը կկարգավորվեր Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվելիք վերջնական պայմանագրով: Թիֆլիսի համաձայնագիրը Հայաստանին հնարավորություն էր տալիս ազատորեն շահագործելու Իրանի հետ կապող Շահթախթի-Ջուլֆա երկաթուղին:

Քեմալական շարժումը և խորհրդա-թուրքական մերձեցումը: Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիայի արևելյան նահանգներում 1919թ. կեսերից սկսվել էր ազգայնական (միլլի) մի շարժում, որը հաճախ նրա ղեկավար գեներալ Մուստաֆա Քեմալի անունով կոչում են նաև քեմալական շարժում: Այդ շարժման նպատակն էր՝ պայքարել Անտանտի երկրների դեմ՝ պահպանելու Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Այդ շարժումն իր սուր ծայրով ուղղված էր նաև Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրական ձգտումների դեմ: Քեմալականները խնդիր էին դրել ուժի միջոցով

հակազդելու Փարիզի կոնֆերանսին և թույլ չտալու տարածքային որևէ զիջում: Ավելին՝ նրանք նպատակ ունեին զավթելու արևելահայ տարածքները և ոչնչացնելու հայոց պետականությունը:

1920թ. հունվարին Կ. Պոլսի թուրքական խորհրդարանը (մեջլիսը) մշակեց թուրքերի տարածքային պահանջների այսպես կոչված «Ազգային ուխտ» անվամբ մի փաստաթուղթ: «Ազգային ուխտի» համաձայն՝ Թուրքիայի սահմանների մեջ էին մտնելու ոչ միայն արևմտահայ բոլոր նահանգները, այլև մինչև Առաջին աշխարհամարտը Ռուսական կայսրությանը պատկանած Կարսի և Արդահանի շրջանները: Այս պահանջները դրվեցին քեմալականների գործողությունների հիմքում: Քեմալականները վճռական էին հայերին ոչ մի թիզ հող չզիջելու հարցում:

1920թ. գարնանը թուրք ազգայնականները Անկարայում, Կ. Պոլսի սուլթանական կառավարությունից անկախ, ստեղծեցին առանձին կառավարություն Մ. Քեմալի գլխավորությամբ, և մերձենալու ու բարեկամանալու առաջարկ արեցին Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը: Աշխարհամարտից թուլացած Թուրքիան ակնկալում էր Ռուսաստանից ստանալ տնտեսական, ֆինանսական և ռազմական օգնություն:

Խորհրդային Ռուսաստանը պայքարում էր Անտանտի տերությունների (իմպերիալիստների) դեմ, Անտանտի դեմ պայքարի դրոշով էին հանդես գալիս նաև քեմալականները, ուստի այստեղ նրանց քաղաքական շահերը համընկնում էին: Բացի դրանից՝ քեմալականները կեղծավորաբար հայտարարում էին, թե իրենք կոմունիստների նման հեղափոխականներ են և նպատակ ունեն Թուրքիայում և Արևելքի մուսուլմանական երկրներում հաստատելու սոցիալիզմ:

Այդ հիման վրա տեղի ունեցավ Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի մերձեցում: 1920թ. ամռանը Մոսկվայում գրեթե զուգահեռաբար բանակցություններ տեղի ունեցան մի կողմից ՀՀ-ի և Խորհրդային Ռուսաստանի, մյուս կողմից՝ վերջինիս և Թուրքիայի պատվիրակությունների միջև: Օգոստոսի 24-ին ստորագրվեց ռուս-թուրքական մերձեցման նախնական պայմանագիր: Ռուսաստանը ճանաչում էր թուրքերի «Ազգային ուխտը», որն իր սուր ծայրով ուղղված էր Սևրի պայմանագրի դեմ: Դրանից հետո Ռուսաստանը սկսեց օգնել թուրքերին դրամով (ոսկով), զենքով ու զինամթերքով: Իսկ թուրքերն այդ օգնությունը իրականում օգտագործեցին ոչ թե Անտանտի տերությունների, այլ Հայաստանի ու Թուրքիայում ճնշված մյուս ազգային փոքրամասնությունների՝ հույների, ասորիների դեմ: Այդպիսով՝ Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց երկու զորեղ ուժերի՝ Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի, այլ խոսքով՝ «ռուսական մուրճի և թուրքական սալի» արանքում: Ընդ որում, Ադրբեջանը դարձավ կապող օղակ Ռուսաստանի և Թուրքիայի միջև:

Խորհրդա-քեմալական գործակցության ուժեղացման տեսակետից մեծ դեր խաղաց Կոմունիստական ինտերնացիոնալի 1920թ. սեպտեմբերի 1–8-ը

Բաքվում կազմակերպած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը: Համագումարի 1891 պատգամավորներից 110 հայեր էին: Տարված լինելով համաշխարհային հեղափոխության պատրանքներով՝ կոմունիստ առաջնորդներ Վ. Լենինը, Լ. Տրոցկին, Գ. Զինովևը և մյուսները մեծ հույսեր էին կապում Արևելքի ժողովուրդներին համաշխարհային հեղափոխության մեջ ներքաշելու հետ: Այդ պայքարում հեղափոխական շարժման առաջամարտիկի դեր պետք է ստանձներ Թուրքիան: Եվ պատահական չէր, որ այդ խառնաժողովում ամենապատվավոր տեղում նստած էին Հայոց մեծ եղեռնի մի քանի կազմակերպիչներ, այդ թվում՝ հայ ժողովրդի դահիճ Ի. Էնվեր փաշան: Համագումարում քննարկվեց պատերազմի հարցը՝ «միջազգային իմպերիալիզմի գործակալ», «համաշխարհային հեղափոխության խոչընդոտ» Հայաստանի դեմ, և նույն Բաքվում սեպտեմբերի 17-ին «Արևելքի ժողովուրդների քարոզչության և գործողությունների խորհրդի» կողմից մշակվեց Հայաստանի վրա հարձակման և խորհրդայնացման ծրագիր, որում գլխավոր դերակատարը լինելու էր քեմալական Թուրքիան: Դրանով հող նախապատրաստվեց Հայաստանի վրա հարձակման համար:

Այսպիսով՝ 1920թ. աշնանը Հայաստանի Հանրապետությունը կանգնեց թուրքական ներխուժման վտանգի առաջ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով՝ ո՞րն էր պատճառը, որ բարդ հարաբերություններ էին ստեղծվել Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև:
2. Ի՞նչ իրադարձություններ հարկադրեցին Հայաստանի կառավարությանը՝ բանակցություններ վարել Խորհրդային Ռուսաստանի հետ: Ե՞րբ և ո՞ւմ գլխավորությամբ ՀՀ պատվիրակությունը մեկնեց Մոսկվա: Որո՞նք էին հայ-ռուսական բանակցությունների ձախողման պատճառները: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
3. Ե՞րբ սկսվեց քեմալական շարժումը և ի՞նչ նպատակ էր հետապնդում: Ձեր կարծիքով՝ որո՞նք էին ռուս-թուրքական մերձեցման պատճառները: Ե՞րբ կնքվեց ռուս-թուրքական մերձեցման նախնական պայմանագիրը և ի՞նչ հետևանքներ ունեցավ:

2. 1920թ. թուրք-հայկական պատերազմը: Հայաստանի խորհրդայնացումը

Թուրք-հայկական պատերազմը: 1920թ. սեպտեմբերի 23-ին (որոշ տվյալներով՝ 28-ին) քեմալական Թուրքիան, առիթ համարելով Օլթիի ածխահանքերի գրավումը հայկական զորքերի կողմից, առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա: Սկսվեց թուրք-հայկական պատերազմը, որը տևեց շուրջ երկու ամիս: Սեպտեմբերի 28-ից ծավալվեցին

վճռական ռազմական գործողությունները: Սեպտեմբերի 29-30-ին ոսոխը գրավեց Սարիղամիշն ու Մերդենեկը: Ի սկզբանե պատերազմն անհաջող ընթացք ունեցավ հայկական կողմի համար: Թուրքական 50-հազարանոց զորքը քանակապես գերազանցում էր հայկականին, որի ընդհանուր թվաքանակը հասնում էր շուրջ 40 հազարի:

Կառավարությունը մի շարք արտակարգ միջոցառումներ ձեռնարկեց՝ երկիրը պատերազմական պայմաններին համապատասխանեցնելու համար: Երկրում մտցվեց ռազմական դրություն, դասալքության համար սահմանվեց մահապատիժ, հայտարարվեց 20–35 տարեկան տղամարդկանց զորահավաք, արտակարգ լիազորություններով ճակատ մեկնեցին շատ նախարարներ ու պատգամավորներ, և այլն:

Կառավարությունը դիմեց նաև դիվանագիտական քայլերի՝ դրսից օգնություն ու աջակցություն ստանալու համար: Սակայն «դաշնակից» երկրները՝ Ֆրանսիան, Իտալիան, Մեծ Բրիտանիան, ինչպես նաև ԱՄՆ-ը, հայ ժողովրդի համար ճակատագրական այդ պահին անտարբեր գտնվեցին՝ թողնելով նրան միայնակ: Թերևս միակ շոշափելի օգնությունը ստացվել էր Մեծ Բրիտանիայից՝ մեկ միլիոն ֆունտ ստեռլինգ (ոսկով) գումարի չափով զենք, զինամթերք ու հանդերձանք: Ինչ վերաբերում է Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, ապա նա վարում էր չմիջամտելու քաղաքականություն: Պատերազմի ամբողջ ընթացքում խորհրդային կառավարությունը ոչ մի անգամ հանդես չեկավ նոտայով կամ հայտարարությամբ, որ կողմերը վերջ տան պատերազմին և նստեն բանակցությունների սեղանի շուրջը:

1920թ. հոկտեմբերի 30-ին, առանց լուրջ դիմադրության, ընկավ Կարսը: Հակառակորդի ձեռքն ընկան մեծ թվով գերիներ և ռազմավար: Կարսի անկումը փաստորեն որոշեց պատերազմի ելքը: Մի քանի օր անց, նոյեմբերի 7-ին, հանձնվեց նաև Ալեքսանդրապոլը: Լիակատար ջախջախումից խուսափելու և քիչ թե շատ ընդունելի հաշտություն կնքելու նպատակով նոյեմբերի 18-ին կողմերի միջև վերջնական զինադադար կայացվեց, դադարեցվեցին ռազմական գործողությունները: Ընդհանուր առմամբ՝ հայկական բանակը չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ:

Կարսի անկման և Հայաստանի պարտության պատճառները: Կարսի անկման և ընդհանրապես թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտության պատճառներից հիմնականն այն էր, որ բանակը չցուցաբերեց անհրաժեշտ կամք ու մարտունակություն և պատշաճ կազմակերպվածություն: Իր բարձրության վրա չգտնվեց բանակի հրամանատարությունը, մասնավորապես՝ գեներալներ Մ. Սիլիկ-



Կարս

յանը, Ա. Հովսեփյանը (Օսիպով), Դ. Բեկ-Փիրումյանը և ուրիշներ: Մեղքի իր բաժինն ուներ նաև անձամբ զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը: Բացի դրանից՝ բանակի հատկապես ռուսախոս սպայակազմը հանդես չբերեց հայրենիքի ու պետության հանդեպ նվիրվածություն, ինչը բացասաբար էր ազդում զինվորականության վրա:

Բանակում գլուխ էր բարձրացրել դասալքությունը, որում, անշուշտ, իր բացասական դերը խաղաց նաև բոլշևիկների քայքայիչ քարոզչությունը՝ քեմալական «ընկերներին» օգնելու նպատակով, որպեսզի դաշնակցականների կառավարությունը տապալվի և իրենք գան իշխանության:

Ճակատային հրամանատարներից իրենց նվիրվածությամբ կարելի է առանձնացնել Դրոյին և Սեպուհին, ովքեր մարտական հաջողություններ էին արձանագրում իրենց հատկացված ճակատներում, ինչպես նաև գնդապետներ Կուռո (Սուրեն) Թարխանյանին, Հ. Մազմանյանին, ևս մի քանիսին: Հայտնի է, որ Կարսի անկման նախօրյակին ամրոցի մատույցներում գնդերից մեկի զինվորների կողմից հրամանները չկատարելու ու մարտադիրքերը լքելու պատճառով հուսահատությունից ինքնասպանություն է գործել երիտասարդ գնդապետ Հ. Մազմանյանը: Եվ որքան էլ զարմանալի է, Կարսի պաշտպանության ընթացքում, ըստ էության, չի գործել ամրոցի մի քանի հարյուր միավորով հրետանին:

Թուրք-հայկական ճակատում հայկական բանակի պարտության պատճառների թվին պետք է դասել նաև այն, որ հայկական զինուժի մի մասը ստիպված էր գամված մնալ Ղազախի, Բասարգեչարի և Շարուր-Դարալագյազի շրջաններում՝ պաշտպանելու սահմանները բոլշևիկների հաճախացող հարձակումներից: Նշվածներից զատ՝ երկրի պաշտպանության գործին խոչընդոտում էին նաև թուրք-թաթարական շարունակական խռովությունները:

Հասկանալի է, որ այդ ամենը պատճառ հանդիսացան անառիկ համարվող Կարս քաղաք-ամրոցի անկմանը, ուստիև՝ Հայաստանի պարտությանը:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Հայաստանի ռազմական պարտությունը առաջ բերեց քաղաքական ճգնաժամ: 1920թ. նոյեմբերի 23-ին հրաժարական տվեց Հ. Օհանջանյանի բյուրո-կառավարությունը, կազմվեց Ս. Վրացյանի կոալիցիոն կառավարությունը էսէռների մասնակցությամբ, որն էլ նոյեմբերի 25-ին Ալեքսանդրապոլում հաշտության բանակցություններ սկսեց թուրքերի հետ: Հայկական պատվիրակությունը ղեկավարում էր Ալ. Խատիսյանը, իսկ թուրքականը՝ նրանց զորքերի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան: Վերջինս հայկական պատվիրակությանը թելադրեց հաշտության պայմանները, իսկ նոյեմբերի 30-ին Հայաստանին ներկայացրեց վերջնագիր:

Սիմոն Վրացյան (1882–1969)

Հաշվի առնելով հայ ժողովրդի գլխին կախված թուրքական մահացու վտանգը՝ Հայաստանի կառավարությունը իր գոյության մայրամուտին՝ դեկտեմբերի 1-ին հարկադրված ընդունեց թուրքական դաժան վերջնագրի պայմանները: Եվ 1920թ. դեկտեմբերի 2-3-ի գիշերը Ալ. Խատիսյանը ստորագրեց Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը: Սակայն մինչ այդ, դեկտեմբերի 2-ին ՀՀ կառավարությունը արդեն հրաժարական էր տվել, հետևաբար հայկական պատվիրակության ստորագրությունը չուներ իրավական ուժ: Այդուհանդերձ՝ փաստը կատարվել էր, և Հայաստանին էր պարտադրվել մի ծանր պայմանագիր:

Ամենից առաջ՝ Թուրքիայի պարտադրանքով Հայաստանը հրաժարվում էր Սևրի դաշնագրից: Թուրքիային էին անցնում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Վերջինս երբեք չէր եղել Թուրքիայի կազմում: Նախիջևանի մարզը նույնպես անցավ Թուրքիայի հովանու տակ և շուտով (Մոսկվայի պայմանագրով) հանձնվեց Ադրբեջանին: Հայ-թուրքական պետական սահման դարձան Ախուրյան և Արաքս գետերը: Պայմանագրի համաձայն՝ Հայաստանին թույլատրվում էր ունենալ խիստ սահմանափակ թվով զինուժ: Սակայն պետք է արձանագրել, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը իրավական ուժ չի ունեցել, որովհետև չի վավերացվել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Թուրքիայի խորհրդարանների կողմից:

Երևանի հայ-ռուսական բանակցությունները: 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը: Հայաստանի խորհրդայնացումը: 1920թ. հուլիսին Մոսկվայում ընդհատված հայ-ռուսական բանակցությունները վերսկսվեցին Երևանում միայն հոկտեմբերի կեսին, այն ժամանակ, երբ սկսվել էր թուրք-հայկական պատերազմը: Ռուսական կողմից բանակցությունները վարում էր Հայաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը: Լեգրանի դիվանագիտական առաքելության նպատակն էր՝ միջնորդական դեր կատարել Թուրքիայի ու Հայաստանի միջև և, նպաստավոր պայմաններ ստեղծելով, խորհրդայնացնել Հայաստանը:

Բանակցությունների արդյունքում հոկտեմբերի վերջին ստորագրվեց հայ-ռուսական նախնական հաշտության պայմանագիրը: Դրա համաձայն՝ Խորհրդային Ռուսաստանը պետք է ստիպեր թուրքերին զորքը հետ քաշել մինչև 1914թ. նախապատերազմյան ռուս-թուրքական սահմանը, ինչպես նաև ճանաչել ՀՀ անքակտելի իրավունքները Նախիջևանի և Զանգեզուրի նկատմամբ: Իր հերթին՝ Հայաստանը պարտավորվում էր հրաժարվել Սևրի պայմանագրից և տարանցիկ ճանապարհի իրավունք տալ խորհրդային Կարմիր բանակին՝ զորք, զենք և ռազմամթերք փոխադրելու Թուրքիա: Սակայն այդ պայմանագրի նախագիծը հավանության չարժանացավ խորհրդային իշխանությունների կողմից:

Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ժամանակ էր շահում, սպասում, որ Հայաստանը լիակատար ռազմական պարտություն կրի Թուրքիայից, և հարմար պահին խաղաղ ճանապարհով խորհրդայնացնի:

Նոյեմբերի վերջին, երբ Հայաստանը արդեն պարտվել էր, երկրի խորհրդայնացումը դարձավ օրակարգի հարց: Խորհրդային կառավարությունը Բ. Լեգրանի միջոցով պահանջեց Հայաստանի խորհրդայնացում: Մինչ այդ արդեն 11-րդ բանակի զորամասերին հրահանգված էր մտնել Հայաստան և խորհրդայնացնել երկիրը:

Սարգիս Կասյան (1876–1937)

1920թ. նոյեմբերի 29-ին Ադրբեջանում ստեղծված Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն (ՀՌՀԿ) Սարգիս Կասյանի նախագահությամբ և կարմիրբանակայինների ուղեկցությամբ Ղազախից մուտք գործեց Հայաստան՝ Քարվանսարա (Իջևան), և հայտարարություն արեց Հայաստանի խորհրդայնացման մասին: Հայկական զորքը դիմադրություն ցույց չտվեց ռուսական զորամասերին, և հայ ժողովուրդը լուռ համաձայնությամբ ընդունեց խորհրդային իշխանությունը՝ քաջ գիտակցելով, որ դրանով կորցնում է իր անկախ պետականությունը:

Ստեղծված ռազմաքաղաքական ճգնաժամի պայմաններում 1920թ. դեկտեմբերի 1-ին հանրապետության բարձրագույն ղեկավարությունը որոշեց ընդունել «կարմիրների» առաջարկը Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ին, Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումից մի քանի ժամ առաջ Երևանում, Հայաստանի ներկայացուցիչ Դրոյի և Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեգրանի միջև ստորագրվեց համաձայնագիր, որով Հայաստանը հռչակվեց Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն (ՀՍԽՀ): Տեղի ունեցավ իշխանության խաղաղ փոխանցում: Ս. Վրացյանի կառավարությունը կամավոր հեռացավ ասպարեզից, և ամբողջ իշխանությունը անցավ Հայաստանի Հեղկոմի (Հայհեղկոմ) ձեռքը:

Այսպիսով՝ քեմալա-բոլշևիկյան ռազմաքաղաքական հարվածների տակ Հայաստանի Հանրապետությունը անկում ապրեց և խաղաղ ճանապարհով խորհրդայնացվեց: Ստեղծված իրավիճակում Հայաստանը այլընտրանք չուներ: Խորհրդային Հայաստանը դարձավ Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդը:

Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյանի հուշերը Դրոյի մասին

Դրոն տիպիկ հայդուկ էր՝ կամավորական այն բարձր տրամադրությամբ, որ երբեմն հրաշքներ է գործել և տրամադրել երկիրը հույսերի և երազների: Օժտված բնական խելքով և պատերազմական կրակով՝ նա ամբողջ գլխով բարձր էր մեր ռուսախոս գեներալներից: Նա մեծ հայրենասեր էր և կրակոտ գործիչ: Հայ զինվորությունը պատրաստ էր գնալու Դրոյի հետևից և մեռնելու հանուն հայրենիքի և հանուն մեր դարավոր ու արդար դատի...:

ՌՍԴԽՀ և Հայաստանի Հանրապետության համաձայնագրից (2 դեկտեմբերի, 1920թ.)

1. Հայաստանը հայտարարվում է անկախ Սոցիալիստական Հանրապետություն:

2. Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը կազմավորվում է ժամանակավոր Ռազմահեղափոխական կոմիտե, որին անցնում է ամբողջ իշխանությունը Հայաստանում:

3. Ռուսաստանի խորհրդային կառավարությունը ճանաչում է, որ Հայաստանի ՍԽՀ տարածքի կազմում անվիճելի մտնում են՝ Երևանի նահանգը, իր կազմի մեջ մտնող գավառներով, Կարսի մարզի մի մասը, որը կապահովի ռազմական տեսակետից երկաթուղագծին տիրելը Ջաջուռ կայարանից մինչև Արաքս կայարանը, Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը, նույն նահանգի Ղազախի գավառի մի մասը՝ օգոստոսի 10-ի Համաձայնագրի սահմաններում և Թիֆլիսի նահանգի մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին մինչև 1920թ. հոկտեմբերի 28-ը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երբ սկսվեց թուրք-հայկական պատերազմը և ի՞նչ ընթացք ունեցավ: Որո՞նք էին հայկական բանակի պարտության պատճառները:
2. Երբ կնքվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Ներկայացրեք նրա բովանդակությունը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ այն չի կարելի համարել իրավական ուժ ունեցող փաստաթուղթ:
3. Երբ վերսկսվեցին հայ-ռուսական բանակցությունները: Ձեր կարծիքով՝ ի՞նչ նպատակ էր հետապնդում Ռուսաստանը: Ներկայացրեք 1920թ. հոկտեմբերի 28-ի հայ-ռուսական նախնական պայմանագիրը: Փորձեք գնահատել այն:
4. Ինչպե՞ս ընթացավ Հայաստանի խորհրդայնացումը: Դուք համաձա՞յն եք այն կարծիքին, որ խորհրդայնացումը Հայաստանում այլընտրանք չուներ: Փորձեք գնահատել 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը:
5. Լրացրեք «Բաթումի և Ալեքսանդրապոլի պայմանագրերը» համեմատական աղյուսակը:

Համեմատության հարցեր	Բաթումի պայմանագիրը	Ալեքսանդրապոլի պայմանագիրը
Տարեթիվը		
Տարածքները, սահմանները		
Արձագանքներ		

4-րդ թեմայի ամփոփում

1. Նորանկախ Հայաստանի իշխանությունները չկարողացան նորմալ հարաբերություններ հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ: Դրան հակառակ՝ Հայաստանը սերտ կապեր է հաստատում ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ: Դենիկինի զորքի պարտությունից հետո քաղաքական իրավիճակը փոխվում է: Հայաստանը փորձում է հարաբերություններ հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ և հասնել նրա կողմից Հայաստանի անկախության ճանաչմանը: 1920թ. մայիսին Մոսկվա է մեկնում Հայաստանի պատվիրակությունը Լևոն Շանթի գլխավորությամբ: Սակայն բանակցությունները ձախողվում են:
2. 1920թ. սեպտեմբերին Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա, սկսվեց թուրք-հայկական պատերազմը. որը շարունակվեց մինչև նոյեմբերի 18-ը: Հայաստանը պարտություն կրեց:
3. Հայաստանի ռազմական պարտությունը առաջ բերեց քաղաքական ճգնաժամ, և 1920թ. նոյեմբերի 23-ին Հ. Օհանջանյանի բյուրո-կառավարությունը հրաժարական տվեց: Նոր կառավարությունը Ս. Վրացյանի գլխավորությամբ անմիջապես բանակցություններ սկսեց թուրքերի հետ: Հաշտության պայմանագիրը կնքվեց 1920թ. դեկտեմբերի 2–3-ի գիշերը Ալեքսանդրապոլում: Այս պայմանագիրը չափազանց ծանր էր Հայաստանի համար: Հայաստանը հրաժարվում էր Սևրի պայմանագրից, Թուրքիային էին անցնում Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Նախիջևանի մարզի հովանավորությունը: Հայ-թուրքական պետական սահման դառնում էին Արաքս և Ախուրյան գետերը:
4. 1920թ. նոյեմբերի 29-ին Ադրբեջանում ստեղծված Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն Սարգիս Կասյանի գլխավորությամբ և 11-րդ բանակի զորամասերի ուղեկցությամբ Ղազախից մտավ Հայաստան, և Քարվանսարայում (Իջևան) հայտարարվեց Հայաստանի խորհրդայնացման մասին: Դեկտեմբերի 2-ին Երևանում կնքված հայ-ռուսական համաձայնագրով իշխանությունը խաղաղ ճանապարհով հանձնվեց Հայաստանի Հեղկոմին:

ԲԱԺԻՆ 2

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920–1945 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԹԵՄԱ 5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1920–1922ԹԹ.

1. Խորհրդային վարչակարգի հաստատումը

1920թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրով Հայաստանում պաշտոնապես հռչակված խորհրդային իշխանությունը սկզբում գործում էր հեղափոխական կոմիտեների (հեղկոմներ) միջոցով:

Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն (ՀՌՀԿ), որը ստեղծվել էր Խորհրդային Ռուսաստանի օրինակով, դեկտեմբերի սկզբներին ժամանելով Երևան, ամբողջ իշխանությունը վերցրեց իր ձեռքը: Իշխանության այս ձևը հանդես էր գալիս աշխատավորության ու հատկապես բանվոր դասակարգի անունից և ներկայանում էր որպես պրոլետարիատի դիկտատուրա (բռնիշխանություն):

Հեղկոմներ ստեղծվեցին ամբողջ երկրում: Դրանք օրենսդիր և գործադիր մարմիններ էին: Խորհրդային իշխանության քաղաքականությունը իրականում մշակվում և կիրառվում էր կոմունիստական կուսակցության կողմից, որը և մենիշխան կառավարում էր երկիրը:

Վերացվեց հին պետական համակարգը, և ստեղծվեց նորը, կազմավորվեցին նշանակովի տեղական՝ գավառային (9) և շրջանային (ավելի քան 30), ինչպես նաև գյուղական հեղկոմներ: Հայաստանի ՌՀԿ-ի առաջին դեկրետը վերաբերում էր 1920թ. դեկտեմբերի 6-ի Արտակարգ հանձնաժողովի, այսպես կոչված «Չեկայի» (ռուսերեն՝ Չրեզվիչայնայա կոմիսիա) ստեղծմանը, մի մարմին, որը կոմունիստական կուսակցության ձեռքին գործիք ծառայեց իշխանությունն ամրապնդելու և այսպես կոչված հակահեղափոխության դեմ պայքարելու համար: «Չեկան» և նրա աշխատակից «չեկիստը» տարիներ շարունակ մարդկանց մեջ դարձան վախ, սարսափ ու բռնություններ մարմնավորող հասկացություններ: Հին դատական համակարգին փոխարինելու եկան «ժողովրդական դատարանները» և «հեղափոխական տրիբունալը»: Վերացվեցին Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքները, որոնց փոխարինեց Խորհրդային Ռուսաստանի օրենսդրությունը:

Հեղկոմները գոյատևեցին շուրջ մեկ տարի, որից հետո նրանց փոխարինեցին ընտրովի խորհուրդները: Խորհրդային իշխանությունը չուներ սոցիալական լայն հենարան և իր դիրքերի ամրապնդման համար այլախոհների նկատմամբ դիմեց բռնության: Հայաստանում կրկնվում էր Խորհրդային Ռուսաստանի փորձը: Առաջին զանգվածային բռնությունները տեղի ունեցան նոր իշխանության հաստատումից անմիջապես հետո: 1921թ. հունվարի սկզբներին Հայաստանից հեռացվեց Կարմիր բանակի հրամանատար Դրոն իր մի խումբ զինակիցների հետ:

«Ռազմական կոմունիզմ»-ի քաղաքականությունը: ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Հայաստանի Ռազմհեղկոմը տարբեր վերաբերմունք դրսևորեցին Դաշնակցություն կուսակցության և հայ մտավորականության նկատմամբ: Ղեկավար գործիչների մի մասը (Ասքանազ Մռավյան, Սարգիս Կասյան) կողմնակից էր մեղմ վերաբերմունքի, իսկ մյուսը պաշտպանում էր կոշտ քաղաքականությունը: Վերջինների մեջ աչքի էին ընկնում զինվորական գործերի ժողկոմ Ավիս Նուրիջանյանը և Ռուսաստանից գործուղված չեկիստ Գևորգ Աթարբեկյանը: 1920թ. դեկտեմբերին և 1921թ. հունվարին Հայաստանի նախկին բանակի շուրջ 1400 սպաներ ու զորավարներ խստաշունչ ձմեռվա պայմաններում արտաքսվեցին երկրից Ռուսաստանի խորքերը՝ Ռյազան և այլուր:

Բռնություններն ավելի լայն ծավալ ընդունեցին ռազմական կոմունիզմի քաղաքականությունը կիրառելիս: Այդ քաղաքականության էությունն այն էր, որ բնակչությունից (երկրի 80–90 տոկոսը գյուղացիներ էին) բռնագրավումների ձևով վերցվում էր նրա եկամտի և ունեցվածքի ամբողջ ավելցուկը: Հարկերի հավաքման այդ կարգը կոչվեց պարենմասնատրում, արգելվեցին ապրանքաշուկայական հարաբերությունները, սահմանվեց ապրանքների ու առևտրի պետական մենաշնորհ և այլն: Իրականում պարենմասնատրումը վերածվեց ժողովրդի, առաջին հերթին՝ գյուղացիության կողոպուտի: Այն իր նպատակին չհասավ, չբավարարվեցին ո՛չ բանակի, ո՛չ էլ քաղաքի կարիքները: Գյուղացու չնչին ունեցվածքի բռնագրավումը նպաստեց միայն սովի և դժգոհության տարածմանը երկրում: Դժգոհություններն ավելի խորացան, երբ 1921թ. փետրվարին կատարվեցին նոր ձերբակալություններ: Երևանի բանտը նետվեցին քաղաքական գործիչներ, գրողներ, հայդուկապետներ՝ Հ. Օհանջանյանը, Հ. Քաջազնունին, Ավ. Սահակյանը, Ն. Աղբալյանը, Լ. Շանթը, Համազասպը և ուրիշներ: Անբավարարվածությունը համակել էր նաև արևմտահայ գաղթականներին, ովքեր խորհրդային իշխանությունից սպասում էին Հայկական հարցի լուծում, որի ուղղությամբ, սակայն, ոչինչ չէր արվում: Բողոքը և դժգոհությունները սաստկանում էին՝ լցնելով ժողովրդի համբերության բաժակը: Այդ ամենը առաջ բերեց զանգվածների խոր դժգոհությունը, որը վերաճեց ապստամբության:

Փետրվարյան համաժողովրդական ապստամբությունը: Հայաստանում ժողովրդական ապստամբությունը սկսվեց տարերայնորեն: Ժողովրդական

զինված պայքարի գլուխ էին կանգնել նախկին խմբապետները, ընդհատակից դուրս եկած դաշնակցական գործիչները: Փետրվարի կեսերին ապստամբները մի քանի ուղղությամբ շարժվեցին դեպի Երևան, փետրվարի 18-ին գրավեցին Երևանը, բանտերից ազատեցին կենդանի մնացած բանտարկյալներին և տապալեցին խորհրդային իշխանությունը: Նրանց օգնեց այն հանգամանքը, որ ռուսական 11-րդ բանակի զորամասերը Վրաստանի խորհրդայնացմանը մասնակցելու համար դուրս էին բերվել Հայաստանից: Երևանում ստեղծվեց նոր իշխանություն՝ Հայրենիքի փրկության կոմիտեն (ՀՓԿ) Սիմոն Վրացյանի նախագահությամբ: Վերջինս հրապարակեց հրաման, որ «բոլշևիկյան իշխանությունը Հայաստանում վերացված է: Մինչև կառավարության կազմվելը ամբողջ իշխանությունը գտնվում է Հայրենիքի փրկության կոմիտեի ձեռքում»:

Խորհրդային Հայաստանի ղեկավար մարմինները իրենց հավատարիմ ուժերով երկու զրահագնացքով հեռացան Երևանից: Նրանք կենտրոնացան Ղամարլու (Արտաշատ)-Վեդի-Բասար (Արարատ) շրջանում՝ ընկնելով ապստամբների շրջապատման մեջ: Խորհրդային իշխանությունը պահպանվեց հիմնականում Համամլու (Սպիտակ)-Ղարաքիլիսա (Վանաձոր)-Դիլիջան-Շամշադին (Տավուշ) գոտում:



Հովհաննես Թումանյան (1869-1923)

Ռազմական գործողություններն սկզբում ընթանում էին փոփոխակի հաջողությամբ, իսկ 1921թ. փետրվարի 25-ին Վրաստանի խորհրդայնացումից և ռուսական զորամասերի վերադարձից հետո ուժերի հարաբերակցությունը փոխվեց ի վնաս ապստամբների: Ռուսական 11-րդ բանակի ուժերը առաջադրանք ստացան ճնշելու ապստամբությունը և գրավելու Երևանը:

Զոհերից խուսափելու համար 11-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ Գ. Օրջոնիկիձեն վերջնագիր ներկայացրեց Հայրենիքի փրկության կոմիտեին: Այդ օրերին քաղաքացիական, եղբայրասպան կռիվը կանխելու նպատակով Թիֆլիսից Երևան եկավ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Ազգային մեծ գործիչը ցավ էր ապրում ժողովրդի արյունը թափվելու համար: Նա ձմեռային սառնամանիքի պայմաններում, վտանգելով իր կյանքը, գիշերով, գնդակների տարափի տակ անցավ ճակատային գիծը, հասավ Երևան, փորձեց միջնորդական ջանքեր գործադրել՝ հաշտեցնելու կողմերին: Նրա համար գլխավորը համազգային շահերն էին, հաշտությունը, ուստի Կարմիր բանակին ևս կոչ էր անում՝ դադարեցնել անիմաստ պատերազմը: Ի վերջո, ապստամբ ժողովրդի զինված ջոկատները տեղի տվեցին Կարմիր բանակի գերակշիռ ուժերին: Խորհրդային զորքերը ապրիլի 2-ին մտան Երևան, որտեղ վերահաստատվեց խորհրդային իշխանությունը:

Ապստամբները, հաշվի առնելով ուժերի խիստ անհավասարությունը և խուսափելով նոր զոհերից, այլևս դիմադրություն ցույց չտվեցին: Տասը հազարի չափ մարդիկ Բաշ-Գյառնիի վրայով նահանջեցին Զանգեզուր, որտեղ շարունակվում էին Գարեգին Նժդեհի ղեկավարած ինքնապաշտպանական մարտերը: Այսպիսով՝ ընդամենը 43 օր տևեց ապստամբ Հայաստանի գոյությունը: Փետրվարյան ապստամբության արդյունքներից մեկն այն եղավ, որ հնարավոր դարձավ չեկիստների հետագա կացնահարություններից ազատել բանտարկյալների մի զգալի մասին: Բացի դրանից՝ ապստամբությունից խորհրդային իշխանությունը որոշ դասեր քաղեց: Նա սկսեց վարել համեմատաբար ավելի մեղմ քաղաքականություն, ապստամբության մասնակիցները ներում ստացան, աքսորված սպաները հայրենիք վերադարձան:

Գարեգին Նժդեհ
(1886–1955)

Ալեքսանդր Մյասնիկյան
(1886–1925)

Ապստամբության ճնշումից հետո Հայաստանի Ռազմհեղկոմը վերակառուցվեց Ժողովրդական կոմիսարների խորհրդի (ԺԿԽ), որի նախագահ նշանակվեց Ալեքսանդր Մյասնիկյանը: Նա Հայաստան եկավ ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշումով: Մինչ այդ նա արդեն անվանի գործիչ էր և Բելառուսում ու Ռուսաստանում ձեռք էր բերել ղեկավար աշխատանքի մեծ փորձ: Չնայած իր կարճատև (շուրջ մեկ տարի) գործունեությանը՝ նա մեծ դեր խաղաց Հայաստանում քաղաքական լարվածության մեղմացման, հայ մտավորականությանը Հայաստանում համախմբելու, երկիրը խաղաղ շինարարության ուղի փոխադրելու գործում: Այնուհետև Ալ. Մյասնիկյանը ղեկավար աշխատանքի տեղափոխվեց Թիֆլիս (Անդրկովկասյան Դաշնություն): 1925թ. նա զոհվեց ինքնաթիռի վթարից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայաստանի խորհրդայնացումից հետո իշխանության ի՞նչ մարմիններ ստեղծվեցին: Ի՞նչ նպատակ էր հետապնդում Հայաստանի Ռազմհեղկոմի ստեղծումը: Որո՞նք էին խորհրդային իշխանության ձեռնարկած առաջին քայլերը: Ինչպե՞ս կարող եք գնահատել դրանք:
2. Ե՞րբ սկսվեց փետրվարյան ապստամբությունը Հայաստանում, և որո՞նք էին դրա պատճառները:
3. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ հենց փետրվարյան ապստամբության ճնշումից հետո Հայաստանի Ռազմհեղկոմը վերակառուցվեց Ժողովրդական կոմիսարների խորհրդի (ԺԿԽ):
4. Ո՞վ նշանակվեց Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ: Ի՞նչ գիտեք նրա մասին:

2. Հայաստանի սահմանադրությունը: Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Հանրապետության և ԽՍՀՄ ստեղծումը

Հայաստանի առաջին սահմանադրությունը: Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի որոշ կայունացումից հետո խնդիր դրվեց իշխանության ոչ ընտրովի հեղկոմներից անցում կատարելու ընտրովի իշխանության մարմինների՝ խորհուրդների: 1921թ. վերջին (դեկտեմբերին) Հայաստանում անցկացվեցին խորհուրդների ընտրություններ: Սակայն իրենց բովանդակությամբ դրանք ժողովրդավարական չէին, քանի որ ընտրությունների ժամանակ ցուցաբերվել էր դասակարգային խտրական մոտեցում: Օրինակ՝ շահագործողների խավ համարվող հարուստները, կուլակները (ռուսերեն «կուլակ – բռունցք» բառից), առևտրականները, հոգևոր սպասավորները և այլք չունեին ընտրելու և ընտրվելու իրավունք: Բացի դրանից՝ քվեարկությունները անցկացվում էին բաց ձևով, ընտրություններն ուղղակի չէին, այլ՝ բազմաստիճան: Եվ այդ ընտրակարգը պահպանվեց մինչև 1936թ. վերջը:

Այդուհանդերձ, Հայաստանի խորհուրդների առաջին ընտրությունները կայացան: Դրանց արդյունքում 1922թ. սկզբին (հունվար–փետրվար) 252 պատգամավորի մասնակցությամբ տեղի ունեցած Հայաստանի խորհուրդների 1-ին համագումարը քննարկեց մի շարք հարցեր, որոնց մեջ կենտրոնականը Հայաստանի սահմանադրության ընդունումն էր: Փետրվարի 3-ին ընդունվեց ՀՍԽՀ առաջին սահմանադրությունը: Փաստաթղթի վերջին հոդվածները ներկայացնում էին հանրապետության խորհրդանիշները՝ պետական զինանշանը և պետական դրոշը:

Զինանշանի հեղինակն էր նկարիչ Մարտիրոս Սարյանը: Հետագայում (1944թ.) ընդունվեց նաև պետական օրհներգը՝ երգահան Արամ Խաչատրյանի երաժշտությամբ:

Սահմանադրությունը ամրագրում էր Հայաստանի պետականության հիմնական օրենքները: 1922թ. սահմանադրությունն առաջինն էր հայոց պետականության պատմության մեջ:

ՀԽՍՀ զինանշանը և դրոշը

Անդրկովկասյան Դաշնության հիմնումը և ԽՍՀՄ կազմավորումը: Հայաստանի խորհուրդների 1-ին համագումարը քննարկեց նաև Անդրկովկասյան Դաշնության (ֆեդերացիայի) կազմակերպման հարցը: Համագումարը հավանություն տվեց այդ մտահղացմանը: Խորհրդային իշխանության առաջնորդ Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստների առաջ խնդիր էր դնում ստեղծելու հանրապետությունների սերտ դաշինք: Դաշնությունը (ֆեդերացիան) պետական միավորման այն ձևն է, երբ տարբեր ինքնիշխան պետություններ

միավորվում են մի նոր՝ դաշնային պետության մեջ՝ պահպանելով իրենց ինքնիշխանությունը:

1922թ. մարտի 12-ին Թիֆլիսում Անդրկովկասի երեք հանրապետությունների ներկայացուցիչների խորհրդաժողովը հաստատեց դաշնային պայմանագիրը: Դրանով նախ ստեղծվեց Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միությունը (ԱԽՍՀԴՄ), իսկ նույն թվականի դեկտեմբերին 10-13-ը Բաքվում հրավիրված Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը ԱԽՍՀԴՄ-ն վերանվանեց Անդրկովկասի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետություն (ԱՍԴԽՀ) և որոշեց միավորվել ՌՍԴԽՀ-ի, Ուկրաինայի և Բելառուսի հետ՝ կազմավորելու ԽՍՀՄ:

1922թ. դեկտեմբերի 30-ին տեղի ունեցավ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) խորհուրդների 1-ին համագումարը, որին մասնակցում էին խորհրդային 4 հանրապետություններ՝ ՌՍԴԽՀ-ն, Ուկրաինան, Բելառուսը և ԱՍԴԽՀ-ն: Համագումարը ընդունեց ԽՍՀՄ ստեղծման մասին հռչակագիր, և ստորագրվեց համապատասխան պայմանագիր: Հայաստանի ՍԽՀ-ն Անդրկովկասյան Դաշնության միջոցով մտավ ԽՍՀՄ կազմի մեջ: Անդրկովկասյան Դաշնությունը պահպանվեց մինչև 1936թ. դեկտեմբերը:

Անդրկովկասյան Դաշնության և ԽՍՀՄ կազմավորումով փոխվեց Հայաստանի կարգավիճակը: ԽՍՀՄ ստեղծումից հետո նրա ինքնիշխանությունը գրեթե վերացավ: Այսպես, եթե մինչ այդ ՀՍԽՀ-ն դիվանագիտական ու տնտեսական բնույթի կապեր էր իրականացնում Խորհրդային Ռուսաստանի, հարևան Վրաստանի, Ադրբեջանի, Իրանի և այլ երկրների հետ, ապա Անդրդաշնության ու հատկապես ԽՍՀՄ կազմավորումից հետո դրանք վերացվեցին:

ԽՍՀՄ կազմավորումը ազգային հարցի լուծման ձև էր, սակայն այն հիմնովին չլուծվեց:

Այդուհանդերձ՝ ԽՍՀՄ կազմում Հայաստանն ունեցավ մեծ նվաճումներ, նրա պաշտպանությունը դարձավ ապահով: ԽՍՀՄ-ը դարձավ ունիտար (միաձույլ), զորեղ, բազմազգ մի տերություն, որը գոյատևեց շուրջ 70 տարի և ինքնալուծարվեց 1991թ. դեկտեմբերին:

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմանադրությունից

88. ՀՍԽՀ պետական զերբն է՝ Մեծ և Փոքր Մասիսներից վեր, ծագող արեգակի ճառագայթների մեջ, մուրճ և մանգաղ, ստորոտում խաղողի թուփ ողկույզով և տերևներով, աջից և ձախից ցորենի հասկեր և ավելի բարձր՝ ձիթենու ճյուղեր: Գերբի կրկնակի շրջագծերի արանքում արձանագրված է՝ «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն» և «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք»:

89. Իսկ պետական դրոշն է.

ալ կարմիր գույնի կտոր, որի ձախ անկյունում, փայտի մոտ, վերևում զետեղված են ոսկե տառեր՝ ՀՍԽՀ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երբ կայացավ իշխանության մարմինների՝ խորհուրդների ընտրությունը: Ձեր կարծիքով՝ ինչո՞վ էին տարբերվում խորհուրդները հեղկոմներից: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը: Ովքե՞ր են Խորհրդային Հայաստանի զինանշանի և օրհներգի հեղինակները: Ի՞նչ գիտեք նրանց մասին:
2. Ի՞նչ նպատակ էր հետապնդում Անդրկովկասյան Դաշնության կազմակերպումը, երբ հիմնադրվեց այն: Ձեր կարծիքով՝ ճի՞շտ էր Դաշնության մեջ մտնելը:
3. Երբ և ինչպե՞ս կազմավորվեց ԽՍՀՄ-ը: Մինչև երբ գոյություն ունեցավ ԽՍՀՄ-ը:
4. Լրացրե՛ք «Խորհրդային վարչակարգի հաստատումը» թեմայի ժամանակագրական աղյուսակը:

Տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Իրադարձությունը

Տետրում գրե՛ք պատասխանը.

1. ԽՍՀՄ կազմավորմանը մասնակցեցին ... խորհրդային հանրապետություններ:
2. Անդրկովկասյան Դաշնությունը վերացավ ... թվականին:
3. Խորհրդային Հայաստանի առաջին սահմանադրությունը ընդունվեց ... թվականին:
4. Հայկական ԽՍՀ պետական օրհներգի հեղինակն է ...:

5-րդ թեմայի ամփոփում

1. Խորհրդային կարգի հռչակումից հետո իշխանությունը իրականացվում էր հեղկոմների միջոցով: Հայաստանի Հեղկոմը ստեղծեց Արտակարգ հանձնաժողով (Չեկա): Սկսվեցին բռնություններ ու հալածանքներ, որոնց հետևանքով ժողովրդի շրջանում աճեց դժգոհությունը, և նա դիմեց զենքի:
2. 1921թ. փետրվարին սկսվեց ժողովրդական ապստամբություն: Ապստամբները փետրվարի 18-ին մտան Երևան և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Ստեղծվեց Հայրենիքի փրկության կոմիտեն Ս. Վրացյանի գլխավորությամբ: Խորհրդային ուժերին հաջողվեց ճնշել ապստամբությունը և վերահաստատել խորհրդային իշխանությունը:
3. 1921թ. վերջին կայացան իշխանության նոր մարմինների՝ խորհուրդների ընտրությունները, իսկ 1922թ. սկզբին գումարվեց Հայաստանի խորհուրդների 1-ին համագումարը: Համագումարն ընդունեց Խորհրդային Հայաստանի սահմանադրությունը և հավանություն տվեց Անդրկովկասի Դաշնության կազմակերպման հարցին: 1922թ. մարտի 12-ին հիմնադրվեց Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետությունը, որը գոյատևեց մինչև 1936թ.:

4. 1922թ. դեկտեմբերին նախկին Ռուսական կայսրության տարածքի վրա ստեղծված խորհրդային չորս հանրապետությունները միավորվեցին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) մեջ:

ԹԵՄԱ 6 ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 1920–1922ԹԹ.

1-2. Հայաստանի սահմանների հարցը: Պայքար Լոռու, Ջավախքի, Նախիջևանի, Զանգեզուրի և Արցախի համար

1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերը: Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայման նկատմամբ քեմալական Թուրքիան ուներ ժխտողական դիրք: Այդ խնդրում Հայաստանն ապավինում էր Ռուսաստանի օգնությանը: Ավելի ճիշտ՝ վերջինս ստանձնել էր հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը: Թուրքիան իր հերթին 1920–1921թթ. օգտագործում էր Հայկական հարցը՝ զիջումներ կորզելու համար ինչպես Անտանտի երկրներից (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և ուրիշներ), այնպես էլ Ռուսաստանից:

1921թ. սկզբին, երբ ընթանում էր մոսկովյան խորհրդաժողովի նախապատրաստությունը, թուրքական կողմն ամեն ինչ անում էր՝ նախապես իր օգտին լուծելու հարցերը, հակառակ դեպքում սպառնալով անցնել Անտանտի կողմը: Եվ նա հասավ իր նպատակին: Խորհրդային Ռուսաստանը հակված էր հայկական հողերը նվիրաբերելու Թուրքիային: Նա փորձում էր դա արդարացնել համաշխարհային հեղափոխության շահերով: Այդ կապակցությամբ խորհրդային պետության առաջնորդ Վ. Լենինը նշել է, որ իրենք ստիպված են ժամանակավորապես զոհաբերել հայ աշխատավորների շահերը: Կարսի և մյուս տարածքների հարցում Իոսիֆ Ստալինը և մյուս ղեկավարները բազմիցս կրկնել են, որ չարժե կռվել Թուրքիայի հետ:

1921թ. փետրվարի 26-ից մարտի 16-ը Մոսկվայում ընթացան ռուս-թուրքական բանակցությունները: Մոսկվա մեկնած հայկական պատվիրակությանը (ղեկ.՝ Ալեքսանդր Բեկզադյան) թուրքերի պահանջով չթույլատրվեց մասնակցել բանակցություններին: Հայկական պատվիրակությունը պատրաստել էր առաջարկությունների փաթեթ, այն է՝ Կարսի մարզի և Սուրմալուի գավառի վերադարձ, այսինքն՝ 1914թ. սահմանների վերականգնում: Սակայն խորհրդաժողովի ողջ ընթացքում խորհրդային կողմը (ղեկ.՝ Գեորգի Չիչերին) հայկական հողերի որևէ պահանջ չներկայացրեց թուրքական պատվիրակությանը: Թուրքերի կողմից միակ զիջումը վերաբերում էր Բաթումին, որն անցավ Վրաստանին: Փաստորեն տեղի ունեցավ Բաթումի (հօգուտ Վրաստանի) և Սուրմալուի գավառի (հօգուտ Թուրքիայի) փոխանակություն:

1921թ. մարտի 16-ին (իրականում՝ մարտի 18-ին) ստորագրված ռուս-թուրքական պայմանագրով Կարսի մարզը և Սուրմալուի գավառը (վերջինս երբեք չէր եղել Օսմանյան Թուրքիայի կազմում) անցնում էին Թուրքիային և հայ-թուրքական սահմանագիծն անցնում էր Ալեքսանդրապոլի պայմանագրով: Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածով Նախիջևանի մարզը հայտարարվեց Ադրբեջանին ենթակա ինքնավար տարածք, պայմանով, որ չզիջվի մի երրորդ պետության: Ինքնին հասկանալի է, որ երրորդ պետություն ասելով նկատի էր առնվում Հայաստանը:

Հայաստանը ըստ Մոսկվայի 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի

Մոսկվայի պայմանագրով Խորհրդային Հայաստանը մնաց 29 հազար քառակուսի կիլոմետրի սահմաններում (Լոռու և Զանգեզուրի միանալուց հետո): Եվ դա այն դեպքում, երբ մինչև 1920թ. թուրք-հայկական պատերազմը Հայաստանի Հանրապետության իրավական և փաստական իշխանությունը տարածվում էր շուրջ 70 հազար քառակուսի կիլոմետրի վրա: Այսպիսով՝ Մոսկվայի պայմանագիրը ճակատագրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար: Տեղին է նշել, որ նման անարդար պայմանագրի կապակցությամբ ապրիլի 15-ին Հայաստանի արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանը հանդես եկավ բողոք-հայտարարությամբ, որը հետագայում իր համար թանկ արժեցավ:

Քանի որ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով փաստորեն որոշվել էր թուրք-անդրկովկասյան պետական սահմանը, ուստի դրան իրավական ուժ տալու համար պետք էր հրավիրել մի նոր խորհրդաժողով, այս անգամ Թուրքիայի և Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև, որպեսզի վերջիններս ընդունեն և ճանաչեն Մոսկվայի պայմանագրի պայմանները: Եվ այդպես էլ արվեց:

Համաձայն Մոսկվայի պայմանագրի հոդված 15-ի՝ Խորհրդային Ռուսաստանի ջանքերով նախապատրաստվեց և 1921թ. աշնանը (սեպտեմբեր-հոկտեմբեր) սահմանամերձ Կարս քաղաքում գումարվեց թուրք-անդրկովկասյան խորհրդաժողովը: Այստեղ Հայաստանի պատվիրակությունը ղեկավարում էր արտգործժողկոմ Ասքանազ Մռավյանը: Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը նախօրոք հրահանգել էր, որ բանակցությունների ժամանակ պետք է խստիվ հետևել Մոսկվայի պայմանագրի կետերին ու չնեղացնել թուրք ընկերներին: Այդ նպատակով բանակցություններին մասնակցում էր նաև Ռուսաստանի ներկայացուցիչ Յակով Գանեցկին:

Բանակցություններն ընթացան բնավ ոչ հայանպաստ: Հայաստանի պատվիրակը հանդես եկավ մի համեստ խնդրանքով՝ գոնե հայերին վերադարձվեն, թեկուզ վարձակալությամբ (կոնցեսիա), Կողբի աղահանքերը (Հայաստանն այն ժամանակ աղի մեծ պակաս ուներ), ինչպես նաև միջնադարյան Հայաստանի Անի մայրաքաղաքի ավերակները (ընդամենը 84 հեկտար տարածք) զուտ պատմամշակութային ու հնագիտական պեղումների նպատակով: Սակայն թուրքական պատվիրակությունը (ղեկ.՝ Ք. Կարաբեքիր) կտրականապես մերժեց այդ խնդրանքը՝ պատճառաբանելով, թե դա կլինի Մոսկվայի պայմանագրի կոպիտ խախտում, և որ իրենք Անկարայի կողմից լիազորված չեն նման զիջման:

Ի վերջո, հոկտեմբերի 13-ին, Յա. Գանեցկու ճնշմամբ, Ա. Մռավյանը հարկադրված ստորագրեց պայմանագիրը, որով Թուրքիային էին հանձնվում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը, իսկ Ադրբեջանին՝ Նախիջևանի երկրամասը, այլ խոսքով՝ Հայաստանից խլվում էր 30 հազար քառ. կմ-ից ավելի տարածք՝ Հայաստանին թողնելով ընդամենը 29,8 հազար քառ. կմ, ինչպիսին որ շարունակում է մնալ մինչ օրս:

Ահա այսպես «լուծվեց» Հայկական հարցը:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ Խորհրդային Ռուսաստանը, քեմալականների հանդեպ տարված լինելով հեղափոխական ու հակաիմպերիալիստական պայքարի պատրանքներով, առանձնապես շահագրգռված չէր Հայկական հարցի հայանպաստ լուծմամբ: Այդ ժամանակ, թերևս, միակ դրական քայլն այն եղավ, որ խորհրդային իշխանության հարկադրանքի շնորհիվ թուրքերը 1921թ. ապրիլի վերջերին հեռացան Ալեքսանդրապոլից: Դրանից հետո պարզվեց, թե նրանք ինչպիսի կոտորածներ ու ավերածություններ էին գործել:

Իրականությունն այն է, որ քեմալական շարժման ողջ ընթացքում Թուրքիան քաղաքական երկակի խաղ էր խաղում. մի կողմից՝ Անտանտի (Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և մյուսների), իսկ մյուս կողմից՝ Խորհրդային Ռուսաստանի հետ: Թուրքիան, ցանկալի տարածքային զիջումներ կորզելով Ռուսաստանից (հիմնականում հայկական հողերի հաշվին), փոքր ավելի ուշ քաղաքականապես կողմնորոշվեց դեպի Արևմուտք:

Լոռու և Ջավախքի խնդիրը: Տարածքային այս հարցերը կարևոր տեղ էին գրավում հայ-վրացական հարաբերություններում: 1920թ. աշնանը, թուրք-հայկական պատերազմի շրջանում (նոյեմբերի 13-ին), Հայաստանի կառավարությունը, ելնելով տեղի հայության անվտանգության շահերից, համաձայնություն տվեց, որ վրացիները ժամանակավորապես զորք մտցնեն Լոռու «չեզոք գոտի»: Սակայն մենշևիկյան իշխանությունները չէին պատրաստվում հեռանալ չեզոք հայտարարված Լոռուց՝ ձգտելով նրա բռնակցմանը Վրաստանին: Լոռու ազատագրումը ծրագրված էր իրականացնել այնտեղ ապստամբություն կազմակերպելու և դրսից օգնություն ցույց տալու միջոցով: Ապստամբությունը ղեկավարելու համար Ղարաքիլիսայում (Վանաձոր) ստեղծվեց շտաբ Հովսեփ Լազյանի ղեկավարությամբ: Կազմակերպվեց Ղարաքիլիսայի հատուկ նշանակության ջոկատ, որն անմիջականորեն զբաղվելու էր ապստամբությամբ:

Ապստամբությունն սկսվեց 1921թ. փետրվարի 11-ին, տևեց ընդամենը 3 օր և ավարտվեց ապստամբների հաղթանակով: Ազատագրված հայաշատ Լոռին միացավ Խորհրդային Հայաստանին: Միաժամանակ 11-րդ բանակի կողմից խորհրդայնացվեց Վրաստանը (1921թ. փետրվարի 25-ին), որով ավարտվեց Ռուսաստանի ազդեցության տարածումն ամբողջ Անդրկովկասում:

Հայ-վրացական տարաձայնությունների մյուս հարցը Ջավախքի (Ախալքալաքի) պատկանելության խնդիրն էր, որի լուծումը Հայաստանը պահանջում էր կատարել իր օգտին: Սակայն Խորհրդային Վրաստանը համաձայն չէր դրան և պնդում էր՝ քանի որ Լոռին տրվեց Հայաստանին, ուստի Ախալքալաքը պետք է լինի Վրաստանի կազմում: Այդ ոգով էլ ընդունվեց որոշում 1921թ. հուլիսին:

Նախիջևանի հիմնախնդիրը: Հայաստանի խորհրդայնացման մասին Հայհեղկոմի հռչակագրի հաջորդ օրն իսկ՝ նոյեմբերի 30-ին, Ադրբեջանի Հեղկոմն ընդունեց դեկրետ, որ Զանգեզուրը, Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը համարվում են Հայաստանի անբաժանելի մասեր: Ելնելով Ադրբեջանի Հեղկոմի որոշումից՝ Հայաստանի ՍԽՀ Հեղկոմը 1920թ. դեկտեմբերի 24-ին հռչակագիր ընդունեց Նախիջևանի մարզի ինքնորոշման մասին: Սակայն թուրք-թաթարական (ադրբեջանական) ազգայնամոլ առաջնորդների հրահրումով հայոց պատմական Նախիջևանի մարզում թուրքերի օգնությամբ իշխանությունը նվաճեցին թաթար բեկերն ու խաները: Մոսկվայի և Կարսի պայմանագրերով այն անցավ Ադրբեջանին: Տասնամյակներ շարունակ, հատկապես խորհրդային իշխանության տարիներին, մարզում հայերի թիվն անընդհատ նվազել է, տեսակարար կշիռն ընկել: Այժմ Նախիջևանը լրիվ հայաթափված է:

Զանգեզուրի հերոսամարտը (1920թ. վերջ – 1921թ. հուլիս): Գարեգին Նժդեհ: Երկրամասի հետագա ինքնապաշտպանության ու հեռանկարների համար Հայաստանի խորհրդայնացմամբ քաղաքական նոր իրադրություն ստեղծվեց:

Չվստահելով Ադրբեջանի որոշման անկեղծությանը՝ նշանավոր ազգային գործիչ Գարեգին Նժդեհը շարունակում էր գլխավորել Զանգեզուրի ինքնապաշտպանական մարտերը: Նա դեմ չէր հաշտություն կնքելուն, միայն պայման էր դնում, որ Զանգեզուրը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղը միացվեն Հայաստանին:

1920թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում հրավիրվեց համազանգեզուրյան 1-ին համագումարը: Որոշվեց Զանգեզուրը ժամանակավորապես հռչակել ինքնիշխան պետություն՝ Ինքնավար Սյունիք, մինչև նպաստավոր պայմանները հնարավորություն կտային միանալու մայր Հայաստանին: Նժդեհը դարձավ Սյունիքի սպարապետ: 1921թ. ապրիլի 26-ին, դարձյալ Տաթևի վանքում, կայացավ համազանգեզուրյան 2-րդ համագումարը, որտեղ երկրամասը հռչակվեց անկախ և կոչվեց Լեռնահայաստան, ապա վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն (Սիմոն Վրացյանի վարչապետությամբ):

Տաթևի վանքը

Խորհրդային ուժերը պատրաստվում էին վճռական մարտական գործողությունների: Այդ ուժերը 1921թ. հունիս-հուլիսին զարգացրին ռազմական գործողությունները Զանգեզուրի պաշտպանների դեմ: Կրած պարտությունները, ինչպես նաև խորհրդային իշխանության տված հավաստիացումները Նժդեհին հարկադրեցին վայր դնել զենքը: Հուլիսի կեսերին գեներալ Գարեգին Նժդեհը, կայուն երաշխիքներ ստանալով Զանգեզուրը Խորհրդային Հայաստանին միացնելու վերաբերյալ, իր փոքրաթիվ կողմնակիցներով թողեց Սյունիքի ու Հայաստանի սահմանները, անցավ Իրան, ապա բնակություն հաստատեց Բուլղարիայում:

Այսպիսով՝ մեծն Գ. Նժդեհի և երկրամասի քաջարի ժողովրդի համառ պայքարի շնորհիվ Զանգեզուրը միացավ Հայաստանին և դարձավ նրա անկապտելի մասը:

Արցախի հիմնախնդիրը: Բոլորովին այլ ընթացք ունեցավ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը: Գարեգին Նժդեհը շարունակում էր պնդել Հայաստանին Լեռնային Ղարաբաղի միացման պահանջը՝ որպես իր պայքարը դադարեցնելու պայման: Հայաստանի կառավարությունը 1921թ. հունիսի 12-ին ընդունեց որոշում և արեց հետևյալ հայտարարությունը. «Ադրբեջանի ՍԽՀ Հեղկոմի հռչակագրի և Հայաստանի ու Ադրբեջանի հանրապետությունների կառավարությունների միջև եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղն այժմվանից կազմում է Հայաստանի ՍԽՀ անբաժան մասը»: Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսար նշանակվեց Ասքանազ Մռավյանը: Սակայն Ադրբեջանն արգելակեց այդ որոշման կատարումը:

Անդրկովկասի փաստական ղեկավարներ Գ. Օրջոնիկիձեն և Ս. Կիրովը Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին խորհուրդ էին տալիս Ղարաբաղի հարցում ղեկավարվել էթնիկական սկզբունքով, այն է՝ ոչ մի հայկական գյուղ չմիացվի Ադրբեջանին և, հակառակը, ոչ մի ադրբեջանական գյուղ չմիացվի Հայաստանին: Ադրբեջանի ղեկավարությունը ճիշտ չէր համարում էթնիկական սկզբունքով սահմանաբաժանումը: Այնուհետև Լեռնային Ղարաբաղի հարցը փոխադրվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենում, և նրա հուլիսի 4-ի նիստում քվեարկությամբ որոշում ընդունվեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ մտցնելու մասին: Վերջապես ընդունվել էր արդարացի և օրինական որոշում Լեռնային Ղարաբաղի հարցի մասին, որի բնակչության 95 տոկոսը հայեր էին: Այդ որոշման դեմ բողոքեց Ն. Նարիմանովը և հեռախոսով կապվեց Մոսկվայի հետ, որից հետո հարցի լուծումը փոխադրվելու էր ՌԿ(բ)Կ Կենտկոմ (Մոսկվա): Սակայն հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին վերանայվեց այդ որոշումը՝ առանց քվեարկության Լեռնային Ղարաբաղը թողնվեց Ադրբեջանի սահմաններում: Դա պատճառաբանվեց նրանով, որ Լեռնային Ղարաբաղը տնտեսապես կապված է Ադրբեջանին: Լեռնային Ղարաբաղը դառնալու էր ինքնավար մարզ Շուշի կենտրոնով: Որոշման այսպիսի շրջադարձային փոփոխությունը, ըստ երևույթին, կապված էր կուսակցական-պետական բարձրագույն ղեկավարության միջամտության հետ: Այսպիսով՝ ղարաբաղյան հարցի լուծումը պատճառաբանվեց միայն տնտեսական գործոններով՝ անտեսելով ազգայինը, բնակչության բացարձակ մեծամասնություն կազմող հայերի ցանկությունը:

Հայ ժողովուրդը և Հայաստանի ղեկավարությունը, բնականաբար, խիստ դժգոհ էին որոշումից: Հայաստանի ղեկավարությունը ընդամենը համարձակություն ունեցավ հայտարարելու, որ «Ղարաբաղի հարցի լուծումը իրեն չի բավարարում», սակայն դրանից ոչինչ չփոխվեց: Հայրենի երկրին միանալու ձգտումով համակված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի բողոքի ձայնը չլռեց նույնիսկ ստալինյան բռնատիրության տարիներին: Լեռնային Ղարաբաղի խնդրի նման անարդար լուծումը հետագայում հիմք հանդիսացավ արցախյան համաժողովրդական շարժման համար:

Տարածքային հարցերի «լուծումից» հետո հնարավոր համարվեց կատարել Անդրկովկասի հանրապետությունների միջպետական հստակ սահմանագծում: Ստեղծվեցին միայն հայ-վրացական և վրաց-ադրբեջանական պայմանագրեր: Հայ-վրացական պայմանագիրը 1921թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսում ստորագրել են Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը և Վրաստանի Հեղկոմի նախագահ Բուդու Մդիվանին: Դրա համաձայն՝ Վրաստանի կազմում մնաց Ախալքալաքի շրջանը (Ջավախքը), իսկ Հայաստանի կազմում՝ Լոռին:

Ռուս-թուրքական 1921թ. մարտի 16-ի պայմանագրից

Հոդված 3. Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի մարզը, սույն Պայմանագրի 1-ին հավելվածում նշված սահմաններում, կազմի ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության:

Հոդված 15. Ռուսաստանը պարտավորվում է անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում պարտադիր ճանաչվեն սույն Պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջաբար վերաբերում են իրենց:

Ադրբեջանի Հեղկոմի դեկրետից՝ տարածքային վեճերի մասին (30 նոյեմբերի, 1920թ.)

Խորհրդային Ադրբեջանը, ընդառաջ գնալով դաշնակների իշխանության դեմ եղբայրական աշխատավոր հայ ժողովրդի պայքարին, դաշնակներ, ովքեր հոսեցնում և հոսեցրել են մեր լավագույն ընկեր կոմունիստների անմեղ արյունը, հայտարարում է, որ այսուհետև ոչ մի տարածքային հարց չի կարող երկու դարավոր հարևան ժողովուրդների՝ հայերի ու մուսուլմանների փոխադարձ արյունահեղության պատճառ դառնալ: Զանգեզուրի և Նախիջևանի գավառների տարածքը համարվում է Խորհրդային Հայաստանի անբաժան մասը, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում է ինքնորոշման լիակատար իրավունք: Զանգեզուրի սահմաններում դադարեցվում են բոլոր ռազմական գործողությունները, իսկ Խորհրդային Ադրբեջանի զորքերը դուրս են բերվում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին Խորհրդային Հայաստանի առջև ծառացած ազգային-տարածքային հիմնահարցերը: Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Խորհրդային Հայաստանի կառավարությունը դրանց լուծման ուղղությամբ: Ե՞րբ և ինչպե՞ս լուծվեցին տարածքային այդ հարցերը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Մոսկվայի պայմանագրով ոտնահարվեցին հայ ժողովրդի պատմական իրավունքները: Փորձե՛ք գնահատել հայկական պատվիրակության գործունեությունը Կարսի բանակցություններում: Կարո՞ղ եք ապացուցել, որ Զանգեզուրի գոյամարտը ազգային-ազատագրական պայքար էր: Ի՞նչ ընթացք ունեցավ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը: Ի՞նչ եք կարծում՝ ստեղծված իրավիճակում կա՞ր արդյոք տարածքային հիմնախնդիրների լուծման հնարավոր այլընտրանք: Բերե՛ք փաստարկներ ձեր տեսակետի օգտին:
2. Ինչո՞ւ Ռուսաստանը ստանձնեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցի լուծումը: Ի՞նչն էր հայկական տարածքների հարցում Խորհրդային Ռուսաստանի զիջողական դիրքորոշման պատճառը: Ի՞նչ կարող եք ասել Մոսկվայի և Կարսի պայմանագրերի մասին:
3. Լրացրե՛ք «Մոսկվայի և Կարսի կոնֆերանսները» աղյուսակը:

Կոնֆերանսները	Կոնֆերանսների գումարումը	Քննարկված տարածքային հարցերը	Արդյունքները
Մոսկվայի			
Կարսի			

6-րդ թեմայի ամփոփում

1. Խորհրդային իշխանության գլխավոր հոգսը դարձավ Հայաստանի տարածքային հիմնահարցը: 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով Թուրքիային անցան Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը, իսկ Նախիջևանի մարզը դարձավ ինքնավար տարածք Ադրբեջանի խնամակալության տակ:
2. ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը թողնվեց Ադրբեջանի սահմաններում: 1921թ. հուլիսին, շնորհիվ Գարեգին Նժդեհի և նրա գլխավորած հերոսական պայքարի, Զանգեզուրը միացավ Հայաստանին: 1921թ. նոյեմբերի 6-ի պայմանագրով վերջնականապես լուծվեց հայ-վրացական վիճելի տարածքների հարցը: Լոռին մնաց Հայաստանի կազմում, իսկ Ախալքալաքի շրջանը (Ջավախքը) անցավ Վրաստանին:

ԹԵՄԱ 7 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1922–1941ԹԹ.

1. Տնտեսության վերականգնումը: Երկրի արդյունաբերացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը

Նոր տնտեսական քաղաքականությունը (նէպ[1]): Քաղաքացիական կռիվների ավարտից հետո Խորհրդային Հայաստանը ձեռնամուխ եղավ քայքայված տնտեսության վերականգնման գործին: Սակայն դրան մեծապես խոչընդոտում էր ռազմակոմունիստական բռնագրավումների քաղաքականությունը: Այդ իսկ պատճառով 1921թ. գարնանը որոշվեց խորհրդային երկրով մեկ հրաժարվել այդ քաղաքականությունից և անցում կատարել նոր տնտեսական քաղաքականությանը: Նէպի իմաստն այն էր, որ նախկինում գործող պարենմասնատրումը փոխարինվեց մարդկանց աշխատանքը խթանող բնահարկով: Վերջինիս էությունն այն էր, որ գյուղացու վրա նախապես՝ գարնանը, դրվում էր համեմատաբար փոքր չափի բնահարկ, որն աշնանը մթերում էր պետությունը, իսկ ստացված բերքի ավելցուկը գյուղացին կարող էր ազատորեն տնօրինել՝ վաճառել շուկայում, փոխանակել և այլն: Այս հանգամանքը խրախուսում էր անհատ արտադրողին՝ շատ ցանել, շատ բերք ստանալ, որն էլ իր հերթին նպաստելու էր ապրանքաշուկայական հարաբերությունների աշխուժացմանը: Ընդ որում, չքավոր գյուղացիները ազատվում էին բնահարկի գանձումից:

1. Նէպ – նովայա էկոնոմիչեսկայա պոլիտիկա

Հայաստանում նէպին անցումը տեղի ունեցավ աստիճանաբար: Եվ այս քաղաքականությունը, ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում, շարունակվեց մինչև 1920-ական թվականների վերջը, և դա նպաստեց երկրով մեկ տնտեսության աշխուժացմանն ու վերականգնմանը:

Մշակված հողակտորներ Արարատյան դաշտում

Հողային հարցը: Հողի դեկրետն ընդունվեց 1920թ. դեկտեմբերի 28-ին: Այդ դեկրետի համաձայն՝ բռնագրավվեցին կալվածատիրական հողերը, ազգայնացվեցին բոլոր հողերը: Այնուհետև դրանք բաժանվեցին գյուղացիական տնտեսությունների միջև:

Հողային հարցի լուծման կարևոր խնդիրներից էր մեծաթիվ գաղթական բնակչության ապահովումը հողաբաժնով, որը լրացուցիչ դժվարություն էր ստեղծում առանց այն էլ հողասակավ երկրի համար: Ստեղծված պայմաններում հողով բավարարվեցին ոչ բոլոր գյուղացիները: 1929թ. ավելի քան 40 հազար գյուղաբնակներ շարունակում էին մնալ հողազուրկ:

Խորհրդային օրենքներով հողը գյուղացուն ամրագրվում էր ձրի և պարբերական վերաբաժանման սկզբունքով:

Հայաստանի տնտեսության վերականգնմանը նպաստում էր նաև Ռուսաստանի օգնությունը: Առաջին օգնությունը ստացվեց 1921թ. մարտին, երբ ինքնաթիռը Հայաստան փոխադրեց 47 կիլոգրամ ոսկի: Այն օգտագործվեց Իրանից հաց գնելու համար: Ռուսաստանը օգնություն էր ցույց տալիս կադրերով և այլ միջոցներով: Շարունակվում էր Մերձավոր Արևելքի ամերիկյան օգնության կոմիտեի (Ամերկոմ) կողմից ցուցաբերվող բարեգործական օգնությունը: Ամերկոմի մանկատներում սնվում և ուսում էին ստանում ցեղասպանության զոհերի հազարավոր որբ երեխաներ: Ամերկոմի մարդասիրական գործունեությունը տևեց մինչև 1920-ական թվականների վերջը՝ երեխաների չափահաս դառնալը:

Սարգիս Լուկաշին (1883–1937)

Նէպի և մյուս միջոցառումների շնորհիվ վերականգնվեցին գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը: 1928թ. Հայաստանի տնտեսությունը հիմնականում հասավ նախապատերազմյան՝ 1913թ. մակարդակին:

Հայաստանի տնտեսական շինարարության գործում մեծ աշխատանք կատարեց Ժողկոմխորհի նախագահ Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյան), որը շնորհալի տնտեսական գործիչ էր:

Արդյունաբերացման գործընթացը: Ժողովրդական տնտեսության վերականգնումն ավարտելուց հետո ԽՍՀՄ-ում առաջ քաշվեց երկրի արդյունաբերացման խնդիրը: Արդյունաբերացումը նշանակում էր ստեղծել արդյունաբերական ճյուղեր, հէկեր, երկաթուղիներ, հասնել նրան, որ տնտեսության մեջ իշխող դառնա արդյունաբերությունը:



Սևանհէկի բաց ենթակայանը

Արդյունաբերացման քաղաքականության կենսագործումը ենթադրում էր տևական ժամանակաշրջան: Այստեղից էլ ծագեց հնգամյակներով պլանավորումը, որը շարունակվեց նաև հետագայում:

Արդյունաբերացման համար վճռական նշանակություն ուներ էներգետիկայի հարցը: 1920–30-ական թվականներին կառուցվեցին Երևանի ու Լենինականի (Գյումրի), Զորագետի ու Քանաքեռի հէկերը: Վերջինը Սևան-Հրազդան կասկադի առաջին կայանն էր, որը և հաջորդները հետագայում աշխատելու էին Սևանից բաց թողնվող ջրի հաշվին: Ժամանակի ընթացքում լճի մակարդակի իջեցումը ստեղծեց բնապահպանական լուրջ խնդիր, որը շարունակվում է մինչև այսօր:

Լենինականի տեքստիլ կոմբինատի մանվածքային ֆաբրիկան

Հանրապետությունում հիմք դրվեց քիմիական, լեռնահանքային (պղինձ-մոլիբդենի) արդյունաբերությանը: Ղափանում հիմնադրվեց պղնձի հանքահարստացնող ֆաբրիկա: Ալավերդիում կառուցվեցին պղնձաձուլական և քիմիական գործարաններ: Ղարաքիլիսայում (Վանաձոր) հիմնադրվեցին քիմիական ձեռնարկություններ: Երևանում դրվեց արհեստական կաուչուկի գործարանի հիմքը, որն առաջինն էր ԽՍՀՄ-ում: Այն սկսեց արտադրանք տալ 1940թ.: Տասնամյակներ շարունակ Հայաստանը բավարարում էր ԽՍՀՄ կաուչուկի պահանջարկի զգալի մասը: Տեքստիլ արտադրությունը զարգացնելու համար Լենինականում կառուցվեց տեքստիլ կոմբինատը (ֆաբրիկան):



Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը

Հայաստանում երկու հնգամյակների ընթացքում (1928–1937թթ.) գործարկվեցին մեծ և փոքր 44 արդյունաբերական ձեռնարկություններ:

Արդյունաբերացման շնորհիվ 1928–1940թթ. բանվորների թիվն ավելացավ 4,5 անգամ՝ հասնելով 92,4 հազարի:

Նախապատերազմյան երեք հնգամյակների ընթացքում Հայաստանի տնտեսության մեջ առաջատար դարձավ արդյունաբերությունը: Հայաստանի արդյունաբերացման գործում մեծ է Ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի ծառայությունը:

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը: 1928–1929թթ. դժվարություններ էին առաջացել հացամթերումների բնագավառում: Հացի պակասը լրացնելու համար ՀամԿ(բ)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղար Ի. Ստալինի նախաձեռնությամբ հարձակում ծավալվեց կուլակ (ունևոր) գյուղացիների վրա՝ նրանց հացի պաշարները բռնագրավելու համար: Նրանց համար սահմանվեցին նաև խիստ բարձր հարկեր:

Սահակ Տեր-Գաբրիելյան (1886–1937)

Կուսակցությունը գյուղական մասնավոր տնտեսությունները կոլեկտիվացնելու ծրագիր էր մշակում: 1927թ. որոշում ընդունվեց գյուղատնտեսության կոլեկտիվացումը նախապատրաստելու մասին: Հացամթերման դժվարությունների առիթով կուսակցության ստալինյան ղեկավարությունը պահանջեց արագացնել կոլեկտիվացման տեմպերը: Եվ դա այն դեպքում, երբ գյուղացին դեռևս ցանկություն չուներ հրաժարվելու անհատական տնտեսություններից և մտնելու կոլտնտեսություն: Սրանով կոպտորեն խախտվում էր կոլեկտիվացման կամավորության սկզբունքը: Դրանով գործնականում կասեցվեց նեպը և անցում կատարվեց համատարած բռնի կոլեկտիվացման:



Ցանք Արարատյան դաշտում

Բռնության և հարկադրանքի գործադրումը հանդիպեց գյուղացիության ուժեղ դիմադրությանը: Գյուղացիների դժգոհության և հակակոլտնտեսային տրամադրության արտահայտություն էր անասունների լայն տարածում գտած մորթը՝ դրանք կոլտնտեսությանը չհանձնելու համար:

Համատարած կոլեկտիվացման ժամանակ կուսակցությունն անցավ կուլակությանը որպես դասակարգի վերացնելու քաղաքականությանը: Կուլակներին, նրանց ունեցվածքը բռնագրավելուց հետո, ընտանիքով արտաքսում էին գյուղից:

Հայաստանում, նաև ԽՍՀՄ այլ շրջաններում, կոլեկտիվացման հետ մնալու պատճառ համարվեց անհատական տնտեսությունների հարկային թեթև ծանրաբեռնվածությունը՝ կոլտնտեսությունների համեմատությամբ: Ուստի նրանց հարկերը խիստ ծանրացան, որից ելքը գյուղացին տեսավ կոլեկտիվ գրվելու մեջ: Ընդ որում, թեթև չէր նաև կոլտնտեսությունների հարկային բեռը: Նրանցից պետությունը կատարում էր մեծածավալ մթերումներ (հացահատիկի և այլ մթերքների գնումներ): Այդ պատճառով սով առաջացավ ԽՍՀՄ մի շարք շրջաններում:

Եգիպտացորենի կոլտնտեսային դաշտում

1940թ. ուժով և հարկադրանքով հանրապետությունում արդեն ավարտվել էր գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Գոյություն ուներ շուրջ 1000 կոլտնտեսություն:

Գյուղատնտեսության կոլեկտիվացումով մենատնտես գյուղացիությունը վերափոխվեց կոլտնտեսային գյուղացիության: Գյուղացիության մի մասն էլ համալրեց քաղաքային բնակչության, բանվոր դասակարգի շարքերը: Այդ ընթացքում ձևավորվեց նաև գյուղական մտավորականության խավ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ ընդունվեց նէպը Ռուսաստանում, ո՞րն էր դրա էությունը: Ե՞րբ և ինչպե՞ս տեղի ունեցավ անցումը նէպին: Ի՞նչ եք կարծում՝ ճի՞շտ էր նէպի կիրառումը Հայաստանում:
2. Ե՞րբ ընդունվեց հողի դեկրետը, ո՞րն էր դրա էությունը: Փորձե՛ք գնահատել հողային օրենքը (դեկրետը):
3. Նկարագրե՛ք տնտեսության վերականգնման ընթացքը: Թվարկե՛ք այն միջոցառումները և միջոցները, որոնք ապահովեցին տնտեսության վերականգնումը: Ի՞նչ ցուցանիշներով է որոշվում տնտեսության վերականգնումը:
4. Լրացրե՛ք «Տնտեսական միջոցառումներ» համեմատական աղյուսակը:

Քաղաքականությունը	Նմանությունները	Տարբերությունները
Ռազմական կոմունիզմ		
Նէպ		

5. Ի՞նչ է նշանակում արդյունաբերացում, ո՞րն էր դրա նպատակը: Ե՞րբ սկսվեց արդյունաբերացման քաղաքականության կենսագործումը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ ծագեց հնգամյա պլանի գաղափարը:

6. Արդյունաբերության ինչ նոր ճյուղեր ստեղծվեցին:
7. Ինչ է նշանակում գյուղատնտեսության կոլեկտիվացում: Փորձեք ապացուցել կոլեկտիվացման անհրաժեշտությունը: Ինչպիսին է ձեր վերաբերմունքը կուլակների նկատմամբ գործադրված բռնությունների կապակցությամբ: Ե՞րբ ավարտվեց կոլեկտիվացումը:
8. Լրացրեք «Արդյունաբերացում և կոլեկտիվացում» աղյուսակը:

Անվանումները	Նպատակը	Իրականացման փուլերը, ձևերն ու մեթոդները	Արդյունքները և հետևանքները
Արդյունաբերացում			
Կոլեկտիվացում			

2. *Հասարակական-քաղաքական կյանքը: Խորհրդային Հայաստանը՝ միութենական հանրապետություն*

Կոմունիստական ամբողջատիրության հաստատումը: Թեև 1920թ. դեկտեմբերի 2-ի Դրո–Լեգրան համաձայնագրով Հայաստանի Հեղկոմը պարտավորվում էր, որ խորհրդային կառավարությունը պետք է լիներ կոալիցիոն (5 բոլշևիկ և 2 ձախ դաշնակցական), սակայն Հայաստանի կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ) Ռուսաստանի կոմկուսի օրինակով, իր մենիշխանությունը հաստատելու համար, չկատարեց համաձայնագրի այդ կետը: Ավելին, սկսվեցին հալածանքներն ու հետապնդումները Դաշնակցության և մյուս այլախոհ կուսակցությունների հանդեպ: Դրա համար 1920-ական թվականներին կազմակերպվեցին կեղծ մեղադրանքներով հրապարակային դատավարություններ ու լուծարման համագումարներ: Գլխավոր հարվածն ուղղվեց առավել ազդեցիկ Դաշնակցություն կուսակցության դեմ: 1923թ. Երևանում կայացած Դաշնակցության այսպես կոչված ինքնավերացման համագումարը դատապարտեց կուսակցության անցյալ գործունեությունը և որոշում ընդունեց իր գոյությունը Խորհրդային Հայաստանում դադարեցնելու մասին: Դաշնակցությունն իր գործունեությունը շարունակեց արտերկրում՝ Սփյուռքում: Դադարեցրին իրենց գործունեությունը նաև մենշևիկները, էսէռները, հնչակյանները, Հայ ժողովրդական կուսակցությունը: ՀամԿ(բ)Կ-ն շարունակեց մնալ միակ և կառավարող կուսակցությունը խորհրդային երկրում: Չէին ընդունվում այլախոհությունը, այլակարծությունը: 1924թ. Լենինի մահից հետո նրա գործի շարունակողը եղավ

Իոսիֆ Ստալին

Ի. Ստալինը: Նրան հաջողվեց ասպարեզից հեռացնել իր գլխավոր քաղաքական հակառակորդներին սեփական կուսակցության մեջ: Միակուսակցական ամբողջատիրական համակարգի պայմաններում առաջնորդ դարձած Ի. Ստալինի շուրջը շուտով ձևավորվեց պաշտամունք, ԽՍՀՄ-ում ձեռք բերված բոլոր հաջողությունները և նվաճումները վերագրվեցին նրան:

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը փաստորեն զուրկ էր լիիրավ ինքնուրույն քաղաքականություն մշակելու և իրականացնելու հնարավորությունից: Նա ենթակա և հաշվետու էր կենտրոնին՝ Մոսկվային: Դրա հետ մեկտեղ՝ Հայաստանի կուսակցական ղեկավարությունը իր ձեռքում էր կենտրոնացրել հանրապետության ղեկավարման ու կառավարման ամբողջ համակարգը: Փաստորեն պետական իշխանությունը ամբողջովին կուսակցականացված էր:

Աշոտ Հովհաննիսյան (1887–1972)



Աղասի Խանջյան (1901–1936)

1920–1930-ական թվականներին ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարներ են եղել և գործել են համեմատաբար տևական Աշոտ Հովհաննիսյանը (1922–1927) (հետագայում՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, անվանի պատմաբան) և Աղասի Խանջյանը (1930–1936): Խորհրդային բարդ ու հակասական հասարակական-քաղաքական կյանքի պայմաններում, այնուամենայնիվ, նշանակալից է նրանց վաստակը երկրի տնտեսական ու մշակութային վերելքի և ազգային կադրերի աճի ու դաստիարակության գործում:

Քաղաքական բռնությունները և հալածանքները: Բոլշևիկների կուսակցության ղեկավարությունը իշխանությունը պահելու ելքը տեսնում էր ոչ թե ժողովրդավարության, այլ՝ հարկադրանքի մեջ: Նրանք ղեկավարվում էին ստալինյան այն կեղծ դրույթով, թե սոցիալիզմի կառուցմանը համընթաց դասակարգային պայքարը սրվելու է, ուստի նույնիսկ ֆիզիկապես պետք է վերացնել դասակարգային ու գաղափարական բոլոր թշնամիներին: Այդ հիման վրա էլ ծավալվեցին զանգվածային բռնաճնշումները, որոնք իրենց գագաթնակետին հասան 1937–1938թթ.: Առաջին զանգվածային բռնաճնշումները գործադրվեցին հայ սպայության նկատմամբ: Աքսորյալների թվում էին գեներալներ Թովմաս Նազարբեկյանը, Մովսես Սիլիկյանը և ուրիշներ:

Դաշնակցության «ինքնավերացման» համագումարից հետո՝ 1920-ական թվականների երկրորդ կեսին և հետագայում մի քանի շուրջկալներ կազմակերպվեցին, և հարյուրավոր դաշնակցականներ, որոնց մի մասը իսկապես հրաժարվել էր կուսակցությունից, մեկուսացվեցին:

1930 թվականից, երբ «համատարած կոլեկտիվացման» պատճառով խիստ սրվել էր տնտեսական ու քաղաքական իրադրությունը, բռնությունները նոր թափ առան: Շատ գյուղացիներ պիտակավորվում էին «կուլակներ» անվամբ, արտաքսվում, ունեզրկվում, ենթարկվում հալածանքների, բանտարկվում ու աքսորվում:



Էջմիածնի Մայր տաճարը

Բռնությունը և հալածանքը չշրջանցեցին նաև եկեղեցին: Հայաստանում փակվեցին շուրջ 800 եկեղեցի, անգամ փորձ արվեց փակելու Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Բռնություն գործադրվեց շատ հոգևորականների նկատմամբ: Պետանվտանգության մարմինները չխնայեցին Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն 1-ին Մուրադբեկյանին (1932–1938), որը խեղդամահ արվեց:

1930-ական թվականների կեսերին, երբ Ի. Ստալինի պաշտամունքը լիովին ձևավորվել էր, երկրում ծավալվեց կամայականությունների ու բռնությունների նոր ալիք:

Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն 1-ին Մուրադբեկյան (1873-1938)

ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար, 35-ամյա Աղասի Խանջյանի սպանությունը, որը տեղի ունեցավ 1936թ. հուլիսին Թիֆլիսում, օգտագործվեց բռնությունները ծավալելու համար: Ա. Խանջյանը դարձավ ՀամԿ(բ)Կ Անդրկովկասի երկրամասային կոմիտեի քարտուղար Լ. Բերիայի զոհը:

Ներքին գործերի ժողկոմ Խաչիկ Մուղդուսին հորինեց մեկ այլ կեղծ գործ, ըստ որի՝ իբր 1920-ական թվականների կեսերից գործել է ազգայնական հովերով տարված մի գաղտնի գրական խումբ, որի մեջ ընդգրկված են եղել գրողներ Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Մկրտիչ Արմենը, Գուրգեն Մահարին և ուրիշներ: Բռնաճնշումներ իրականացնելու համար կեղծ և հորինված մեղադրանքներ էին ներկայացվում անգամ կուսակցական ու պետական ճանաչված գործիչներին:

Հայտնի է, որ 1937թ. օգոստոսին՝ հարցաքննության ժամանակ 3-րդ հարկի լուսամուտից իրեն դուրս նետեց (կամ դուրս նետեցին) Հայաստանի կառավարության նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը: Այդ առիթով Ի. Ստալինը նամակով դիմեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյին՝ պահանջելով խստացնել պայքարը «հայ ժողովրդի թշնամիների» դեմ, ովքեր իբր թե

ազատորեն թրև են գալիս և վնաս հասցնում ժողովրդական տնտեսությանը: Դրա հետևանքով նորից ուժեղացան բռնությունները, որոնք տեղի էին ունենում նաև Մոսկվայից իջեցված պատվերներով: Վերևից լիմիտավորվում էր, թե այս կամ այն հանրապետությունը որքան «ժողովրդի թշնամիներ» պետք է բացահայտի:

Պատժիչ մարմինների, մատնիչների աչքից չվրիպեցին նաև գյուղատնտեսության, դպրոցի աշխատողներ, ուսանողներ, զինվորականներ և այլք: Երկիրը պատված էր վախի ու կասկածի մթնոլորտով:

Միայն 1937թ. Հայաստանում ձերբակալվել է 5000 մարդ: Նրանց մեծամասնության համար ընդունվել է գնդակահարության որոշում: Դատավարությունները անցկացվում էին հիմնականում զինվորական տրիբունալների և այսպես կոչված եռյակների միջոցով՝ առանց որևէ իրավական նորմի պահպանման:

Բռնաճնշումների ծավալումը չէր կարող շարունակվել անվերջ, մանավանդ ԽՍՀՄ միջազգային դրության սրվելու պայմաններում: Ուստի 1938թ. աշնանից երկրում սկսվեցին որոշ մեղմացումներ:

Ընդհանուր առմամբ 1920–1953թթ. Հայաստանում անհիմն կերպով բռնաճնշման ենթարկվեց շուրջ 42 հազար մարդ, որոնց մի զգալի մասը գնդակահարվեց: Բռնաճնշումները ավարտվեցին Ի. Ստալինի մահից հետո (1953):

Խորհրդային երկրում տեղի ունեցած բռնաճնշումները պետք է բացատրել ոչ միայն Ստալինի անձով, այլև խորհրդային-կոմունիստական ամբողջատիրական համակարգով:

Խորհրդային Հայաստանը՝ միութենական հանրապետություն: ՀԽՍՀ նոր սահմանադրությունը: 1930-ական թվականների կեսերին կոմունիստական կուսակցության ղեկավարությունը եկավ այն եզրակացության, որ երկրում տեղի են ունեցել այնպիսի արմատական տեղաշարժեր, որոնք պետք է իրենց արտահայտությունը գտնեն ԽՍՀՄ սահմանադրությունում:

ԽՍՀՄ նոր սահմանադրությունը, որն ընդունվեց 1936թ. դեկտեմբերի 5-ին, հռչակեց «սոցիալիզմի հաղթանակը»՝ որպես երկրի կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունների հանրագումար: Սոցիալիզմի հաղթանակ ասելով հասկացվում էին երկրի արդյունաբերացում, գյուղատնտեսության կոլեկտիվացում, մշակութային հեղափոխության հաղթանակ:

ԽՍՀՄ հասարակարգի տնտեսական հիմքը արտադրության միջոցների համապետական սեփականությունն էր:

Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ու կառավարման մեջ իշխող էր մնում վարչահրամայական համակարգը:

ԽՍՀՄ նոր սահմանադրությամբ լուծարվեց Անդրկովկասյան Դաշնությունը, որը կատարել էր իր պատմական դերը: Հայկական, Վրացական ու Ադրբեջանական հանրապետությունները, որպես առանձին պետական միավորումներ, ուղղակի մտան ԽՍՀՄ կազմի մեջ: ԽՍՀՄ սահմանադրության հիման վրա մշակվեցին և ընդունվեցին միութենական բոլոր 11 հանրապետու-

թյունների սահմանադրությունները: Հայաստանի նոր սահմանադրությունն ընդունվեց 1937թ. մարտին: Այն ամրագրեց «Հայաստանի սոցիալիստական պետության» կայացումը: Նոր սահմանադրությամբ Հայաստանը վերանվանվեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (ՀԽՍՀ): Հայկական ԽՍՀ նոր սահմանադրությամբ արձանագրվեց, որ հանրապետության պետական լեզուն հայերենն է: Բարձրագույն իշխանությունը կոչվեց Գերագույն խորհուրդ: Նոր սահմանադրությամբ սահմանվեց ավելի ժողովրդավարական ընտրական համակարգ: Նոր ընտրակարգով ընտրական հասակի բոլոր քաղաքացիները ստանում էին ընտրելու և ընտրվելու իրավունք: Սակայն պատգամավորական թեկնածուների առաջադրումը և ընտրությունները անցկացվելու էին կուսակցության հսկողությամբ:

Նոր օրենքով 1937թ. դեկտեմբերի 12-ին կայացան բարձրագույն իշխանության՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի (Միության և Ազգությունների պալատներից բաղկացած) ընտրությունները: Հայկական ԽՍՀ-ից ընտրվեցին 4 պատգամավոր (ըստ բնակչության թվի) Միության պալատի և 25 պատգամավոր (որպես միութենական հանրապետություն) Ազգությունների պալատի համար:

Գրիգոր Հարությունյան (1900–1957)

ՀԽՍՀ նոր սահմանադրությամբ 1938թ. հունիսի 12-ին տեղի ունեցան Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները, որոնց արդյունքով ձևավորվեց նոր Գերագույն խորհուրդ: Գերագույն խորհրդի նախագահության նախագահ ընտրվեց Մացակ Պապյանը, իսկ Ժողկոմխորհի նախագահ՝ Արամ Փիրուզյանը: Մինչ այդ, 1937թ., ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար էր ընտրվել Գրիգոր Հարությունյանը, որը մեծ ավանդ ունի հանրապետության տնտեսության ու գիտամշակութային կյանքի զարգացման գործում: Սակայն Գերագույն խորհրդի իրավասությունները շատ կողմերով սահմանափակ ու ձևական էին, քանզի ամբողջատիրական հասարակարգում երկրի քաղաքական, իրավական, վարչական, գործադիր, տնտեսական և այլ իշխանությունը իրականում գտնվում էր կոմունիստական կուսակցության ձեռքում:

1940թ. լրացավ Հայաստանի խորհրդայնացման 20 տարին: Այդ ընթացքում ԽՍՀՄ կազմում հայ ժողովուրդն ապրեց խաղաղության և ստեղծարար աշխատանքի ժամանակաշրջան, նվաճումներ ձեռք բերվեցին տնտեսության ու մշակույթի բնագավառում, տեղի ունեցավ բնակչության աճ ինչպես հայրենադարձության, այնպես էլ բնական աճի շնորհիվ: 1939թ. մարդահամարի տվյալներով՝ հանրապետության բնակչության թիվը հասել էր 1 մլն 282 հազարի, որը 1926թ. մարդահամարի տվյալներից ավելի էր 45,5 տոկոսով: Ըստ որում, ԽՍՀՄ-ում հայերի ընդհանուր թիվը կազմում էր 2 152 860 մարդ: Հայաստանից հետո հայերի թիվը մեծ էր, հաջորդաբար, Ռուսաստանում, Վրաստանում և

Ադրբեջանում: Նշված ժամանակաշրջանում մեծացավ քաղաքային բնակչության տեսակարար կշիռը՝ որպես արդյունաբերացման արդյունք: Որակական փոփոխություններ տեղի ունեցան հասարակության սոցիալական կառուցվածքում: Հասարակության կազմը հիմնականում ներկայացնում էին բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը:

Վերը նշված դրական տեղաշարժերի կողքին 1920–1930-ական թվականներին տեղի էին ունենում բացասական երևույթներ՝ մարդկանց ազատությունների սահմանափակումներ, մասնավոր սեփականության վերացում, քաղաքական կուսակցությունների ու այլախոհության արգելում, մարդկանց հանդեպ քաղաքական հալածանքներ և բռնություններ, բանտ ու աքսոր, ընդհուպ հազարավոր անմեղ մարդկանց գնդակահարություններ, եկեղեցիների ավերումներ և այլն:

Ահա այդպես ոչ միանշանակ էր խորհրդային երկրի ու հասարակության կյանքը, երբ սկսվեց Երկրորդ աշխարհամարտը:

ՀԿ(բ)Կ 7-րդ համագումարի բանաձևից (1930թ. մայիս)

Կուսակցությունը պետք է շարունակի համառ ու հետևողական անհաշտ պայքարը դասակարգային թշնամու դեմ, բոլոր հակահեղափոխական գաղափարախոսությունների, մասնավորապես բուրժուական նացիոնալիզմի դեմ, նրա բոլոր տարատեսակներով հանդերձ, հատկապես ընդդեմ իմպերիալիստական բուրժուազիայի հավատարիմ գործակալ դաշնակիզմի, որը ներկայումս, սրվող ռազմական վտանգի պայմաններում, նորից գլուխ է բարձրացնում ինչպես արտասահմանում, այնպես էլ երկրում, հենվելով կուլակության կատաղի դիմադրության վրա: Հարկավոր է լրիվ մերկացնել բոլոր հակահեղափոխական գաղափարախոսությունների արմատները, նրանց պայքարի բոլոր եղանակները և նոր պայմաններում ժողովրդական զանգվածներին տիրելու համար հանդես գալու փորձերը:

Ի. Վ. Ստալինի նամակից՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյին (8 սեպտեմբերի, 1937թ.)

Տրոցկիստները և այլ հակակուսակցական տարրերը Հայաստանի կուսակցական ղեկավարության կողմից անհրաժեշտ հակահարված չեն ստանում:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ Ժողկոմխորհը չեն կարող թույլ տալ, որ հայ ժողովրդի թշնամիները ազատորեն թրև գան Հայաստանում, մնաս հասցնեն ժողովրդական տնտեսությանը և կեղեքեն գյուղացիությանն ու բանվոր դասակարգին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ ՀԿ(բ)Կ-ն խախտեց 1920թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը: Նկարագրե՛ք, թե ինչպես հաջողվեց բոլշևիկներին՝ հաշվեհարդար տեսնել Դաշնակցության և մյուս կուսակցությունների հետ: Դուք ընդունո՞ւմ եք պետության ղեկավարի անձի պաշտամունքը: Ձեր կարծիքով՝ ի՞նչ հետևանքներ կարող է այն ունենալ:

2. Ինչ է քաղաքական բռնությունը: Երբ են սկսվել քաղաքական բռնությունները և ինչ ընթացք են ունեցել: Ինչպիսին է ձեր վերաբերմունքը քաղաքական բռնությունների նկատմամբ: Ըստ ձեզ՝ դրանք արդարացում ունեն: Հիմնավորեք ձեր տեսակետը:
3. Ձեր կարծիքով՝ ինչով էր պայմանավորված ԽՍՀՄ նոր սահմանադրության անհրաժեշտությունը: Երբ ընդունվեց և ինչ ամրագրեց այդ սահմանադրությունը: Ինչու ԽՍՀՄ նոր սահմանադրությամբ լուծարվեց Անդրկովկասի Դաշնությունը:
4. Երբ լրացավ Հայաստանի խորհրդայնացման 20 տարին: Թվարկեք այն փոփոխությունները, որոնք տեղի ունեցան Հայկական ԽՍՀ-ում այդ տարիների ընթացքում:
5. Լրացրեք «Հայկական ԽՍՀ-ն 1930-ական թթ.» ժամանակագրական աղյուսակը:

Տարեթիվը	Իրադարձությունը

Տետրում գրեք պատասխանը.

1. 1936թ. սպանված ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղարն էր ...:
2. Դաշնակցության «ինքնավերացման» համագումարը տեղի ունեցավ ...:
3. ՀամԿ(բ)Կ-ի մենիշխանությունը 1929-1930-ական թթ. վերաճեց ...:

7-րդ թեմայի ամփոփում

1. 1921թ. քաղաքացիական կռիվների ավարտից հետո Խորհրդային Հայաստանը ձեռնամուխ եղավ քայքայված տնտեսության վերականգնման գործին: Նէպի շնորհիվ Հայաստանի տնտեսությունը 1928թ. հասավ նախապատերազմյան՝ 1913թ. մակարդակին:
2. Ժողովրդական տնտեսության վերականգնումը հնարավորություն տվեց անցնելու տնտեսության սոցիալիստական վերակառուցմանը: Այդ նպատակով 1920-30-ական թթ. իրականացվեց արդյունաբերացման քաղաքականություն: Կառուցվեցին բազմաթիվ հէկեր, արդյունաբերական ձեռնարկություններ:
3. 1928-1929թթ. սկսվեց գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Գյուղացիների նկատմամբ գործադրվեցին բռնություններ և հարկադրանք: Գործադրված միջոցառումների արդյունքում 1940թ. ավարտվեց կոլեկտիվացումը Հայաստանում, ստեղծվեց շուրջ 1000 կոլտնտեսություն:
4. Իշխանության գալուց հետո բոլշևիկները պայքար սկսեցին երկրում կոմունիստական մենիշխանություն հաստատելու համար: Բռնությունների հետևանքով Դաշնակցությունը, Հնչակյան և մյուս կուսակցությունները վերացվեցին: Կոմունիստական կուսակցությունը մնաց միակ և կառա-

վարող կուսակցությունը: Ձևավորվեց ու ամրապնդվեց Ստալինի անձի պաշտամունքը:

5. 1920-30-ական թթ. ամբողջ ԽՍՀՄ-ում, այդ թվում նաև Հայաստանում, լայն թափ ու ծավալ ստացան բռնությունները, որոնք գագաթնակետին հասան 1936-1938թթ.:
6. 1920-30-ական թթ. ԽՍՀՄ-ում կատարված արմատական փոփոխություններն իրենց արտացոլումը գտան 1936թ. ընդունված նոր սահմանադրության մեջ, որը հռչակեց «սոցիալիզմի հաղթանակը»:
7. ԽՍՀՄ նոր սահմանադրությամբ լուծարվեց Անդրկովկասյան դաշնությունը, և Հայաստանը, որպես միութենական հանրապետություն, ուղղակիորեն մտավ ԽՍՀՄ կազմի մեջ: 1940թ. նշվեց Հայաստանի խորհրդայնացման 20 տարին:

ԹԵՄԱ 8 ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920–1945ԹԹ.

1. *Սփյուռքի առաջացումը*

Մարդկանց զանգվածային արտագաղթը հայրենիքից պայմանավորված է լինում տնտեսական, ռազմաքաղաքական, կրոնական և որոշ այլ գործոններով: Այդ նույն գործոններով էին հիմնականում պայմանավորված նաև հայերի գաղթերը իրենց բնաշխարհից դարերի ընթացքում: Պատմությանը հայտնի է, սակայն, հայրենիքից զանգվածային արտագաղթի ևս մեկ տեսակ, որը պայմանավորված է զուտ ազգային գործոնով: Նման արտագաղթը բնորոշ է պետականությունը կորցրած ժողովուրդներին, երբ նրանք ամբողջովին կամ նրանց հիմնական հատվածը բռնագաղթեցվում են հայրենիքից օտարազգի իշխանությունների կողմից: XX դ. սկզբին պատմական դեպքերի նմանօրինակ ընթացքը հանգեցրեց Սփյուռքի առաջացմանը:

Հայ գաղթականներ

Օսմանյան կայսրության իշխանությունները 1915թ. երկրի ողջ տարածքով իրականացրին հայերի ցեղասպանություն և բռնագաղթ, որոնց հետևանքով հայությունը կորցրեց շուրջ 1,5 մլն մարդ, իսկ մնացած մասը բռնագաղթեց հայրենիքից և ստիպված էր հաստատվել տարբեր երկրներում: Ի տարբերություն հայ գաղթականության պատմության նախորդ շրջանի՝ 1915–1922 թթ. հետո առաջին անգամ էր, որ՝

ա) հայկական ազգային տարածքներում՝ Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում հայ բնակչությունը գրեթե լրիվ վերացավ,

բ) հայ ժողովրդի հիմնական զանգվածը հայտնվեց հայրենիքից դուրս՝ որպես ազգային փոքրամասնություն աշխարհի տարբեր երկրներում,
գ) ինչպես բռնագաղթածները, այնպես էլ նրանց հետնորդները զրկվեցին հայրենիք՝ Արևմտյան Հայաստան և Կիլիկիա վերադառնալու հնարավորությունից:

Գիտակցելով կատարվածի ճակատագրական նշանակությունը՝ հայերը աշխարհով մեկ սփռված այդ որակապես նոր գաղթականությանը անվանեցին «Սփյուռք»:

Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող Սիրիա և Միջագետք (այժմյան Իրաք) բռնագաղթած, իրենց ողջ ունեցվածքը կորցրած հայերի հիմնական զանգվածը Առաջին աշխարհամարտից հետո հաստատվեց նույն այդ երկրներում, ինչպես նաև Լիբանանում, Պաղեստինում, Եգիպտոսում, իսկ քիչ ավելի ուշ՝ Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և այլն: Նշված արաբական երկրներում, որոնք զարգացման աստիճանով քիչ էին տարբերվում Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից, հայերը շարունակեցին զբաղվել արհեստներով և առևտրով, մասամբ նաև գյուղատնտեսությամբ: Նրանց քրտնաջան աշխատանքը և տեղացիների ընդհանուր առմամբ բարյացակամ վերաբերմունքը նպաստեցին, որ վտարանդի հայերը համեմատաբար շուտ հարմարվեն նոր պայմաններին: Սկզբնական շրջանում հայ գաղթականների վիճակը ծանր էր նաև Արևմուտքի արագ զարգացող երկրներում՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Կանադայում: Չունենալով անհրաժեշտ մասնագիտական հմտություններ՝ նրանք ստիպված էին հիմնականում կատարել որակավորում չպահանջող, ծանր և ցածր վարձատրվող աշխատանքներ: Փախստականները չունեին իրական պատկերացում տեղի ժողովուրդների ապրելակերպի մասին, որը հաճախ խորթ և անընդունելի էր իրենց համար: Արևմուտքի երկրների ժողովուրդները, իրենց հերթին, անծանոթ լինելով հայերին, նրանց վրա էին տարածում «ասիացիների» մասին ունեցած իրենց բացասական պատկերացումները: Դրա դրսևորումներից էին 1910-1930թթ. հայերի քաղաքացիական իրավունքների՝ քաղաքի կենտրոնում բնակվելու, հող գնելու ու վաճառելու և այլ սահմանափակումները ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի հայաշատ Ֆրեզնոյում: Այդ առումով շատ ավելի ծանր էր հայերի վիճակը եվրոպական երկրներում, ուր նրանք դասվեցին այսպես կոչված «անհայրենիք» (ապատրիդ)՝ քաղաքացիություն չունեցողների շարքը՝ զուրկ քաղաքացիական տարրական իրավունքներից: Փարիզում իր կյանքի վերջին տարիները ապրած Կոմիտասին նվիրված պոեմում Ե. Չարենցը գրում էր.

Դու պանդուխտի տարագիր
Միրսն ես երգել կարոտող՝
Անհայրենիք արագիլ՝
Կապված հուշի կարոտով:

Երբ պարզ դարձավ, որ Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածները չեն իրագործվելու, Անտանտի երկրները Լոնդոնի կոնֆերանսում (1921, փետրվար-մարտ) հնչեցրին Թուրքիայի տարածքում այսպես կոչված «հայկական ազգային օջախ» ստեղծելու գաղափարը: Այդ գաղափարը, սակայն, կտրականապես մերժվեց Թուրքիայի կողմից, իսկ արդեն Լոզանի կոնֆերանսում (1922-ի նոյեմբեր-1923-ի հուլիս) նրա և Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և եվրոպական այլ երկրների հետ կնքած պայմանագրում հիշատակություն անգամ չկար հայերի, Հայաստանի մասին: Դրա փոխարեն առաջ քաշվեց «հայ գաղթականների» հարցը, որն էլ փոխանցվեց 1919թ. ստեղծված Ազգերի լիգային:

Նանսենյան անձնագիր

Ազգերի լիգան, որը իր հերթին երկար, բայց նույնպես անարդյունք քննարկեց «ազգային օջախի» ստեղծման գաղափարը, իր 1922թ. կոնֆերանսում, փախստականների հարցով գլխավոր լիազոր, ականավոր հումանիստ, նույն տարվա Խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր Ֆրիտյոֆ Նանսենի նախաձեռնությամբ, որոշեց քաղաքացիություն չունեցող փախստականների համար մտցնել անձը հաստատող ժամանակավոր վկայականներ՝ «նանսենյան անձնագրեր»:

Անձնագիր ստացած անձինք, այդ թվում՝ ավելի քան 300 հազ. հայեր, օգտվում էին այն ճանաչած երկրներում բնակվելու և աշխատելու, ազատ տեղաշարժվելու իրավունքից:

Առաջին աշխարհամարտից անմիջապես հետո արտերկրի ազգային բոլոր կազմակերպությունների՝ Հայ եկեղեցու, Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ), Սոցիալ-դեմոկրատ հնչակյան (ՍԴՀԿ), Ռամկավար-ազատական (ՌԱԿ) կուսակցությունների և հատկապես բարեգործական (Հայկական բարեգործական ընդհանուր միություն՝ ՀԲԸՄ, Հայ օգնության միություն՝ ՀՕՄ) ու հայրենակցական միությունների ամենակարևոր խնդիրներից էին բազմահազար որբերի և գաղթականների խնամքն ու աշխատանքով ապահովելը: Այդ նպատակով նրանց ջանքերով հիմնվեց որբանոց-վարժարանների, տարատեսակ աշխատանոցների մի ամբողջ ցանց: Դրա հետ մեկտեղ, սփյուռքահայության գործունեության ամենակարևոր խնդիրը դարձավ ազգապահպանումը՝ օտարության մեջ աճող սերնդի մեջ հայ ինքնության ձևավորումը: Չնայած սուղ միջոցներին՝ հրատարակվում էին պարբերականներ, հիմնվում էին երիտասարդական, մշակութային միություններ և հայկական



Հայ օգնության միության զինանշանը

դպրոցներ: Վերջինների շարքում իր կրթական ծրագրերով և հարմարություններով առանձնանում էր 1926թ. Նիկոսիայում (Կիպրոս) հիմնված՝ ՀԲԸՄ-ի ամենօրյա գիշերօթիկ Մելգոնյան կրթական հաստատությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ գիտեք հայոց պատմության մեջ տեղի ունեցած արտագաղթերի ու բռնագաղթերի մասին: Ձեր կարծիքով՝ որո՞նք են իրենց հայրենիքից մարդկանց հեռանալու պատճառները:
2. Ե՞րբ և ի՞նչ դեպքերի հետևանքով առաջացավ Հայկական սփյուռքը: Ինչպե՞ս կարող եք գնահատել Հայկական սփյուռքի առաջացումը:
3. Ի՞նչ է նանսենյան անձնագիրը: Ձեր կարծիքով՝ ո՞րն է նրա նշանակությունը:
4. Լրացրեք «Հայկական հարցի քննարկումների ընթացքը և արդյունքները Սևրի պայմանագրից հետո» աղյուսակը:

Կոնֆերանսի վայրը	Հրավիրման տարեթիվը	Քննարկումների ընթացքը	Արդյունքները
Լոնդոն			
Լոզան			

ԹԵՍՏ

Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ.

1. Լոզանի խորհրդաժողովի ավարտը:
2. Ազգերի լիգայի ստեղծումը:
3. Լոնդոնի խորհրդաժողովի հրավիրումը:
4. Ազգերի լիգայի կոնֆերանսը, որտեղ որոշվեց մտցնել անձը հաստատող ժամանակավոր վկայական:

2. *Սփյուռքի հարաբերությունները Հայաստանի հետ և 1920–1930-ական թթ. ներգաղթը*

Սփյուռքի կենսունակության գրավականը նրա մշտական հարաբերություններն են Հայաստանի հետ: Հայաստանի առաջին հանրապետությունը շատ կարճ պատմություն ունեցավ, ուստի նրա և դեռ ձևավորման փուլում գտնվող Սփյուռքի միջև կանոնավոր փոխհարաբերությունների մասին դժվար է խոսել: Ամեն դեպքում, պետականության վերականգնումը մեծ ոգևորությամբ ընդունվեց արտասահմանի հայության կողմից: Մի շարք երկրներից

Հայաստան եկան բարձրորակ մասնագետներ, ռուսական բանակի հայազգի սպաներ՝ հայրենիքի վերաշինմանը մասնակցելու:

Առաջին հանրապետությանը հաջորդած Խորհրդային Հայաստանի իշխանությունները փորձում էին սփյուռքահայերի մեջ սեր և նվիրվածություն սերմանել խորհրդային կարգերի հանդեպ: Միաժամանակ, սփյուռքահայ կազմակերպություններն ու հատկապես ազգային կուսակցությունները հայտարարվեցին Խորհրդային Հայաստանի և անգամ սփյուռքահայ աշխատավորության թշնամիներ, որոնց դեմ պետք էր պայքար մղել:

«Մարի Նուբար» ակնաբուժարանը Երևանում

Միակ սփյուռքահայ կազմակերպությունը, որին թույլատրվեց գործել Հայաստանում, եղավ ՀԲԸՄ-ն: Վերջինս գործեց 1923-ից մինչև 1937թ., երբ նրա գործունեությունը նույնպես արգելվեց: ՀԲԸՄ-ն Երևանում կառուցեց այսօր էլ գործող «Մարի Նուբար» ակնաբուժարանը, բնակելի շենք մտավորականների համար (այժմ՝ Աբովյան փողոցի թիվ 32 շենքը), Նուբարաշեն ավանը (հետագայում ներառվեց Երևանի տարածքի մեջ), Նոր Եվդոկիա գյուղը և այլն:

Հայկական բարեգործական ընդհանուր միության զինանշանը

Հայաստան-Սփյուռք հարաբերությունների պատմության մեջ առանձնահատուկ կարևորություն է ունեցել Խորհրդային Հայաստանի իշխանությունների իրականացրած սփյուռքահայերի առաջին զանգվածային ներգաղթը կամ հայրենադարձությունը: Ներգաղթողների առաջին խումբը՝ մոտ 3000 մարդ, Իրաքից Հայաստան եկավ 1921թ. վերջին: Հետագայում (1922–1926, 1932-33, 1936 թվականներ) Հունաստանից, Իրանից, Սիրիայից, Բուլղարիայից, Ֆրանսիայից և Թուրքիայից Հայաստան ներգաղթեց ևս շուրջ 42 հազ. հայ: Նրանց թվում էին քանդակագործ Երվանդ Քոչարը, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, դերասան Հրաչյա Ներսիսյանը և այլք:

Նկատի առնելով հայրենադարձների տեղավորման դժվարությունները՝ Սփյուռքում գործող որոշ հայրենակցական միություններ 1920-ական թվականների կեսերից ֆինանսավորեցին Երևանի շրջակայքում ավանների կառուցումը: Այդ ավանները՝ Նոր Խարբերդ, Նոր Մալաթիա, Նոր Բութանիա, Նոր Արաբկիր, Նոր Զեյթուն, Նոր Կիլիկիա, հետագայում ներառվեցին Երևանի տարածքի մեջ: Սփյուռքահայերի զանգվածային ներգաղթի այս՝ առաջին փուլն անսպասելիորեն ավարտվեց 1937թ., երբ խորհրդային իշխանությունները խզեցին բոլոր կապերը Սփյուռքի հետ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս կարող եք բնութագրել Սփյուռքի հարաբերությունները Խորհրդային Հայաստանի հետ: Փորձե՛ք ցույց տալ այդ հարաբերությունների նշանակությունը:
2. Ո՞րն է Սփյուռքի այն միակ կազմակերպությունը, որը գործել է Հայաստանում: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ դադարեցվեց նաև այդ կազմակերպության գործունեությունը:
3. Ե՞րբ սկսվեց հայրենադարձությունը, և մինչև ե՞րբ շարունակվեց ներգաղթը: Որքա՞ն հայրենադարձներ եկան հայրենիք: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ ընդհատվեց հայրենադարձությունը:

ԹԵՍՏ

Ո՞վ էր հայրենիք ներգաղթած նշանավոր դերասանը.

1. Հրաչյա Ներսիսյանը,
2. Ավետիս Ահարոնյանը,
3. Մարտիրոս Սարյանը,
4. Ատոմ Էգոյանը:

8-րդ թեմայի ամփոփում

1. Հայկական սփյուռքի կենսականության գրավականը նրա մշտական կապերն ու հարաբերություններն են մայր հայրենիքի հետ: Հայաստանի 1-ին հանրապետությունը չհասցրեց կայուն կապեր հաստատել Սփյուռքի հետ, իսկ Խորհրդային Հայաստանը դրանք ծառայեցրեց խորհրդային իշխանության քաղաքական շահերին: Հայաստան–Սփյուռք կապերի զարգացման գործում մեծ դեր խաղաց Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), որը միակ սփյուռքահայ կազմակերպությունն էր, որին 1923–1937թթ. թույլատրվեց գործել Խորհրդային Հայաստանում:
2. Հայկական հարցի տապալումից հետո առաջնային դարձավ հայ գաղթականության տեղափոխման հարցը: 1920-30-ական թթ. Խորհրդային Հայաստանն ընդունեց շուրջ 42 հազար հայրենադարձների, որոնք հայրենիքում ձեռնամուխ եղան ստեղծարար աշխատանքի:

ԹԵՄԱ 9 ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939–1945ԹԹ.)

1-2. Հայ ժողովրդի ուժերի համախմբումը և մասնակցությունը պատերազմին

Պատերազմի սկիզբը: 1939թ. սեպտեմբերի 1-ին սանձազերծվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը, որն իր շրջապտույտի մեջ առավ 64 պետություն, երկրագնդի բնակչության 80 տոկոսը և տևեց ուղիղ վեց տարի՝ մինչև 1945թ. սեպտեմբերի 2-ը: Պատերազմն ուներ իր պատճառները: Ամենագլխավորը, թերևս, Առաջին աշխարհամարտի արդյունքով Գերմանիային պարտադրված Վերսալի պայմանագրի (այսպես կոչված Վերսալյան սիստեմի) նվաստացուցիչ պայմաններն էին, որոնք էլ ի վերջո գերմանական ժողովրդին մղեցին ֆաշիզմի ու ռևանշիզմի (փոխվրեժի): Արդեն 1930-ական թվականների սկզբներին ռազմաքաղաքական մութ ամպեր էին կուտակվել Եվրոպայի ու աշխարհի գլխին: 1930-ական թթ. կեսերին Գերմանիայի առաջնորդ Ադոլֆ Հիտլերը սկսել էր տենդագին նախապատրաստվել պատերազմի:

Արևմուտքի խոշոր տերությունները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Իտալիան, 1938թ. սեպտեմբերին Մյունխենում Գերմանիայի հետ կնքեցին պայմանագիր, որը ստացավ Մյունխենյան գործարք անունը: Դրանով նպատակ էր հետապնդվում Հիտլերին ուղղորդելու դեպի Արևելք՝ ԽՍՀՄ: Իր հերթին, ԽՍՀՄ առաջնորդ և «ժողովուրդների հայր» Ի. Ստալինը, որպես դրա հակաքայլ, 1939թ. օգոստոս-սեպտեմբերին Մոսկվայում կնքել տվեց խորհրդա-գերմանական (Մոլոտով–Ռիբենտրոպ) տասը տարով չհարձակման պակտ՝ նպատակ ունենալով Հիտլերին ուղղելու դեպի Արևմուտք: Արդյունքում՝ ոչ Արևմուտքը և ոչ էլ Արևելքը չկարողացան խուսափել պատերազմից:

1941թ. ամռան սկզբին հիտլերյան Գերմանիան հասցրել էր նվաճել գրեթե ամբողջ Արևմտյան Եվրոպան, իսկ ԽՍՀՄ-ը, Գերմանիայի հետ սահմանային համաձայնության գալով, ամրապնդել էր իր արևմտյան սահմանները՝ Սև ծովից մինչև Ֆինլանդիա, ԽՍՀՄ կազմի մեջ ներառելով Լատվիան, Լիտվան, Էստոնիան, ինչպես նաև այլ տարածքներ:

1941թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան ուխտադրժորեն հարձակվեց Խորհրդային Միության վրա, և դրանով սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, որը տևեց 1418 օր և ավարտվեց 1945թ. մայիսի 9-ին՝ շատ թանկ գնով ձեռք բերված հաղթանակով:

Տնտեսության վերակառուցումը ըստ պատերազմական պահանջների: Պատերազմի առաջին իսկ օրերից հայ ժողովուրդը, խորհրդային մյուս ժողովուրդների հետ, կատարելով իր հայրենասիրական-քաղաքացիական պարտքը, ոտքի ելավ պաշտպանելու հայրենիքը: Նա, ինչպես թիկունքում, այնպես էլ ռազմաճակատում, գործեց նվիրումով և պատասխանատվությամբ:

Առաջնահերթ խնդիր էր տնտեսության վերակառուցումը պատերազմի պահանջներին համապատասխան: Պատերազմի ընթացքում Հայաստանը երկրին մատակարարում էր կաուչուկ, որի արտադրությունն ավելացավ 5 անգամ, պղինձ, կարբիդ և ռազմական կարիքների համար անհրաժեշտ այլ արտադրատեսակներ: Յուրացվեց զենքի ու զինամթերքի որոշ տեսակների արտադրությունը, ինչպես՝ ականանետ, հրացաններ, նռնակներ, ականներ, պայթուցիկ նյութեր: Երևան էվակուացված գործարաններից մեկում վերանորոգվում էին ինքնաթիռներ, արտադրվում դրանց մասեր: Արդյունաբերության մյուս ճյուղերը ևս սպասարկում էին բանակին: Կառուցվեցին ավտոդողերի, ծծմբաթթվի և այլ գործարաններ: Ռազմական կարիքների համար Հայաստանում պատրաստվում էր շուրջ 300 տեսակի արտադրանք: Մեծ հայրենականի տարիներին առաջ քաշված գլխավոր կարգախոսն էր. «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար»: Մեծ լարումով էր աշխատում երկաթուղային տրանսպորտը՝ ռազմաճակատ հասցնելով ամենատարբեր բեռներ: Հայաստանի աշխատավորները Կարմիր բանակի ֆոնդ մուծեցին 216 մլն ռուբլի:



Երևանի ավտոդողերի գործարանում

Ռազմաճակատ մեկնած գյուղի աշխատավորներին փոխարինեցին կանայք, տարեցներ, նաև անչափահասներ: Ըստ պատերազմի պահանջների իր գործունեությունը վերակառուցեց Հայաստանի մտավորականությունը: Գիտության զարգացմանը մեծապես նպաստեց ահեղ պատերազմի ժամանակ՝ 1943թ. Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի կազմակերպումը:

Թշնամու դեմ պայքարի կազմակերպմանն ակտիվորեն մասնակցեց նաև Հայոց եկեղեցին՝ թե՛ հոգևոր-բարոյական, թե՛ նյութական միջոցներով: Ընդ որում, պատերազմական պայմանների բերումով փոխվեց խորհրդային իշխանության վերաբերմունքը Հայ եկեղեցու նկատմամբ, դարձավ մեղմ ու հանդուրժող: Ավելին՝ 1945թ. ապրիլի 19-ին ԽՍՀՄ կառավարության ղեկավար Ի. Ստալինը Մոսկվայում ընդունեց Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին, որն առաջադրեց լուծման կարոտ ազգային հարցեր՝ հայկական հողերի պահանջը, սփյուռքահայերի վերադարձի թույլտվությունը և այլն:

Հայկական դիվիզիաների կազմակերպումը և նրանց մարտական ուղին: Հայրենական մեծ պատերազմի հայ մասնակիցների թիվը հասնում էր 500 հազարի, որից 300 հազարը Հայաստանից էին, մյուսները՝ միութենական մյուս հանրապետություններից: 200 հազար հայ մարտիկներ ու սպաներ զոհվեցին խորհրդային երկրի պաշտպանության ու հաղթանակի համար: Եվս 100 հազար հայեր Երկրորդ աշխարհամարտին մասնակցում էին ԽՍՀՄ-ի դաշնակից երկրների բանակներում: Ամբողջ պատերազմին (Երկրորդ աշխարհամարտին և Հայրենականին) մասնակցել է 600 հազար հայ:

Հայրենական պատերազմի հայ մասնակիցների զգալի մասը կենտրոնացած էր հայկական ազգային 6 դիվիզիաներում: Առաջինը 76-րդ հրաձգային դիվիզիան էր, որը գոյություն ուներ տակավին 1922թ.-ից: 1941–1942թթ. կազմավորվեցին 408-րդ, 409-րդ, 89-րդ, 390-րդ և 261-րդ հրաձգային դիվիզիաները:

Հայկական զորամիավորումներից առաջինը ռազմաճակատ մեկնեց 390-րդ դիվիզիան: Նա 1942թ. Ղրիմի Կերչի թերակղզում ունեցավ ծանր կորուստներ: Դիվիզիան գրեթե ամբողջությամբ ջախջախվեց, զոհվեց նաև նրա հրամանատար գնդապետ Սիմոն Զաքյանը: 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան կռվում էր Ստալինգրադում: Գործած սխրանքների համար վերակոչվեց 51-րդ գվարդիական դիվիզիա: Հիրավի փառավոր էր 89-րդ Թամանյան (անունը շնորհվել է Թամանի թերակղզու ազատագրմանը մասնակցելու համար) դիվիզիայի մարտական ուղին, որը, սկսելով Կովկասյան լեռներից, հասավ մինչև Բեռլին: Նա Բեռլինի ճակատամարտին մասնակցած միակ ազգային դիվիզիան էր, որի հրամանատարն էր սիրված զորավար Նվեր Սաֆարյանը: Հարկ է առանձնահատուկ նշել դիվիզիայի քաջարի ռազմիկ Հունան Ավետիսյանի սխրանքը, ով 1943թ. սեպտեմբերին մղվող մարտի ժամանակ կրծքով փակեց թշնամու հրակնատը՝ հնարավորություն տալով զորամասին առաջ շարժվելու: Հայ ռազմիկները մասնակցություն ունեցան գրեթե բոլոր ճակատամարտերին՝ Մոսկվայի, Ստալինգրադի, Կուրսկի, Կովկասի ու Լենինգրադի պաշտպանությանը, Ղրիմի ու Ուկրաինայի ազատագրմանը, Դնեպրի գետանցմանը: Աչքի էին ընկնում ոչ միայն շարքային զինվորները, այլև սպաներն ու հրամանատարները:

Հայ ժողովրդի պարծանքն ու հպարտությունն են պատերազմի բովով անցած ու աճած մարշալները, գեներալները, Խորհրդային Միության հերոսները և քաջարի զինվորները:

Պատերազմի ժամանակ Հովհաննես Իսակովը (Տեր-Իսահակյան) ծովակալ, ապա նավատորմի ծովակալ էր, իսկ հետագայում՝ Խորհրդային Միության նավատորմի ծովակալ: Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփերյանց) ավիացիայի մարշալ էր: Հետպատերազմյան շրջանում Խորհրդային Միության մարշալի կոչում շնորհվեց Հովհաննես Բաղրամյանին, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի կոչում՝ Համազասպ Բաբաջանյանին, ինժեներական

զորքերի մարշալի կոչում՝ Սերգեյ Ագանովին (Ագանյան): Պատերազմի ընթացքում նրանք գրավել են բարձր պաշտոններ և ակտիվորեն մասնակցել խոշոր ռազմական գործողությունների: Նրանցից Հովի. Բաղրամյանը հասավ ռազմաճակատի հրամանատարի պաշտոնի: Նա իր հմուտ մասնակցությունը բերեց Մոսկվայի ու Կուրսկի-Օրյոլի ճակատամարտերին, Բելոռուսիայի ազատագրմանը, որպես Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի հրամանատար կազմակերպեց գերմանական խոշոր ռազմական խմբավորման շրջափակումը և վերացումը:

Նվեր Սաֆարյան
(1907–1982)

89-րդ դիվիզիայի հրամանատար Նվեր Սաֆարյանը մի խումբ զինակիցների հետ

Պատերազմում աճեցին տասնյակ բարձրակարգ հրամանատարներ՝ գեներալներ, որոնց թիվը պատերազմի վերջում հասավ 64-ի:

Ցուցաբերած խիզախության ու արիության համար բարձրագույն պարգևի՝ Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացան հայ ժողովրդի 108 զավակներ և ևս 11 հայաստանցիներ՝ ազգային փոքրամասնություններից, ընդհանուր թվով՝ 119 մարդ: Նրանցից երկուսին՝ Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանին և գվարդիայի փոխգնդապետ, օդաչու Նելսոն Ստեփանյանին շնորհվել է Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչում:

Հովհաննես Իսակով
(1894–1967)

Նելսոն Ստեփանյան
(1913–1944)

Հովհաննես Բաղրամյան
(1897–1982)

Սերգեյ Խուդյակով
(1902–1950)

Համազասպ Բաբաջանյան
(1906–1977)

Սերգեյ Ագանով
(1917–1996)

Պատերազմին հայ ժողովրդի զավակների գործուն մասնակցության մասին պերճախոս են նաև հետևյալ տվյալները. հայերը իրենց թվով 4-րդ տեղում էին գեներալների, ռազմաօդային ուժերի և հրետանային զորքերի սպաների կազմում, 6-րդ տեղում՝ Խորհրդային Միության հերոսների ցանկում: Եվ դա այն դեպքում, երբ հայերն իրենց թվով ԽՍՀՄ ժողովուրդների մեջ գրավում էին 8-րդ տեղը: Հայորդի մեկ զորահրամանատար զբաղեցնում էր ռազմաճակատի հրամանատարի պաշտոն (Հովհաննես Բաղրամյան), 3-ը՝ բանակի, 6-ը՝ կորպուսի, 28-ը՝ դիվիզիայի, 100-ը բրիգադի ու գնդի հրամանատարներ էին:

Սփյուռքահայերի մասնակցությունը ֆաշիզմի ջախջախմանը: Երկրորդ աշխարհամարտում ֆաշիզմի ջախջախման գործին իր մասնակցությունն ունեցավ նաև սփյուռքահայությունը: Հակահիտլերյան խմբավորման երկրների զորքերի ու պարտիզանական առանձին խմբերի շարքերում կռվեցին մոտ 100 հազար սփյուռքահայեր: Միայն ԱՄՆ-ի զինված ուժերում կային շուրջ 20 հազար հայ ռազմիկներ: Սպա Երվանդ (Էռնեստ) Դերվիշյանը պարգևատրվել է ԱՄՆ Կոնգրեսի պատվո շքանշանով:

Մեծ թվով հայ մարտիկներ էին կռվում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բանակներում, շատերն էլ ընդգրկված էին դիմադրական-պարտիզանական պայքարում: Ֆրանսիայում ազգային հերոսի փառքով պսակվեց Փարիզի բազմազգ պարտիզանական ջոկատի հրամանատար, բանաստեղծ Միսակ Մանուշյանի անունը: 1944թ. ամռանը ֆաշիզմի զոհը դարձավ բուլղարահայ պարտիզանուհի Հերմինե Ռազկրատլյանը: Հունաստանի հակաֆաշիստական պայքարում զոհվեցին 300 հայ քաջորդիներ:

Միսակ Մանուշյանի հուշարձանը Փարիզում

Սփյուռքահայերի մասնակցությունը հակաֆաշիստական պայքարին արտահայտվել է նաև նյութական-դրամական օգնության ձևով: Սփյուռքում հանգանակություն կազմակերպելու միջոցով ստեղծվեց և խորհրդային ռազմաճակատ ուղարկվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, իրանահայերի միջոցներով պատրաստվեց «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյունը, և այլն: Հանգանակություններին գործուն մասնակցություն ուներ նաև Սփյուռքի Հայ եկեղեցին: Այսպես՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանի անձնական նախաձեռնությամբ Կարմիր բանակի համար հանգանակվեց 200 հազար դոլար գումար:

Բայց, մյուս կողմից, սփյուռքահայության վերաբերմունքը պատերազմի խնդրում ունեցել է նաև այլ դրսևորում: Նրանց մի մասը աշխատել է լոյալ վերաբերմունք ցուցաբերել Գերմանիայի նկատմամբ, որպեսզի ինչ-որ չափով ապահովվի խորհրդային ռազմագերիների շարքում գտնվող հայերի անվտանգությունը: 1942թ. Բեռլինում հիմնվեց «Հայ ազգային խորհուրդը» (ղեկ.՝ Արտաշես Աբեղյան), որը գերմանական հրամանատարության թույլտվությամբ հայ ռազմագերիներից կազմեց հայկական լեգեոն, որի հրամանատար նշանակվեց Դրոն: Լեգեոնի շարքերում կար 8000 մարդ: Այն ուղարկվեց խորհրդային ճակատ, սակայն կռիվներին գործուն մասնակցություն չունեցավ և 1943թ. կազմալուծվեց: Սփյուռքի հայ քաղաքական որոշ շրջանակներ Գերմանիայի հետ գործակցության եզրեր էին փնտրում այն նկատառումներով, որ հիտլերականների հնարավոր հաղթանակի դեպքում կարողանան ապահովել Հայաստանի ու հայության անվտանգությունը, ինչպես նաև Գերմանիայի միջոցով զսպել Թուրքիային՝ Հայաստանի դեմ ռազմական ոտնձգություններից: Բարեբախտաբար ամեն ինչ բարեհաջող ավարտվեց, և Գերմանիան ու ֆաշիզմը ջախջախվեցին:

Հայերը պարտիզանական պայքարի շարքերում: Խորհրդային պարտիզանների շարքերում քիչ չէին նաև հայ ժողովրդի զավակները: Հայ պարտիզանների հիմնական զանգվածը կազմում էին ռազմագերիները և թշնամու ռազմակալած տարածքների (Ղրիմ, Հյուսիսային Կովկաս) հայկական բնակավայրերի բնակչությունը: Հայ ռազմագերիները պարտիզանության են դիմել երկու ճանապարհով՝ փախուստով համակենտրոնացման ճամբարներից և հայկական լեգեոնից:

Թշնամու թիկունքում գործել են «Հաղթանակ», Միկոյանի անվան, 10-րդ, 41-րդ, «Կարմիր աստղ» պարտիզանական ջոկատները, որոնց անձնակազմերը բաղկացած էին հայերից:

Պատերազմի ավարտը: 1945թ. մայիսին Բեռլինի ճակատամարտում խորհրդային բանակի տարած հաղթանակով ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը: Մայիսի 9 դարձավ խորհրդային ժողովուրդների տարած պատմական մեծ հաղթանակի տոնական օրը: Գերմանիայի պարտությունից հետո ԽՍՀՄ-ը 1945թ. օգոստոսին պատերազմի մեջ մտավ Ճապոնիայի դեմ: Կարճ ժամանակամիջոցում Գերմանիայի դաշնակից Ճապոնիան ևս պարտվեց, և սեպտեմբերի 2-ին ավարտվեց Երկրորդ աշխարհամարտը:

Նման նպաստավոր ռազմաքաղաքական պայմաններում ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության մեջ բարձրացավ անցյալում Թուրքիայի զավթած հայկական տարածքների ազատագրման հարցը: Այդ նպատակով Թուրքիայի ուղղությամբ կենտրոնացվեցին համապատասխան ռազմական ուժեր, նույնիսկ կազմվել էին ազատագրվող տարածքների իշխանության մարմինները: 1945թ. ապրիլին Խորհրդային Միության արտգործժողկոմատի պահանջով Հայաստանի արտգործժողկոմատը պատրաստել և ներկայացրել էր զեկուցագիր՝ 1921թ. մարտի 16-ի պայմանագրով և մինչև այդ Թուրքիային անցած հայկական տարածքների, ինչպես նաև սփյուռքահայերի հայրենադարձության հնարավորությունների մասին: Ակնկալվում էր, որ այդ հարցերը քննության կառնվեն պատերազմի ավարտից հետո հրավիրվելիք հաշտության խորհրդաժողովում:

Սակայն, մինչ Հայկական հարցի բուն քննարկմանն անցնելը, միջազգային իրադրությունը կտրուկ փոխվեց՝ տեղի ունեցավ ԱՄՆ-ի կողմից ճապոնական երկու քաղաքների՝ Հիրոսիմայի և Նագասակիի ատոմային ռմբահարումը (1949թ. օգոստոս), և Ստալինը հայտարարեց. «Ստամբուլի վրա հարձակումը հետաձգել մինչև ավելի լավ ժամանակներ»: Ավելի ուշ՝ ԽՍՀՄ-Արևմուտք դիմակայության պայմաններում, բռնազավթված հայկական տարածքների խնդրի լուծումը այդպես էլ չիրականացավ:

Հայ ժողովրդի նամակից՝ ռազմաճակատի իր զավակներին (1942թ.)

Խորհրդային հայրենիքի քաջարի պաշտպաններ, գիշեր ու ցերեկ մեր գործարաններն աշխատում են: Հայաստանի բանվորներն ու բանվորուհիները հաղթահարում են ամեն մի դժվարություն, որ երկիրը լինի հարուստ ու ուժեղ: Դուք զենքի և ռազմամթերքի պակաս չեք զգա: Մենք յուրացնում ենք արտադրանքի տասնյակ նոր տեսակներ, որպեսզի դիպուկ լինի ձեր կրակը և ձեր հարվածը՝ ոչնչացնող:

Մեր կոլխոզային դաշտերում գիշեր ու ցերեկ եռում է աշխատանքը: Մեր կոլխոզային հողն աճեցնում է ավելի առատ բերք մայր երկիրը պաշտպանող մարտիկների համար: Պատերազմի ընթացքում մեր դաշտերից հավաքում ենք ավելի շատ բերք, քան պատերազմից առաջ: Մեր հայրենիքին սպառնացող վտանգը համախմբեց և զենքի կոչեց ողջ հայ ժողովրդին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Ո՞րն էր պատերազմի պատճառներից ամենագլխավորը: Ի՞նչ հաջողություններ ունեցավ Գերմանիան մինչև Խորհրդային Միության վրա հարձակվելը:
2. Ե՞րբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Պատերազմի պահանջներին համապատասխան ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Խորհրդային Հայաստանում: Ի՞նչ էր տալիս Հայաստանի տնտեսությունը ռազմաճակատին:
3. Ինչո՞ւ պատերազմի տարիներին մեղմացավ խորհրդային իշխանության վերաբերմունքը Հայ եկեղեցու նկատմամբ: Փորձե՛ք գնահատել Հայ եկեղեցու գործունեությունը պատերազմի ժամանակ:
4. Ռազմական ի՞նչ գործողությունների մասնակցեցին հայկական դիվիզիաները: Նկարագրե՛ք 89-րդ Թամանյան դիվիզիայի մարտական ուղին:
5. Նշե՛ք Հայրենական պատերազմի հայ նշանավոր զորահրամանատարներին, ի՞նչ գիտեք նրանց մասին: Որքա՞ն հայ քաջորդիներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման: Ո՞վ է Մեծ հայրենականի ձեր սիրած հերոսը: Գրե՛ք փոքրիկ շարադրություն «Իմ սիրած հերոսը» վերնագրով:
6. Ի՞նչ մասնակցություն է ունեցել Սփյուռքը Երկրորդ աշխարհամարտին: Ի՞նչ գիտեք սփյուռքահայ քաջարի զավակների սխրանքների մասին: Փորձե՛ք գնահատել սփյուռքահայության մասնակցությունը պատերազմին: Ի՞նչ նպատակներ էին հետապնդում նրանք: Ձեր կարծիքով՝ ճի՞շտ էր արդյոք հայ քաղաքական գործիչների որոշ շրջանակների գործակցությունը Գերմանիայի հետ: Ի՞նչ ակնկալիքներ ունեին նրանք:
7. Ի՞նչ է պարտիզանական պայքարը: Ովքե՞ր էին կազմում հայ պարտիզանների հիմնական զանգվածը:
8. Ե՞րբ ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը: Փորձե՛ք գնահատել հայ ժողովրդի ներդրումը Հայրենական պատերազմում:
9. Ի՞նչպիսի հնարավորություն գոյություն ուներ պատերազմի վերջում Թուրքիայից հայկական տարածքներն ազատագրելու համար, և ի՞նչո՞ւ չիրականացավ խորհրդային երկրի ղեկավարության այդ մտահղացումը:
10. Լրացրե՛ք «Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական պատերազմին» աղյուսակը:

Պատերազմի մասնակից հայերի թիվը, զոհերը	Մարշալների, գեներալների, հերոսների թիվը, նրանց զբաղեցրած հրամանատարական պաշտոնները	Նշանավոր զորահրամանատարները և հերոսները	Հայ ժողովրդի տեղը ԽՍՀՄ ժողովուրդների շարքում՝ ըստ պատերազմում ունեցած ներդրման

ԹԵՍՏ

Իրադարձությունները դասավորեք ժամանակագրական հաջորդականությամբ.

1. ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի կազմակերպումը:
2. Ամենայն հայոց կաթողիկոսի հանդիպումը ԽՍՀՄ կառավարության ղեկավար Ստալինի հետ:
3. Մյունխենյան գործարք անունով հայտնի պայմանագրի կնքումը:
4. Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի ներառվելը ԽՍՀՄ կազմի մեջ:

9-րդ թեմայի ամփոփում

1. 1941թ. հունիսի 22-ին ԽՍՀՄ-ի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակումով սկսվեց Հայրենական մեծ պատերազմը:
2. Հայ ժողովուրդը խորհրդային մյուս ժողովուրդների հետ ոտքի կանգնեց՝ պաշտպանելու խորհրդային երկիրը: Խորհրդային Հայաստանը իր մարդկային և նյութական ողջ ռեսուրսը, ջանքերն ու միջոցները նպատակաուղղեց ջախջախելու թշնամուն: Հայաստանը երկրին մատակարարում էր կաուչուկ, պղինձ, կարբիդ, ինչպես նաև հրացաններ, նռնակներ և այլն:
3. Թշնամու դեմ պայքարի կազմակերպմանն ակտիվորեն մասնակցեց նաև Հայ եկեղեցին:
4. Երկրորդ աշխարհամարտին և Հայրենական պատերազմին մասնակցել է 600 հազար հայ, 200 հազարը զոհվել է պատերազմի դաշտում՝ խորհրդային երկրի համար: Հայ ռազմիկների զգալի մասը կենտրոնացած էր 6 հայկական ազգային դիվիզիաներում: Դրանցից 89-րդը Գերմանիա հասած և Բեռլինի ճակատամարտին մասնակցած միակ ազգային դիվիզիան էր:
5. Պատերազմում աճեցին տասնյակ բարձրակարգ հայ հրամանատարներ ու զորավարներ՝ 5 մարշալ, 64 գեներալ: Հայաստանը պատերազմի տարիներին տվեց Խորհրդային Միության 119 հերոս:
6. Երկրորդ համաշխարհային պատերազմին իր գործուն մասնակցությունն ունեցավ նաև Սփյուռքը: Հակահիտլերյան խմբավորման երկրների զորքերի ու պարտիզանական առանձին խմբերի շարքերում մարտնչեցին մոտ 100 հազար սփյուռքահայեր: Նրանց մասնակցությունն արտահայտվեց նաև նյութական-դրամական օգնության ձևով:
7. Հայ ժողովրդի զավակները մասնակցել են պարտիզանական պայքարին և եվրոպական երկրների դիմադրական շարժմանը: Թշնամու թիկունքում հայտնի էին «Հաղթանակ», «Կարմիր աստղ», այլ պարտիզանական

ջոկատներ: Գերմանական հրամանատարությունը հայ ռազմագերիներից կազմակերպեց հայկական ազգային լեգեոնը, որին գործակցել են ազգային գործիչներ:

ԹԵՄԱ 10 ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ 1920–1945ԹԹ.

1. *Խորհրդային իշխանության քաղաքականությունը մշակույթի բնագավառում: Կրթական համակարգի ձևավորումը*

Մշակութային առաջին միջոցառումները: Խորհրդային իշխանության հաստատումով նոր փուլ է սկսվում դարավոր հայ մշակույթի զարգացման համար: Մշակույթը դարձավ պետության քաղաքականության կարևոր բնագավառներից մեկը: Խորհրդային իշխանությունը և կոմունիստական կուսակցությունը մշակույթը դիտում էին որպես նոր հասարակարգի ստեղծման կարևոր պայմաններից մեկը: Մեծ նշանակություն էր տրվում մարդկանց խորհրդային սոցիալիստական գաղափարներով դաստիարակելու գործին:

Մշակութային գործի կազմակերպման առաջին միջոցառումներից էին դպրոցի ու կրթության անջատումը եկեղեցուց և մշակութային հաստատությունների (դպրոց, թանգարան, գրադարան, տպարան և այլն) ազգայնացումը: Հայերենը որպես պետական լեզու ճանաչելու դեկրետի ընդունումը հնարավորություն էր ընձեռում մշակույթի զարգացումը կազմակերպելու ազգային սկզբունքով:

Զանգվածային անգրագիտության վերացումը: Հնագույն մշակույթի տեր հայ ժողովուրդը, այնուամենայնիվ, հին կարգերից ստացել էր քիչ ժառանգություն հատկապես գրագիտության բնագավառում: Հայաստանի խորհրդայնացման նախօրյակին գրագետ էր բնակչության 20 տոկոսը: Կարելի է ասել՝ համատարած անգրագիտություն էր տիրում գյուղում: Անգրագիտության վերացման գործում մեծ դեր կատարեցին հարյուրավոր այսպես կոչված լիկկյանները:

Դպրոցական դաս

Խորհրդային իշխանությունը գտնում էր, որ նոր հասարակարգի ստեղծումը կարելի է իրականացնել միայն գրագետ մարդկանց միջոցով: Ուստի նա ձեռնամուխ եղավ, մի կողմից, երեխաների դպրոցական կրթության կազմակերպման, մյուս կողմից՝ չափահաս բնակչության անգրագիտության վերացման գործին:

Առաջին հնգամյակում հնարավոր չեղավ ամբողջությամբ հաղթահարել անգրագիտությունը, ուստի գործի ընթացքն արագացվեց: Գյուղատնտեսության կոլեկտիվացման հետ կապված՝ ուշադրությունը մեծացավ գյուղի նկատմամբ: Ի վերջո, 1939թ. մարդահամարի տվյալներով, գրագետ էր դարձել Հայաստանի բնակչության 83,9 տոկոսը: Հայաստանում անգրագիտությունը հիմնականում հաղթահարված էր, որը շատ մեծ նվաճում էր:

Հանրակրթական դպրոցը: Հայաստանի խորհրդային իշխանությունը իր ձեռքը վերցրեց կրթության ամբողջ գործը և ձեռնամուխ եղավ կրթական նոր համակարգի ստեղծմանը:

1921թ. որոշում ընդունվեց հանրապետությունում ունենալու երկաստիճան դպրոց՝ տարրական և յոթնամյա: Մի քանի տարի անց նպատակահարմար համարվեց անցնել եռաստիճան՝ տարրական, յոթնամյա և միջնակարգ դպրոցին: 1930թ. հոկտեմբերին որոշում կայացվեց անցում կատարելու ընդհանուր պարտադիր տարրական կրթության:

Գյումրու մանկավարժական ինստիտուտի շենքը

1920–1930-ական թվականներին հանրակրթական դպրոցների լայն ցանց ստեղծվեց: 1940–1941 ուսումնական տարում հանրապետությունում գործում էր 1155 դպրոց: Հարյուրավոր դպրոցական շենքեր կառուցվեցին պետության միջոցներով, որն էլ հոգում էր դպրոցական բոլոր ծախսերը:

Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի շենքը (այժմ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան)

Հանրակրթական դպրոցների լայն ցանցը մեծ նշանակություն ունեցավ մատաղ սերնդի անգրագիտության վերացման գործում:

Բարձրագույն կրթությունը: Հայաստանի բարձրագույն կրթության առաջնեկը Երևանի պետական համալսարանն է, որը հիմնադրվել է 1919թ.:

Հաջորդ բուհը Երևանի կոնսերվատորիան էր (1923թ.), որը կոչված էր պատրաստելու բարձրագույն երաժշտական կադրեր: 1928թ. բացվեց անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը, որը կադրեր էր պատրաստում Անդրկովկասի հանրապետությունների համար:

Առաջին հնգամյակը կադրերի մեծ պահանջ առաջացրեց, ուստի 1930թ. Երևանի համալսարանի ֆակուլտետները դարձան ինքնուրույն ինստիտուտներ՝ պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, բժշկական, մանկավարժական: 1940թ. Հայաստանում գործում էր 9 բուհ 11100 ուսանողներով և պրոֆեսորա-դասախոսական բարձրորակ անձնակազմով:

Երևանի բժշկական ինստիտուտի շենքը

Կազմավորվեց միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանց: 1940թ. գործում էր 62 տեխնիկում շուրջ 9000 սովորողներով:

1928–1941թթ. Հայաստանի բուհերը և տեխնիկումները միասին տվեցին շուրջ 22 հազար շրջանավարտ: Այդ ամենի շնորհիվ Խորհրդային Հայաստանում ձևավորվեց մտավորականության խավը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են մշակութային գործի կազմակերպման առաջին միջոցառումները:
2. Ի՞նչ հաջողություններ ձեռք բերվեցին զանգվածային անգրագիտության վերացման գործում: Խորհրդային իշխանության ո՞ր քայլերն եք դուք համարում առաջնային կրթական նոր համակարգի ստեղծման ճանապարհին: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը: Նշե՛ք հանրակրթական դպրոցի տիպերը:
3. Ի՞նչ եք կարծում, ինչո՞վ էր պայմանավորված բարձրագույն կրթության զարգացումը: Որո՞նք են հանրապետության առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունները (բուհերը):
4. Լրացրե՛ք «Կրթության զարգացումը» աղյուսակը:

Ուսումնական հաստատությունները	1940–1941 ուստարի	Հետևությունները
	Քանակը	
Հանրակրթական դպրոց		
Միջնակարգ մասնագիտական դպրոց		
Բարձրագույն դպրոց		

2. Գիտությունը, գրականությունը և արվեստը

Գիտության զարգացումը: Գիտությունը կազմակերպվում էր բուհերում և գիտահետազոտական հիմնարկներում: 1930-ական թվականներին տնտեսու-

թյան արագ զարգացումը նոր պահանջներ էր դնում գիտական կադրերի առաջ: Ուստի 1935թ. կազմակերպվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը (Արմֆանը): Կադրերի առկայության առումով Հայաստանում շատ թե քիչ նպաստավոր պայմաններ կային հայագիտության զարգացման համար (պատմություն, լեզու, գրականություն և այլն):

Պատմագիտության բնագավառում շարունակում էին ստեղծագործել Հովսեփ Օրբելին, Լեոն (Առաքել Բաբախանյան), Հակոբ Մանանդյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Աշխարհաբեկ Քալանթարը և ուրիշներ: Նրանք գիտական արժեքավոր աշխատություններ ստեղծեցին հայոց պատմության վերաբերյալ:

Լեզվագիտության ու գրականագիտության գծով Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Գրիգոր Ղափանցյանը, Ստեփանոս Մալխասյանցը, Արսեն Տերտերյանը և շատ ուրիշներ գիտական-ստեղծագործական բեղուն գործունեություն էին ծավալել:



Հովսեփ Օրբելի
(1887–1961)



Հակոբ Մանանդյան
(1873–1952)



Լեո
(Առաքել Բաբախանյան)
(1860–1932)

Հրաչյա Աճառյան
(1876–1953)



Ստեփանոս Մալխասյանց
(1857–1947)



Մանուկ Աբեղյան
(1865–1944)

Բնական գիտությունների զարգացումը կապվում էր արդյունաբերացման խնդիրների լուծման հետ: Լևոն Ռոտինյանի և Ստեփան Ղամբարյանի ղեկավարությամբ գիտական աշխատանքներ էին կատարվում քիմիական

արդյունաբերության բնագավառում: Ջրատեխնիկայի և ջրաէներգետիկայի հարցերի լուծումը կապված է Հովսեփ Տեր-Աստվածատրյանի անվան հետ: Երկրաբաններ Հովհաննես Կարապետյանի և Տիգրան Ջրբաշյանի գործունեությունը ծավալվել է կիրառական երկրաբանության ասպարեզում:

Գիտական բնագավառի խոշոր իրադարձություն էր 1943թ. ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի կազմակերպումը: Ակադեմիայի պրեզիդենտ (նախագահ) ընտրվեց անվանի արևելագետ Հովսեփ Օրբելին:

Գրական կյանքը: 1920–30-ական թվականները խորհրդահայ գրականության ձևավորման ու զարգացման տարիներ էին: Կուսակցության պահանջով գրողների կարևոր խնդիրը գեղարվեստական ստեղծագործության միջոցով խորհրդային մարդու դաստիարակությունն էր:



Նիկոլ Աղբալյան
(1875–1947)

Ալեքսանդր Շիրվանզադե
(1858–1935)

Եղիշե Չարենց
(1897–1937)

Գեղարվեստական խոսքի ճանաչված վարպետներ Հովհաննես Թումանյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Ավետիք Իսահակյանը, Ալեքսանդր Շիրվանզադեն, Նար-Դոսը, Դերենիկ Դեմիրճյանը և ուրիշներ կողմնորոշվեցին դեպի խորհրդային իշխանությունը: Քաղաքական համոզմունքների բերումով վտարանդիության մեջ հայտնվեցին Ավետիս Ահարոնյանը, Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը:

Չնայած գաղափարական կաշկանդվածությանը՝ գրական տաղանդն օգնում էր դուրս գալու պարտադրող սահմաններից: Դրա շնորհիվ ուղի էր հարթում հայրենասիրության, համամարդկային բովանդակության թեմատիկան: Հայ նորագույն գրականության խոշորագույն դեմքը դարձավ Եղիշե Չարենցը: Չարենցն իր բնատուր տաղանդի ուժով նոր շունչ ու ոգի հաղորդելով հայ գրական կյանքին՝ դարձավ նորարար: Որքա՜ն խոր հայրենասիրություն և գեղարվեստական պատկերներ կան Եղիշե Չարենցի հետևյալ տողերում.

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման,
Ու նահիրյան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում:



Դերենիկ Դեմիրճյան
(1877–1956)



Ստեփան Զորյան
(1889–1967)

Ակսել Բակունց
(1899–1937)

Գուրգեն Մահարի
(1903–1969)

Արձակի բնագավառում շարունակում էին ստեղծագործել Ալեքսանդր Շիրվանզադեն, Նար-Դոսը, Դերենիկ Դեմիրճյանը, Վահան Թոթովենցը, նոր գրողներից՝ Ստեփան Զորյանը, Ակսել Բակունցը:

1930-ական թվականները դարձան հայ գրականության զարգացման նոր փուլի սկիզբ: 1934թ. կայացած Հայաստանի գրողների և ԽՍՀՄ գրողների 1-ին համագումարները ուղենշեցին գրականության զարգացման խնդիրները: Սակայն անհատի պաշտամունքի շրջանում՝ 1930-ական թվականների երկրորդ կեսին իրականացված քաղաքական բռնությունները խաթարեցին գրական կյանքը: Կամայականությունների զոհ դարձան նշանավոր գրողներ Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Զապել Եսայանը, Վահան Թոթովենցը, աքսորվեցին Գուրգեն Մահարին, Վահրամ Ալազանը, Վաղարշակ Նորենցը և ուրիշներ: Այնուամենայնիվ, չնայած վախի ու բռնությունների մթնոլորտին, հայ գրական կյանքը վերելք էր ապրում:

Կերպարվեստը: 1920-ական թվականներին գործում էին կերպարվեստի ճանաչված վարպետներ Մարտիրոս Սարյանը, Մեդրակ Առաքելյանը, Ստեփան Աղաջանյանը, Եղիշե Թադևոսյանը, Հակոբ Կոջոյանը: Նրանց ստեղծագործական ավանդույթների հիման վրա Հայաստանում ստեղծվեց կերպարվեստի նոր դպրոցը: Այդ գործում բացառիկ է համաշխարհային ճանաչման արժանացած Մարտիրոս Սարյանի դերը:



Մարտիրոս Սարյան
(1880–1972)

Կերպարվեստի զարգացման կարևոր գրավականը կադրերի պատրաստումն էր: Այդ նպատակով 1922թ.

Երևանում բացվեց գեղարվեստի դպրոց: 1935թ. կազմակերպվեց Հայաստանի կերպարվեստի թանգարանը, որն այսօր գործող Հայաստանի ազգային պատկերասրահն է:

Սասունցի Դավթի արձանը Երևանում

Երվանդ Քոչար
(1899–1979)

Հայ քանդակագործների ավագ սերնդի ներկայացուցիչներից են Սերգեյ Մերկուրովը, Արա Սարգսյանը, Երվանդ Քոչարը: Մերկուրովի հայտնի գործերից է 1931թ. Երևանում տեղադրված Ստեփան Շահումյանի հուշարձանը: Արա Սարգսյանի գործերից է «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» խմբաքանդակը, որը տեղադրված է Երևանի պետական համալսարանի առջև: Երվանդ Քոչարը նկարիչ-քանդակագործ էր: Նրա ամենանշանավոր ստեղծագործությունը Սասունցի Դավթի արձանն է Երևանի երկաթուղային կայարանի հրապարակում: Մայրաքաղաքին առանձին հմայք է հաղորդում նշանավոր քանդակագործ Արա Հարությունյանի «Մայր Հայաստան» արձանը:



Համո Բեկնազարյան
(1891–1965)

Երաժշտությունը 1920–30-ական թթ.: Այդ տարիներին ստեղծվեց առաջին սիմֆոնիկ նվագախումբը, կազմակերպվեց պետական ֆիլհարմոնիան, բացվեց օպերայի և բալետի պետական թատրոնը: Երաժշտական արվեստի զարգացման գործում մեծ է Ալեքսանդր Սպենդիարյանի, Ռոմանոս Մելիքյանի, Արմեն Տիգրանյանի վաստակը:

Ալեքսանդր Սպենդիարյան
(1871–1928)



Արմեն Տիգրանյան
(1879–1950)

Արամ Խաչատրյան
(1903–1978)

Հայ երաժշտության զարգացման գործում մեծ է աշխարհահռչակ երգահան Արամ Խաչատրյանի վաստակը, որի ստեղծագործությունը սկիզբ է առել 1930-ական թվականներին:

1938թ. կազմակերպվեց և լայն ժողովրդականություն վայելեց Թաթուլ Ալթունյանի ղեկավարած հայկական ժողովրդական երգի ու պարի համույթը, որն այսօր կրում է իր ղեկավարի անունը:

Թատրոնը և կինոն: 1922թ. կազմակերպվեց հանրապետության առաջին պետական դրամատիկական թատրոնը, որին հետագայում շնորհվեց Գ. Սունդուկյանի անունը: Թատրոնի ստեղծման ու զարգացման մեջ մեծ է դերուսույց Լևոն Քալանթարի ծառայությունը: Թատրոնի խաղացանկում մնայուն պիեսներ էին հայ դրամատուրգիայից «Պատվի համար»-ը, «Նամուս»-ը, «Չար ոգի»-ն, «Պեպո»-ն, օտար հեղինակներից՝ «Օթելլո»-ն, «Լիր արքա»-ն և այլ գործեր:

Վահրամ Փափազյանը Օթելլոյի դերում, Արուս Ոսկանյանը՝ Դեզդեմոնայի

1920–30-ական թվականներին դրամատիկական թատրոններ էին գործում Լենինականում (Գյումրի), Կիրովականում (Վանաձոր) և հանրապետության որոշ շրջկենտրոններում:

1920-ական թվականները նշանավորեցին հայկական կինոարվեստի ծնունդը: Այն սկիզբ առավ «Նամուս» համր կինոնկարով: Առաջին հնչյունային կինոնկարը «Պեպո»-ն էր, որը թողարկվեց 1935թ. և ճանաչվեց այն ժամանակի լավագույն հայկական ֆիլմ: Հայ կինոարվեստի ստեղծման ու զարգացման գործում մեծ է կինոռեժիսոր Համո Բեկնազարյանի դերը:

Ճարտարապետությունը: 1920–30-ական թվականները նշանավորվեցին քաղաքաշինության զարգացման արագ ընթացքով:

Հանրապետությունում սկսված լայնածավալ շինարարության խնդիրների լուծումը վիճակվեց ճարտարապետների ավագ սերնդին, որի նահապետն է անվանի ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը: Թամանյանի ստեղծագործության արգասիք են Կառավարական տունը, ներկայիս Հանրապետության հրապարակը, Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնը, Հանրային (ազգային) գրադարանը, բուհական մի շարք շենքեր: Դրանք հիրավի ճարտարապետական գլուխգործոցներ են:

Ալեքսանդր Թամանյան (1878–1936)

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ 1920–1945թթ. մշակույթի բնագավառում ևս ձեռք էին բերվել վիթխարի նվաճումներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որտեղ էր կազմակերպվում գիտությունը: Ինչո՞վ էին պայմանավորված նրա առջև դրված խնդիրները: Ե՞րբ ստեղծվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը: Ի՞նչ գիտեք այդ մասին:
2. Ո՞րն էր խորհրդահայ գրականության առջև դրված կարևոր խնդիրը: Ինչպե՞ս էր այն դրսևորվում գրական ստեղծագործություններում:
3. Ինչի՞ հիման վրա ստեղծվեց կերպարվեստի խորհրդային նոր դպրոցը: Հայ նկարիչների և քանդակագործների ավագ սերնդի ի՞նչ նշանավոր ներկայացուցիչների գիտեք: Ի՞նչ կարող եք ասել նրանց մասին:
4. Ովքե՞ր մեծ դեր խաղացին երաժշտական արվեստի զարգացման գործում: Նրանցից ո՞վ է ձեր սիրած երգահանը, ի՞նչ գիտեք նրա մասին:
5. Ինչո՞վ նշանավորվեց հայ թատրոնի վերելքը 1920–30-ական թթ.: Նշե՛ք այդ շրջանի հանրահայտ դերասաններին: Ի՞նչ փաստերով կարող եք ապացուցել, որ հայ կինոարվեստը ծնունդ է առել 1920-ական թթ.:
6. Ո՞վ էր հայ ճարտարապետության ավագ սերնդի նահապետը: Ի՞նչ շենքեր են կառուցվել նրա նախագծով: Դրանցից ո՞րն է ձեզ ամենից շատ դուր գալիս և ինչո՞ւ:
7. Լրացրե՛ք «Մշակույթը 1920–1930-ական թթ.» աղյուսակը:

Մշակույթի բնագավառները	Գործիչները	Ստեղծագործությունները

ԹԵՍՏ

Համապատասխանեցրե՛ք գիտնականի անունը գիտության բնագավառին.

1. Հրաչյա Աճառյան,	ա) պատմագիտություն,
2. Հովհաննես Կարապետյան,	բ) լեզվաբանություն,
3. Աշոտ Հովհաննիսյան,	գ) երկրաբանություն,
4. Լևոն Ռոտինյան,	դ) քիմիա:

10-րդ թեմայի ամփոփում

1. Կոմկուսը գտնում էր, որ նոր հասարակարգ կարելի է կառուցել գրագետ, բարձր որակավորում ունեցող կադրերով: Ուստի նա ձեռնամուխ եղավ չափահաս բնակչության շրջանում զանգվածային անգրագիտության վերացման գործին: Փաստորեն, 1921–40թթ. անգրագիտության վերացման խնդիրը հիմնականում լուծվեց: 1920–30-ական թթ. ձևավորվեց կրթական նոր համակարգ, ստեղծվեց դպրոցների լայն ցանց, զարգացավ բարձրագույն կրթությունը:
2. Զարգացում ապրեց գիտությունը: Կարևոր իրադարձություն էր ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի կազմակերպումը 1943թ.:
3. Չնայած գաղափարախոսական խոչընդոտներին՝ խորհրդահայ գրականությունը խոշոր նվաճումներ ունեցավ: Դրան մեծ նպաստ բերեցին ավագ սերնդի նշանավոր վարպետներ Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը և ուրիշներ: Նրանց հետևեցին Ե. Չարենցը, Ա. Բակունցը և ուրիշներ:
4. Խորհրդահայ կերպարվեստի դպրոցի ստեղծման գործում մեծ դեր խաղացին նկարիչներ Մ. Սարյանը, Ս. Առաքելյանը, Ստ. Աղաջանյանը, Հ. Կոջոյանը, քանդակագործներ Ս. Մերկուրովը, Ա. Սարգսյանը, Եր. Քոչարը և ուրիշներ:
5. Հայ երաժշտական արվեստը որակական նոր աստիճանի բարձրացրին Ալ. Սպենդիարյանը և Ա. Խաչատրյանը: 1920–30-ական թթ. ստեղծվեց առաջին սիմֆոնիկ նվագախումբը, կազմակերպվեց ֆիլհարմոնիան, բացվեց օպերայի և բալետի պետական թատրոնը:
6. Լուրջ նվաճումների հասավ հայ թատրոնը, ծնունդ առավ հայկական կինոարվեստը: 1922թ. կազմակերպվեց հանրապետության առաջին պետական դրամատիկական թատրոնը: Հ. Բեկնազարյանի «Նամուս» համր գեղարվեստական ֆիլմով սկիզբ առավ հայ կինոն:
7. Նշանավոր ճարտարապետ Ալ. Թամանյանը կազմեց քաղաքամայր Երևանի կառուցապատման գլխավոր հատակագիծը: Նրա նախագծով կառուցվեցին մի շարք գեղեցիկ հասարակական շենքեր:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1918թ. մայիսի 22-30 – Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի մայիսյան հերոսամարտերը:

1918թ. մայիսի 28 – Հայաստանի անկախության հռչակումը:

1918թ. հունիսի 4 – Բաթումի հաշտության պայմանագրի կնքումը:

1919թ. – Ազգերի լիգայի ստեղծումը:

1919թ. մայիսի 16 – Հայաստանի կառավարության որոշումը պետական համալսարան հիմնելու մասին:

1920թ. հունվար - Պետական համալսարանի բացումը:

1920թ. ապրիլի 28 – Ադրբեջանի խորհրդայնացումը:

1920թ. օգոստոսի 10 – Սևրի հաշտության պայմանագրի կնքումը:

1920թ. սեպտեմբերի 23-ից 1920թ. նոյեմբերի 18 – Թուրք-հայկական պատերազմը:

1920թ. նոյեմբերի 29 – Հայաստանի խորհրդայնացման մասին Հայհեղկոմի հայտարարությունը:

1920թ. նոյեմբերի 30 – Խորհրդային Ադրբեջանի Հեղկոմի հրովարտակը Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Հայաստանին հանձնելու մասին:

1920թ. դեկտեմբերի 2 – Հայաստանում իշխանության խաղաղ փոխանցումը բոլշևիկներին:

1920թ. դեկտեմբերի 2-3 – Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրի կնքումը:

1920թ. դեկտեմբերի 25 – Ինքնավար Սյունիքի հռչակումը:

1921թ. փետրվարի 26-ից մարտի 16 – Մոսկվայի պայմանագրի կնքումը:

1921թ. փետրվար-մարտ – Անտանտի երկրների Լոնդոնի կոնֆերանսը և «Հայկական ազգային օջախի» գաղափարի առաջացումը:

1921թ. փետրվար-ապրիլ – Քաղաքացիական կռիվները Հայաստանում:

1921թ. փետրվարի 25 – Վրաստանի խորհրդայնացումը:

1921թ. սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 13 – Կարսի պայմանագրի կնքումը:

1922թ. հունվար-փետրվար – Հայաստանի խորհուրդների 1-ին համագումարը:

1922թ. փետրվարի 3 – ՀՍԽՀ 1-ին սահմանադրության ընդունումը:

1922թ. մարտի 12 – Անդրկովկասի Դաշնության (ֆեդերացիայի) ստեղծումը:

1922թ. դեկտեմբերի 30 – ԽՍՀՄ կազմավորումը:

1922–1923թթ. – Լոզանի կոնֆերանսը և Հայկական հարցի տապալումը:

1927-1940թթ. – Կոլեկտիվացման իրագործումը Հայաստանում:

1928–1932թթ. – 1-ին հնգամյակը Հայաստանում:

1934թ. – Հայաստանի և ԽՍՀՄ գրողների 1-ին համագումարների հրավիրումը:

1936թ. դեկտեմբերի 5 – ԽՍՀՄ նոր սահմանադրության ընդունումը:

1937թ. մարտ – Հայկական ԽՍՀ նոր սահմանադրության ընդունումը:

1938թ. սեպտեմբեր – Մյունխենյան գործարքի կնքումը:

1939թ. օգոստոս–սեպտեմբեր – Խորհրդա-գերմանական տասը տարով չհարձակման պակտի կնքումը:

1939թ. սեպտեմբեր – 2-րդ համաշխարհային պատերազմի սկիզբը:

1941թ. հունիսի 22 – Ֆաշիստական Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա, Հայրենական պատերազմի սկիզբը:

1942թ. – «Հայ ազգային խորհրդի» հիմնումը Բեռլինում:

1943թ. – Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումը:

1945թ. ապրիլի 19 - Ի. Ստալինը Մոսկվայում ընդունում է Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին:

1945թ. մայիս 9 – Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտը:

1945թ. սեպտեմբերի 2 – Ճապոնիայի անձնատվությունը և Երկրորդ աշխարհամարտի ավարտը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1918Թ. ՄԱՅԻՍԻ 28 – 1920Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2)..... 5

ԹԵՄԱ 1. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ 5

1. Հայաստանի Հանրապետության հռչակումը: Բաթումի պայմանագիրը 5

2. Իշխանության մարմինների ձևավորումը 7

ԹԵՄԱ 2. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 16

1-2. Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը և կրթամշակութային կյանքը 16

3. Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: 1920թ. մայիսյան ապստամբությունը 22

ԹԵՄԱ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1918-1920ԹԹ. 27

1. Հարաբերությունները Քառյակ միության և հարևան պետությունների հետ..... 27

2-3. Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում և Սևրի պայմանագիրը 31

ԹԵՄԱ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ 38

1. Հայաստանը ռուս-թուրքական հարաբերությունների ոլորտում 38

2. 1920թ. թուրք-հայկական պատերազմը: Հայաստանի խորհրդայնացումը..... 42

ԲԱԺԻՆ 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920–1945 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 49

ԹԵՄԱ 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1920–1922ԹԹ. 49

1. Խորհրդային վարչակարգի հաստատումը 49

2. Հայաստանի սահմանադրությունը: Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Հանրապետության և ԽՍՀՄ ստեղծումը 53

ԹԵՄԱ 6. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 1920–1922Թ. 56

1-2. Հայաստանի սահմանների հարցը: Պայքար Լոռու, Ջավախքի, Նախիջևանի, Զանգեզուրի և Արցախի համար 56

ԹԵՄԱ 7. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1922–1941ԹԹ 63

1. Տնտեսության վերականգնումը: Երկրի արդյունաբերացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը 63

2. Հասարակական-քաղաքական կյանքը: Խորհրդային Հայաստանը՝ միութենական հանրապետություն 68

ԹԵՄԱ 8. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920–1945ԹԹ. 75

1. Սփյուռքի առաջացումը 75

2. Սփյուռքի հարաբերությունները Հայաստանի հետ և 1920–1930-ական թթ. ներգաղթը 78

ԹԵՄԱ 9. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939-1945ԹԹ.) 81

1-2. Հայ ժողովրդի ուժերի համախմբումը և մասնակցությունը պատերազմին 81

ԹԵՄԱ 10. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ 1920–1945ԹԹ. 90

1. Խորհրդային իշխանության քաղաքականությունը մշակույթի բնագավառում: Կրթական համակարգի ձևավորումը 90

2. Գիտությունը, գրականությունը և արվեստը 92

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 100

Վլադիմիր Բարխուդարյան, Արարատ Հակոբյան,
Համլետ Հարությունյան, Վլադիմիր Ղազախեցյան,
Էդիկ Մինասյան, Էդուարդ Մելքոնյան, Աշոտ Ղուկասյան

Հայոց պատմություն

Նորագույն շրջան

9-րդ դասարանի դասագիրք

Մաս 1

Շապիկի ձևավորումը՝ Մ. Աբրահամյանի

Համակարգչային էջկապը՝ Միքայել Աբրահամյանի

Սրբագրիչ՝ Պարույր Հակոբյան

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ
Ղ. Փարպեցի 9, բն. 7, հեռ. 53-79-82, 53-79-83
E-mail: manmar@manmar.am
www.manmar.am